Էջմիածին



1964

ՌՆԺԳ

ՐԱ ՏԱՐԻ

Մայիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ե

1964

ՀԱՅԿ ՊԵՏԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցի առթիվ	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայոց թեմի հայրապետական պատվիրակ նշանակելու մասին	7
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ հեռագիրը ՍՍՌՄ Միհիսարների սովետի նախագահ Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովին՝ ծննդյան յոբանասնամյակի առթիվ	9
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մեծագործ Կաթողիկոսը	10
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարությանն տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	13
Փրկչի հրաշափառ և Սուրբ Հարությանն տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Եվրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	18
Խոսք Գևորգ Զ Կաթողիկոսից	22
ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ— Էջմիածնի և Կիլիկիո Աթոռները	29
ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ— Անմոռանալի Վեհափառը	32
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ— Մեծագործ և հայրենասեր Հայրապետը	37
ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ— Գևորգ Զ Կաթողիկոսը և Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը	45
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ— Խոսք երախտիքի	48
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	49
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Պոլիս և իր դերը	51
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

«Ի վախճանել առն արդարոյ, ոչ կորնչի յոյս»:
(Առակք ԺԱ 7)

Հայոց հինաւուրց աշխարհէն, եկեր ու անցեր էին օրերը ձմրան: Արարատի յաւերժական նայուածքի տակ, Հայաստանի Մայր Հողը ծածկուեր էր կրկին ծիլ ու կանաչով, ծաղիկ գորգերով: Հայ շինականը, աչքերը լեցուն կեանքի երակով, իր պապերու արտն ու այգին կը բանար, գոհութեան աղօթքը շրթներուն առ բարձրեալն Աստուած, երբ Ս. Էջմիածնի կամարներուն տակ, խաղաղ, անվրդով, Իր աչքերը կը փակէր Հայրապետը Հայոց՝ Գէորգ Զ Նոր-Նախիջևանցին:

Գարնան պայծառ առաւօտ մըն էր՝ 1954 մայիս 9-ը:

Երախտագէտ Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ծանր սուգի դրօշ պարկեցին ու փառքով, աղօթքով, Մայր Հողին յանձնեցին յոգնած մարմինը մեծ Հայրապետին:

Այդ օրէն անցեր են արդէն տասը տարիներ:

Տարիները բաղում յիշատակներ կը տանին իրենց հետ, յանձնելու համար պանոնք գիրկը գորշ մոռացութեան: Բայց կան յիշատակներ, որոնք անցնող տարիները առաւել կը լուսաւորեն, առաւել կ'արժևորեն ու կեանքի կը կոչեն: Ժամանակը ինքն է իրաւ դատաւորը մարդոց կեանքին, անոնց գործերուն: Աստուածային նախախնամութիւնը, պատմութեան դատաստանով, արդարութիւն կը գործէ:

Յիշատակը Գէորգ Զ Կաթողիկոսին այդպէս ահա կը ներկայանայ այսօր, մեր գիտակցութեան առաջ:

Անձնաւորութիւն մը, հոգիով ու մարմնով առողջ, ամրակուռ, Հայոց աշխարհի լեռներուն նման: Նկարագիր մը հպօր ու ազնիւ, խոր զգացումովը մարդկային բարոյականի բարձր արժէքներուն: Հաւատաւոր, աներեր հոգի և քաջ Հովուապետ, աւելի քան վաթսուն տարիներու հաւատարիմ ծառայութեամբ: Ուխտեալ վինուոր և սիւն Եկեղեցւոյ, և արթուն լուսարար Ս. Էջմիածնի: Ճարտար նաւապետ փոթորիկներու պահուն, անվեհեր առաջնորդ Իր ժողովուրդին դէպի նաւահանգիստը խաղաղ ափերու: Պաշտպան հայրենեաց, խիզախ, աննահանջ, հայկական հոգիի մարմնացած վահան: Հայրենասէր՝ Իր ամբողջ էութեամբ, բովանդակ Իր կեանքով, մտածումներու և տեսիլքներու Իր ամբողջ աշխարհով, Իր կենդանի գործով:

Ահա Ան, երիտասարդ վարդապետ, մէկ ձեռքին մէջ բռնած խաչը Քրիստոսի, միւսին՝ գիրքը հայոց պատմութեան, աւելի քան քսան տարիներ կրթական մշակ, հմուտ քարոզիչ և կազմակերպիչ հոգևոր կեանքի, Իր ծննդավայր Նոր-Նախիջևանի մէջ:

Կու գան սակայն մռայլ ու ծանր օրեր: Համաշխարհային առաջին պատերազմն է բռնկած: Արևմտեան Հայաստանի մէջ կը նահատակուի ժողովուրդ մը ամբողջ: Տեղահանութիւն, սով, արիւն և մահ: Սպանդի ճիրաններէն հրաշքով փրկուած, անվերջ կարաւաններ թշուառ հայերու, կը թափուին Արաքսի ափին:

Նորապսակ Գէորգ եպիսկոպոս, հուժկու ձեռքերով և հայ մարդու արի Իր սրտով, կանգնած է ամուր՝ գաղթականներու փրկութեան գործի առաջին գծերուն վրայ, կատարելով Իր պարտքը իբրև անձնդիր ու բարի Հովիւ և հարազատ զաւակը հայ ժողովուրդին:

Պատերազմէն յետոյ դժուար տարիներ, ալեկոծումներ, հերոսական ճիգեր՝ բուժելու համար վէրքերը հայոց վիրաւոր ազգին և վերաշինելու քանդուած կտուրը հայ հայրենիքին: Բայց շուտով ահա խաղաղութիւն և նոր վերածնունդ, երջանիկ կեանքի պայծառ լուսաբաց: Գէորգ եպիսկոպոս, գաւազանը ձեռքին, բաղում տարիներ Իր ուժերը ի սպաս կը դնէ Հայ Եկեղեցւոյ ամրապնդման գործին, Վրաստան, Հայաստան և Ս. Էջմիածին: Աստուծոյ խօսքը կը քարոզէ Ան Իր ժողովուրդին. կը լուսաւորէ, յոյս կը ներշնչէ ու կը մխիթարէ:

Մայր Աթոռ է Ան իբրև Տեղակալ Կաթողիկոսի, երբ կը բռնկի նոր պատերազմ մը համաշխարհային:

Հայ ժողովուրդը ամբողջ, մէկ մարդու նման, ոտքի է կանգնած, ազատատենչ եղբայրական ժողովուրդներու կողքին, մղելու համար հայրենական սրբազան կռիւ, խաւար ու դաժան չար ուժերու դէմ:

Հանգուցեալ Հայրապետը ներկայ է կրակի դիմաց, հայրենեաց պաշտպան հայ ժողովուրդի զաւակներուն հետ: Ձեն մոռցուիր երբեք կոչերն Իր մարտի, քարոզներն Իր հուր և Իր ծաւալած կազմակերպչական գործը հսկայական, վինուորագրելու համար Հայաստանի և Սփիւռքի բոլոր հայերը: Սասունցի Դաւիթի անունը կրող հրասայլերու շարասիները ընծաներն են Հայոց Հայրապետին, հայրենա-

կան փառապանծ յաղթանակին համար, օժանդակութեամբը նոյնքան հայրենասէր Գարեգին Ա Հայրապետին Տանն Կիլիկիոյ, որ Սարդարաբադէն յետոյ, անգամ մը ևս Իր անունը կ'արձանագրէր մեր ազգի պատմութեան գրքի մէջ ոսկի տառերով:

Եւ երբ հորիզոնէ հորիզոն, մեծ յաղթութեան շեփորները կը հնչէին, Գէորգ արքեպիսկոպոս, 1945-ի գարնան օրերուն, կ'օծուէր Կաթողիկոս Ամենայն Հայոց, ողորմութեամբն Աստուծոյ և կամքովը ազգին:

Հայոց հին երկրի վրայ կ'իջնէր նոր առաւօտ և կը բացուէր հայրենաշէն կեանքի լուսեղէն ճամբայ:

Նոր կեանքի կը կոչուէր նաև Հայ Եկեղեցին:

Ծերունապարդ Հայրապետը Հայոց, ժամանակներու, պատերազմներու աւերներէն յետոյ, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, կը ստեղծէր ամէն բան գրեթէ ոչինչէն:

Մեծ հայրենասէրը եղաւ նաև մեծ Հայրապետ:

Վերակազմեց միաբանութիւնը մեր Մայր Աթոռի, բացաւ դուռները Հոգևոր Ճեմարանին, հիմնեց «Էջմիածին» ամսագիրը, բարեկարգեց ու կազմակերպեց ներքին թեմերը, և բնականոն ու սերտ գործակցութեան կապեր հաստատեց մեր նուիրապետական Աթոռներուն և արտասահմանի մեր թեմերուն հետ:

Գէորգ Զ Կաթողիկոս, Իր հոգևոր բարձր հեղինակութեան ներքև, անխռով պահպանեց հոգևոր միութիւնը Հայ Եկեղեցւոյ և միասնութիւնը հայ ժողովուրդին: Զի այդ է պատգամը հայոց պատմութեան և կամքն Աստուծոյ, որուն Միածին Որդին Հայաստան իջաւ և այնտեղ հաստատեց Սրբութիւն Սրբոցը ամենայն հայոց:

Հոգելոյս Հայրապետը եղաւ ու մնաց մինչև Իր կեանքի վերջը՝ նաև մեծ աղօթող մը և պայքարող մը վասն խաղաղութեան համայն աշխարհի: Իր հեղինակաւոր խօսքը, Իր արդար ձայնը տևապէս հնչեցին հպօր Էջմիածնի սուրբ բարձունքներէն:

Գէորգ Զ Կաթողիկոսի կեանքն ու գործը մարմնացումն իսկ են աստուածային խաղաղարար կամքին ու հայոց պատմութեան հարազատ ոգիին:

Ահա վաստակը Հայոց Հայրապետին, որուն մահուան տասներորդ տարելիցը կը կատարենք մենք այսօր:

Ով գիտէ իր կեանքն ու իր գործը ընծայաբերել իր Մայր Ժողովուրդին, իր Մայր Հայրենիքին, ով կը տեսնէ յստակ, կեանքը ալեկոծող հոսանքներուն մէջէն, ազգի ու Մայր Երկրի յաւիտենական շահերու ուղին, ան կը մնայ ճշմարտապէս մեծ և յիշատակութեան արժանի պատմութեան գրքին մէջ:

Կը տօնենք Գէորգ Զ Հայրապետի յիշատակը, իբրև Հայ Եկեղեցւոյ ու հայ ժողովուրդի յաղթանակի օր: Կը տօնենք ուրախ, հպարտ սրտերով, որ Տէրը մեր Եկեղեցիին պարգևեր էր Հովուապետ մը մեծ, նման երանեալ հայրապետներուն, որոնք պայծառ հետք են թողած Հայոց աշխարհի երկնակամարին վրայ:

Տասը տարի յետոյ, հինաւուրց մեր երկրի վրայ, կրկին իջած է գարունը կեանքին: Նոյն Արարատի յաւերժական նայուածքին ներքև, Մայր Հողն Հայաստանի զարթնած է կրկին, ու ծածկուած ծիլ ու կանաչով, վառ ծաղիկներով: Հայ շինականը նոյն երգներով, նոյն երգն իր շրթներուն, իր պապենական արտը կը հերկէ, երբ Ս. Էջմիածնի լոյս կամարներէն աղօթք կը բարձրանայ դէպի Երկինքը բարի՝ վասն խաղաղութեան հոգւոյն հանգուցեալ մեծագործ Հայրապետին մերոյ՝ Տ. Տ. Գէորգայ Զ Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Երանաշնորհ Հայրապետի հոգին, կեանքի միւս ափին, կը հանգչի խաղաղ, կը հանգչի երջանիկ, ու կ'ոգեշնչէ մեզ և պատգամ կու տայ բոլոր հայերուս՝ ապրիլ անբաժան, սիրով միաբան, ամուր պահպանել լոյս հաւատքը մեր քրիստոնէական, ամբողջ, անխռով ու ծաղկեալ պահել Ս. Եկեղեցին, շէն, անշարժ պահել համայն հայութեան հոգևոր կեդրոն Ս. Էջմիածինը մեր, և բոլորուիլ սիրով, հաւատարմու-

թեամբ, վերածնած Մայր Հայաստանի սուրբ հողի վրայ, կերտելու համար լուսափայլ ապագան հայ ժողովուրդին:

Այսու Մեր կոնդակաւ կը հրահանգենք, որ լուսաբնակ Գէորգ Զ Կաթողիկոսի մահուան տասներորդ տարելիցին առթիւ, Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօններ կատարուին կիրակի, մայիս 10-ին:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Յայտնթ. ԺԴ 13):

Ողջո՛յն և փա՛ռք Գէորգ Զ մեծ Հայրապետի լոյս յիշատակին:

Ողջո՛յն և փա՛ռք Հայ Առաքելական Ս. Եկեղեցիին և հայ հաւատացեալ համայն ժողովուրդին:

Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-9-ն մայիսի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՅ ՀՆԴԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ՒՐ Ի ԿԱԼԿԱԹԱ, Ի ԲՈՄԲԷՅ ԵՒ Ի ՄԱԴՐԱՍ,
ՅԱՐԳԱՐԺԱՆ ՍՆԴԱՄՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ,
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ,
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՅԺ ՍԻՐԵՑԵԱԼ ՀՆԴԿԱՀԱՅ
ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՅ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Յոյժ սիրելի է Մեզ յղել ձեզ Մեր ողջոյնը և հայրապետական օրհնութիւնը, ամենաջերմ աղօթքներով առ Բարձրեալն Աստուած, որ ձեզ բոլորիդ պահի և պահպանի երջանիկ ու խաղաղ օրերով, ձեր բարի գործերի լիակատար յաջողութեամբ.

Մենք քաջ ծանօթ ենք հնդկահայ պատուական մեր ժողովրդի փառաւոր անցեալին, ժողովուրդ, որ Նոր-Ջուղայի կրօնական սուրբ աւանդութիւնները և հայրենասէր ոգին իր հետ բերեց ու հաստատեց Հնդկաց հիւրընկալ աշխարհի ափերին:

Փա՜ռք, պատի՛ւ և օրհնութի՛ւն ձեր հայրերի ու նախահայրերի անմոռաց յիշատակին:

Անցեալ տարի Հնդկաստան Մեր հովուապետական ուղևորութեան առթիւ, Մենք խորապէս հրճուեցինք հաստատելով, թէ նաև այսօր վառ են ձեր մէջ թէ՛ մեր նախնեաց հաւատի լոյսը և թէ՛ հայրենատենչ քաղցր շունչը: Դուք հարապատ ու հաւատարիմ որդիներն էք ձեր լուսաբնակ նախնիքների: Դուք հարապատ ու հաւատարիմ վաւակներն էք հայ ժողովրդի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ընդառաջելով ձեր և համայն մեր հաւատացեալ ժողովրդի ցանկութեանց, որ Մեզ ներկայացրիք Մեր այցելութեան առթիւ, այսու հայրապետական կոնդակաւ նշանակում ենք գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամեանին որպէս հայրապետական պատուիրակ Հեռաւոր Արևելքի մեր թեմի, որի առաքելութիւնը կը լինի հոգևոր մխիթարութիւն և առաջնորդութիւն ընծայել Հնդկաստանի, Աւստրա-

լիայի և Հեռաւոր Արևելքի այլ երկրների հայ եկեղեցական կեանքին ու հաւատացեալ ժողովրդին, և, տեղական հայ եկեղեցական վարչութեանց հետ գործակցաբար, օժանդակել համայնքի հոգևոր և եկեղեցական հարցերի բարւոք լուծման, ըստ Հայ Եկեղեցու կանոնների և համաձայն ձեր եկեղեցական կանոնադրութիւնների և ձեր երկրի պետական օրէնքների:

Գերաշնորհ Տ. Հայկակուն արքեպիսկոպոս Աբրահամեանը մեր Եկեղեցու ապնուահոգի և ազգանուէր բարձրաստիճան հոգևորականներից մին է, որ անսահման սիրով յիշում է ձեզ և ձեր սքանչելի երկիրը, իր նախորդ այցելութեան օրերից: Վստահ ենք, որ դուք գրկաբաց և ջերմ յարգանքով կ՝ընդունէք Մեր հայրապետական պատուիրակին և ամէն պայման կը ստեղծէք ու ամէն միջոց կը տրամադրէք, որ Նորին Սրբազնութիւնը առաւել յաջողութեամբ ի կատար ածի իր հոգևոր առաքելութիւնը:

Տ. Հայկակուն սրբազան արքեպիսկոպոսի և ձեր միջև սիրալիր ու շինարար գործունեության բարի լուրերը ստանալով, Մենք ևս հոգեպէս պիտի հրճուենք ու մխիթարուենք, վասնզի ձեր եկեղեցիների պայծառութիւնը, ձեր գործերի յաջողութիւնը Մեր ուրախութիւնն է և Մեր հպարտութիւնը:

Ապրեցէք և գործեցէք, գոտեպնդուած սուրբ հաւատով, սիրով միաբան ու խաղաղութեամբ:

«Եւ Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ. 11), այժմ և յաւիտեանս: Ամէն:

ՎԱՋԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 11-ն ապրիլի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՅՈԹԱՆԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

Հայ Եկեղեցու և անձամբ Մեր անունից սրտագին շնորհավորում ենք Ձեզ Ձեր ծննդյան 70-ամյակի և Ձեզ Սովետական Միության հերոսի բարձր կոչում շնորհելու առթիվ:

Ամբողջ աշխարհի ժողովուրդները և բարի կամքի տեր մարդիկ խորապես գնահատում են Ձեր անխոնջ պայքարը հանուն խաղաղության: Ձեր եռանդուն ջանքերը սովետական մեծ երկրի բարգավաճման և սովետական ժողովուրդների բարօրության համար առաջ են բերում անկեղծ հիացմունք: Ամբողջ սրտով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկար կյանք և նոր հաջողություններ Ձեր բեղմնավոր գործունեության ասպարեզում՝ մեր երկրի և սովետական ժողովուրդների բարօրության համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

22 ապրիլի 1964 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

(1869—1954)

1964 թվականի մայիսի 9-ին լրացավ երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան տասը տարին:

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այս առթիվ գրած Իր մայիս 9 թվակիր սրբատառ կոնդակով հրահանգում էր, որ **«Լուսաբնակ Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան տասներորդ տարելիցին առթիվ, Հայաստանյայց բոլոր եկեղեցիներուն մեջ հոգեհանգստյան պաշտոններ կատարվին կիրակի, մայիս 10-ին»:**

Երանաշնորհ Տ. Գևորգ Զ Կաթողիկոսը մեծ էր և միաձույլ ամբողջություն որպես **հոգևորական, հայրենասեր մարդ, խաղաղության մարտիկ, կրթական մշակ, կազմակերպիչ և բարձր կրթության տեր անձնավորություն:**

Հանգուցյալ Վեհափառը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության նորագույն շրջանի բացառիկ և ինքնատիպ դեմքերից մեկն էր, որի կյանքն ու գործունեությունը կապված են եղել մեր ժողովրդի վերջին հիսնամյակում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունների հետ:

Ավելի քան 60 երկար տարիների վրա տարածվող Նրա կրթական, վարչական, հովվական և հայրենասիրական գործունեությունը առանձնապես ուսանելի է և նշանակալից նրանով, որ լուսահոգի Հայրապետը Ս. Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի գրասեղաններից մինչև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական բարձրագույն գագաթը բարձրացել է շնորհիվ Իր անընկճելի հավատի, Իր անձնական ու բարոյական այն հպվագյուտ շնորհների և ձիրքերի, որոնց խոր արմատը գտնվում է Նրան ծնունդ տվող հայ ժողովրդի հոգեկան երակներում:

Ահա թե ինչո՞ւ Գևորգ Զ Կաթողիկոսը Իր բովանդակ գիտակցական կյանքը, գիտությունն ու շնորհները, առանց մնացորդի, նվիրել է Ի՛ր Եկեղեցուն, Ի՛ր ժողովրդին, Ի՛ր հայրենիքին:

Վեհափառ Հայրապետը Իր 9 մայիս թվակիր սրբատառ կոնդակում շատ գեղեցիկ, իրավ և ամբողջական ձևով է բնութագրել լուսահոգի Գևորգ Զ Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը. **«Անձնավորություն մը, հոգիով ու մարմնով առողջ, ամրակուռ, Հայոց աշխարհի լեռներուն նման: Նկարագիր մը հզոր ու ազնիվ, խոր կգացումովը մարդկային բարոյականի բարձր արժեքներուն: Հավատավոր, աներեր հոգի և քաջ Հովվապետ, ավելի քան վաթսուն տարիներու հավատարիմ ծառայությամբ: Ուխտյալ կինվոր և սյուն Եկեղեցվո, և արթուն լուսարար Ս. Էջմիածնի: Ճարտար նավապետ փոթորիկներու պահուն, անվեհեր առաջնորդ Իր ժողովուրդին դեպի նավահանգիստը խաղաղ ափերու: Պաշտպան հայրենյաց, խիզախ, աննահանջ, հայկական հոգիի մարմնացած վահան: Հայրենասեր՝ Իր ամբողջ էությամբ, բովանդակ Իր կյանքով, մտածումներու և տեսիլքներու Իր ամբողջ աշխարհով, Իր կենդանի գործով»:**

Հանգուցյալ Հայրապետը ծնվել է 1869 թվականի նոյեմբերի 2-ին, Ռոստով Դոնի Նոր-Նախիջևան քաղաքում, փականագործ արհեստավորի համեստ, բայց ազգային-եկեղեցական ավանդություններով հարուստ և բարեպաշտ ընտանիքում:

Մանուկ Գևորգի կրթության գործում վճռական դեր է կատարել Հայ Եկեղեցու ոգով և ազգային դաստիարակությամբ սնված ու մեծացած նրա բարեպաշտ մայրը՝ Կատարինեն, որ իր վավկին մայրական կաթի հետ, տվել է նաև եկեղեցասիրության և ազգասիրության շունչն ու ոգին:

Այնուհետև լուսահոգին սովորում է Գևորգյան ճեմարանում 1879—1889 թվականներին և իր ուսումը կատարելագործում Գերմանիայում, Լայպցիգի համալսարանում:

Ապա երանաշնորհ Հայրապետի առաջ բացվում է կյանքի և գործունեության փառավոր ուղի:

Երջանկահիշատակ Հայրապետի կյանքի բոլոր երեսներին ու գործունեության հանգրվանները եղել են արդյունավետ ու բեղմնավոր: **«Ահա Ան,**— գրում է Վեհափառ Հայրապետը,— **մեկ ձեռքին բռնած խաչը Քրիստոսի, մյուսին՝ գիրքը հայոց պատմության»,** ավելի քան 60 տարիներ ծառայել է Եկեղեցուն և ժողովրդին, որպես «երիտասարդ վարդապետ», «իբրև անձնդիր ու բարի հովիվ», «նորապսակ եպիսկոպոս», «իբրև Տեղակալ Կաթողիկոսի» և իբրև «Կաթողիկոս Ամենայն Հայոց, ողորմությամբ Աստուծո և կամքովը ազգին»:

Արդարև, մեծ է լուսահոգի Կաթողիկոսի ավանդը մանավանդ Մայր Աթոռում տեղակալության օրերից սկսած Հայ Եկեղեցու կազմակերպման, Մայր Աթոռի բարգավաճման բնագավառում: Նրա կյանքն ու բեղմնավոր գործունեությունը ներշնչող օրինակ կարող են հանդիսանալ բոլոր նրանց, որոնք ուխտել են Հայ Եկեղեցու լուսեղեն խորանների առաջ ծառայել բոլորանվեր կերպով մեր ժողովրդին և մայր հայրենիքին:

Գևորգ Զ-ի գահակալությունը Լուսավորչի պատմական Աթոռի վրա նոր և խոստումնալից մի էջ բացեց Հայ Եկեղեցու պատմության նորագույն շրջանի տարեգրության մեջ:

Ծերունավարդ Հայրապետը երիտասարդի խանդավառությամբ և պատասխանատվության բարձր զգացումով ձեռնամուխ եղավ Ամենայն Հայոց Հայրապետության առաջ կանգնած կարևոր և անհետաձգելի խնդիրների լուծմանը: Եվ լուսահոգին Հայրապետական Իր Աթոռի վրա արդարացրեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու Իր բարձր անձնավորության հանդեպ ցուցաբերած խոր հարգանքն ու անայլայլ վստահությունը:

Երանաշնորհ Հայրապետի գահակալության տարիների գեղեցիկ արդյունքներից մեկը եղավ նաև Հայ Եկեղեցու միության և հայ ժողովրդի միաբանության գաղափարների իրագործումը: Նա Ինքը հանդիսացավ անձամբ հայ ազգային-եկեղեցական միասնության ոսկեղեն կապը Մայր Աթոռի, նվիրապետական Աթոռների և թեմերի, Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև:

1945 թվականի հունիսի 22-ին, Մայր Տաճարում գումարված Ազգային-եկեղեցական ժողովում արտասանած Իր ճառը եղավ պատմական. **«Հայ Եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր, բայց իրավական տեսակետով ոչ: Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը, նկատի չառնելով երկար ճամբորդության հետ կապված դժվարությունները, անձամբ եկավ իբրև ուխտավոր ու ճշմարիտ ու դրական միասնականության հիմքը դրավ»:**

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ և Գարեգին Կաթողիկոսների օրոք իրար հետ շաղկապվեցին ավելի սերտ սիրով և եղբայրությամբ: Երկու հայրապետների սրտի, մտքի և հոգու մեծ բարեկամությունը աճեց, պտղաբերեց նրանց հովվապետության տարիներին: **«Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը,**— գրել է լուսահոգի Գարեգին Վեհը,— **կկամենայինք որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը ըստ պաշտոնի և կոչման... Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական, փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտքերի, նպատակների և ձգտումների միության մեջ... Մենք, իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալ, պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ»:**

Գևորգ Զ երանաշնորհ Հայրապետը ոչ միայն մեր ազգային-եկեղեցական միասնության առաքյալն էր, այլ նաև իրավ հայրենասեր:

«Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք,— պատգամում էր մեծ Հայրապետը:— **Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը, Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»:**

Իսկ ի՞նչ է Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, ըստ Լուսահոգի Հայրապետի. **«Հայոց Հայրապետությունը հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և սակավ ուրախություններով: Հայոց Հայրապետությունը հայի ստեղծող միտքն է եղել, որ լուսավորված քրիստոնեական լույսով, ստեղծել է գրականություն և գեղարվեստ՝ մեր փառքն ու պարծանքը: Հայոց Հայրապետությունը հայի ազնիվ և տոկուն կամքի արտահայտիչն է եղել, տալով առաքինության հերոսներ, աստվածային կամքի ճշմարիտ աշակերտներ: Հայոց Հայրապետությունը վեհ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է Հա-**

յոց մեծ հայրապետների ձեռքով: Եթե հիշենք հայոց հայրապետների շարքը, որպիսի՜ պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ կխոնարհի մեր գլուխը»:

Կարելի չէ խմբագրականի այս սեղմ տողերի մեջ ընդհանուր խոսքերով բնութագրել երանաշնորհ մեծագործ Հայրապետի և մեծ հայրենասերի կյանքն ու գործունեությունը:

Արդար է ապգիս Վեհափառ Հայրապետը, երբ Իր մայիս 9 թվակիր սրբատառ կոնդակում գրում է. **«Կտոնենք Գևորգ Զ Հայրապետի հիշատակը, իբրև Հայ Եկեղեցվո ու հայ ժողովուրդի հաղթանակի օր: Կտոնենք ուրախ, հպարտ սրտերով, որ Տերը մեր Եկեղեցիին պարգևեր էր Հովվապետ մը մեծ, նման երանյալ հայրապետներուն, որոնք պայծառ հետք են թողած Հայոց աշխարհի երկնակամարին վրա»:**

Լուսահոգի Կաթողիկոսի անունն ու գործունեությունը սերտորեն կապված են եղել նաև խաղաղության համաշխարհային շարժման կազմակերպման և մասնակցության հետ:

Պատահականություն չէր որ Հայոց լուսաբնակ Հայրապետը խաղաղության համար պայքարողների առաջին շարքերում է եղել. **«Հոգելույս Հայրապետը եղավ ու մնաց մինչև Իր կյանքի վերջը՝ նաև մեծ աղոթող մը և պայքարող մը վասն խաղաղության համայն աշխարհի: Իր հեղինակավոր խոսքը, Իր արդար ձայնը տևապես հնչեցին հպոր՝ Էջմիածնի սուրբ բարձունքներեն: Գևորգ Զ Կաթողիկոսի կյանքն ու գործը մարմնացումն իսկ են աստվածային խաղաղարար կամքին ու հայոց պատմության հարպատ ոգիին»,**— գրում է Վեհափառ Հայրապետը:

«Սիրեցեք Էջմիածինը... և ինձ հիշեցեք...»:

Լուսահոգի Հայրապետի սրբազան կտակն է այս:

Գևորգ Զ Կաթողիկոսը կենդանի է մեր կյանքում, Մայր Աթոռում, Հայ Եկեղեցու ծոցում, Իր զավակների և ժողովրդի հոգիների մեջ, և Նրա անունն ու գործը մնայուն ու անմահ հայոց պատմության էջերում որպես մեծագործ Կաթողիկոսի, մեծ հայրենասիրի և ճշմարիտ Հայ մարդու:

«Երանի՜ որ ունիցի յիշատակ ի Ս. Էջմիածին»:



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ին (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ին (Դամասկոս),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՅԱԿՈՒԲ Գ-ին (Դամասկոս),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ին (Թբիլիսի),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ (Լոնդոն),
Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿՅՈՒՐԵՂԻՆ (Սոֆիա),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Չեխոսլովակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
դոկտ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻՆ (Պրագա),

Աթենքի և համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),

Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոսիա),

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՅՈՒՐԵՂ Բ-ին (Ալեքսանդրիա),

Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն
ՏԻՄՈԹԵՈՍԻՆ (Կերալա),

Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),

ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի Նախագահ
Գերարժանապատիվ Հայր Ժ. ԻՐՎԻՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),

Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),

Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՑՎԻՏԻՆ (Տալլին),

Մխիթարյան Ուխտի Աբբահայր Գերհարգելի Հայր ՍՐԱՊԻՈՆ
Վարդապետ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (Վենետիկ).

Մխիթարյան Ուխտի Աբբահայր Գերապայծառ Հայր ՄԵՍՐՈՊ
Վարդապետ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա),

Ֆրանչիսկյան Միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԳՈԲԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏԻՆ (Ժընև):

Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը ուրախությամբ կլեցնե մեր հուսացյալ սրտերը, վի Աստուծո Որդին **«յարեաւ ի մեռելոց և յարութեամբն իւրով մեզ վկեսես պարգևեաց»:**

Մեր սիրտն ալ լեցուն այս սուրբ ուրախությամբ, Ս. Էջմիածնեն, Մենք կբերենք Մեր սիրո ողջույնները Ձեզ, ինչպես նաև Ձեր Ս. Եկեղեցիին, աղոթելով առ Աստված, որ վՁեզ և Ձեր Ս. Եկեղեցին պահե խաղաղությամբ Իր ապահով հովանիին ներքև:

Հարուցյալ Փրկչի շնորհներով թող առավել ամրապնդվի նաև խաղաղությունը ամբողջ աշխարհի և եղբայրությունը ի մեջ եկեղեցյաց և ժողովրդոց:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Եղբայրական սիրով՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

«Արդարև Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Դու յաղթական և թագաւոր, գթա մեզ»:

Ս. Զատկի տոնի առթիվ, ուրախությամբ և հաճույքով ստացել ենք Ձեր սիրալիր ողջույնի պատգամը, որի համար Ձերդ Սրբության հայտնում ենք Մեր սրտագին երախտագիտությունը:

Շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբության՝ Մեզ և Մեր հավատացյալների համար կատարած Ձեր աղոթքների համար, և փոխադարձաբար Մենք ևս հայցում ենք Բարձրյալին կատկական շնորհների և բարիքների առատություն Ձեզ և Ձեր Եկեղեցու անդամների համար:

«Քրիստոս յարե՛ւ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

ՔԱՂԱՔ ՎԱՏԻԿԱՆ ՊԱՊ ՊՈՂՈՍ Զ

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Ընդունեցեք մեր սրտագին ողջույնները Քրիստոսի հրաշափառ հարության տոնի առթիվ:

Թո՛ղ Տիրոջ հոգևոր ուրախությունն ու սերը առաջնորդեն մեզ հավիտենական կյանքի հույսով, Նրա երկնային արքայության համար:

Թո՛ղ Տերը մեզ օրհնի և պահպանի այդ սուրբ ուրախությունն ու սերը մեր սրտերի մեջ մեր ամբողջ կյանքի օրերում, որպեսզի քարոզությամբ և օրինակելի գործով տարածենք Նրա սուրբ անունը մեր սերունդների մեջ, որոնք հանձնված են մեր հոգևոր հոգատարության Աստուծո կողմից:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱ Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

«Քրիստոս յարեաւ: Արդարև յարեաւ Նա: Ալելուիա»:

Սա հաղթական այն պատգամն էր, որ հնչեց առաջին առաքյալների շրթունքներից: Այսօր էլ Քրիստոսի Եկեղեցին դավանում է և հռչակում այս առաքելական պատգամը: Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը երրորդ օրը հարություն առավ համաձայն Ս. Գրքին:

Ամեն ինչ, որ գրված է Մովսեսի և մարգարեների կողմից Մեսիայի, Նրա չարչարանքների և փառքի մասին, ապացուցված է նույնինքն հարուցյալ Քրիստոսի կողմից Էմմաուսի ճանապարհին, երկու աշակերտների վկայությամբ էլ: Մեկը մյուսին ասում էր. **«Ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ մինչ խօսէրն ընդ մեզ վճանապարհայն»** (Ղուկ. ԻԴ 32):

Մեր օրերին, բոլոր քրիստոնյաների սրտերը բաբախում են հանուն միության և աղոթում՝ որպեսզի Քրիստոս նորից շարունակի հայտնել մեզ, Ս. Հոգու միջոցով, Աստուծո սիրող նպատակների գաղտնիքը և ընկերանա մեզ մեր կյանքի ճանապարհի վրա: Մեր ջերմագին աղոթքն է, որ այն ճանապարհը, որով մենք ընթանում ենք. մեզ առաջնորդի այդ Ս. Հաղորդության խնջույքին, որից բոլորն էլ կարող են բաժին ունենալ, ինչպես Քրիստոս Ինքն օրհնեց հավիտենական կյանքի հացը և բաժանեց Իր ժողովրդյան:

Այս սրբական օրերին, մենք շնորհակալությամբ միանում ենք Ձեզ՝ հռչակելու մեր Փրկչի հարության փառքն ու հաղթանակը, և աղոթում, որ Ս. Հարության նոր կյանքը լիառատ կերպով իջնի Ձերդ Սրբության, Ձեր հոգևորականության և Ձեր համայն հավատացյալ ժողովրդի վրա:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՑՔԼ

Արքեպիսկոպոս Քենտրբերիի.

ԼՈՆԴՈՆ Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիայի

Շնորհակալություն Ս. Զատկի առթիվ Ձեր ողջույնների համար: Մեր Տիրոջ հրաշալի հարությունը մեզ գոտեպնդում է միշտ հավատարիմ մնալու Իրեն, որ մահացավ և հարություն առավ, հաղթելով մեր հոգևոր թշնամիներին՝ մեղքին և մահվան, և շնորհելով մեզ հավիտենական կյանք:

Թո՛ղ Տերը Իր օրհնությունները ցողի Ձերդ Սրբության և Ձեր համայնքի վրա, Իր հաղթական հարության միջոցով:

Ձերդ ի Տեր՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ
Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

ԴԱՄԱՍԿՈՍ

Զատկի այս սուրբ օրերին, երբ մենք տոնում ենք մեր մարդացյալ Տիրոջ մահվան վրա տարած պատմական հաղթանակը, թույլ տվեք որ ես, մեր բոլոր եպիսկոպոսները և Հնդկաստանի այս հեռավոր երկրի հին Եկեղեցու հավատացյալները, շնորհավորենք Ձերդ Սրբությանը և մաղթենք Ձեզ և պատվական Հայ Եկեղեցուն ամենայն խաղաղություն. ուրախություն և բարգավաճում:

Թույլ տվեք, կրկին անգամ, հղել Ձերդ Սրբության և Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին ու հավատացյալներին իմ և իմ Եկեղեցու ողջույնները: Թո՛ղ Աստված Իր անգնահատելի գթությունը ցողի Ձեր և Ձեր Եկեղեցու բոլոր անդամների վրա Զատկի այս սուրբ օրերին:

«Քրիստոս յարեա՛ւ»:

Եղբայրական ողջույններով ի Տերն մեր՝

ՕՋԻՆ ՄԱՐ ՏԻՄՈԹԵՈՍ
Կաթողիկոս Հնդիկ Մալաբար Եկեղեցու

ՔՈՏԱՅԱՄ

Հաճեցեք ընդունիլ Զատկի առթիվ եղբայրական մաղթանքներս միացած աղոթքիս, Ձեր բարօրության, Եկեղեցվո պայծառության, սիրելի հայ ազգի հառաջդիմության համար:

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆ
Կաթողիկոս-Պատրիարք

ԲԵՅՐՈՒԹ

Սրտագինս և սիրով ի Քրիստոս, շնորհավորում ենք Ձերդ Սրբությունը Ս. Հարության հրաշափառ տոնի առթիվ: Աղոթում ենք, որ հարուցյալ Փրկիչը պարգևի Ձեզ քաջառողջություն և հաջողություն՝ ի փառս Հայ Եկեղեցու, իսկ Ձեր Եկեղեցուն և ժողովրդին՝ խաղաղություն և բարօրություն:

ԿՅՈՒՐԵՂ
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

Ջերմագին աղոթքներով, խոնարհաբար դիմում ենք ամենաբարի Աստուծուն, որ Իր ողորմությամբ համայն մարդկությանը տա խաղաղություն և հոգևոր խնդություն:

Հրաշափառ տոնի առթիվ ցանկանում ենք Ձեզ հաջողություններ և հղում ենք Ձեզ Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու հավատարիմ միաբանության և անձամբ իմ եղբայրական վատկական սրտալի համբույրներն ու շնորհավորությունները:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Սրտագին, բարի ցանկություններ ենք հայտնում Ձերդ Սրբության, Ձեր եպիսկոպոսներին, քահանայական դասուն և Հայոց քույր Եկեղեցուն:

Ընդունեցեք մեր ամենաանկեղծ և լավագույն ցանկությունները մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հարության տոնի առթիվ: Թո՛ղ Նա մեր հոգիների ու սրտերի մեջ հաստատի Աստուծո թագավորության և հավիտենականության անսահման հավատը:

Հայտնելով Ձեզ մեր բարեմաղթությունները, հանձնում ենք մեզ Ձեր սուրբ աղոթքներին և մնում Ձեր հարգելի Սրբության մշտապես եղբայր և ծառայակից՝

• ՀԵՐՄԱՆ
Պատրիարք համայն Սերբիայի

ԲԵԼԳՐԱԴ

Սրտագինս շնորհակալ եմ վատկական շնորհավորանքի համար: Թո՛ղ հարուցյալ Քրիստոսը Իր հոգևոր բաղում շնորհներով լուսավորի և զորավիգ լինի Ձերդ Սրբությանը, Ձեր գործակիցներին և ամբողջ Հայ Եկեղեցուն:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՌԻԳԱ — Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս

Շնորհակալ եմ Ձեր բարի ցանկությունների համար:

Մեծ տոնի առթիվ շնորհավորում եմ Ձերդ Սրբության և Ձեզ հանձնված Եկեղեցուն և բաժանում մեր մտքերը Քրիստոսի հարության հաղթանակի առթիվ:

Քրիստոսի հարությունը մեզ համար փայլուն գրավականն է բարիի հաղթանակի ընդդեմ չարի:

Այս հավատով լիահույս ենք, որ հարուցյալ Քրիստոսը, որը խաղաղություն կտակեց Իր աշակերտներին, կխաղաղացնի աշխարհը և աշխարհի բոլոր ծայրերում կշողան մարդասիրությունը, փոխադարձ վստահությունը և եղբայրական հարգանքը ժողովուրդների միջև:

Թո՛ղ Քրիստոսի հարության խնդությունը Ձերդ Սրբության պարգևի ուժ՝ փառավորելու հարուցյալ Տիրոջը երկա՛ր, երկա՛ր տարիներ:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ

ՏԱԼԼԻՆ — Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս

Հարուցյալ Փրկչին աստվածային հաղթանակն ավետող վանգերուն հետ հասավ Ձերդ Վեհափառության շնորհավորական գիրը, հոգեկան սուրբ ուրախությամբ համակելով ամենուս սրտերը:

«Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի», կգոչենք ոգևին, հարության սուրբ լույսին շնորհքներով օծուն, ու մեր խոնարհ աղոթքով փոխադարձ կհայցենք երկար կյանք Ձերդ Վեհափառության և հաջողություն Ձեր բոլոր աստվածասեր վաստակներուն:

Եղբայրական ջերմ մաղթանքներով կողջունենք նաև Ս. Էջմիածնի աստվածապահ ուխտիդ բոլոր միաբանները: Ու Ձեր միջոցով կցանկանք Ս. Ղազարեն սիրո մեր ողջույնը ուղղել Արարատի ստորոտն ապրող և աշխատող համայն հայ ժողովուրդին:

Հարուցյալ Հիսուսի երկնային շնորհքներով հավետ թող պայծառանա Հայոց աշխարհն ու Եկեղեցին:

Ամենախորին հարգանքներով, մնամ Վեհափառ Տյառնդ՝

Հ. ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ընդհանուր աբբա Մխիթարյան Միաբանության, Արքեպիսկոպոս Քերսոնի

Խորին շնորհակալություն Վեհափառ Տերությանդ՝ Քրիստոսի փառավոր Հարության տոնին առիթով մաղթանքներու համար:

Փրկիչն, որ Իր կենդանության ըսավ **«Ես եմ յարութիւն և կեանք»,** Իր այդ խոսքն հաստատեց Իր աստվածային լուսափայլ հարությամբ խորտակելով մահվան շղթաները և տալով մարդկության հավիտենական կյանքի ուրախության երաշխիքը:

Մարդկությունը ծարավի է ուրախության, բայց դժբախտաբար կմոռնա, թե նյութեղենին, նյութապաշտության՝ թաղումին է որ միայն կհաջորդե աստվածապաշտության աղբյուրեն բխող անվերջ ու անխառն ուրախությունը: Կմաղթեմ, որ այս աստվաապարգև ուրախությամբ ցնծա միշտ սիրտը Վեհափառիդ, նույն ուրախությամբ լեցված տեսնելով Իր հոտը:

Ահա այս զգացումներով կգոչեմ.

«Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի»:

Վեհափառ Տյառնդ աղոթակից՝

ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՋՅԱՆ

ՎԻԵՆՆԱ — Արքեպիսկոպոս և ընդհանուր աբբա

«Քրիստոս հարյավ»:

Թո՛ղ Ս. Հարության ուրախությունն ու խաղաղությունը անպակաս լինին Ձերդ Սրբության և Հայ Եկեղեցու բոլոր հավատացյալների վրա:

ՎԻՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏ

ԺԸՆԵՎ

[illegible]



ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա, ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Շնորհալարդ Եղբայր.

Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը վերստին ուրախությամբ կլեցնե մեր հուսացյալ սրտերը, վի Աստուծո Որդին **«յարեաւ ի մեռելոց և յարութեամբն իւրով մեզ վկեանս պարգևեաց»:**

Մեր սիրտն ալ լեցուն այս սուրբ ուրախությամբ, Փրկչի Իջման տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Մենք եղբայրական սիրո ողջույն կհղենք Ձերդ Սրբության, սրտաբուխ մաղթանքներով, որ մնաք միշտ հաստատ Ձեր պատմական Աթոռին վրա և միշտ նույն եռանդով շարունակեք Ձեր նվիրական առաքելությունը Հայ Եկեղեցվո սիրո և միության լուսավոր ճամբեն, հառավել ամրապնդումն հայ ժողովուրդի հոգևոր կյանքի, որ խարիսխն է և գերագույն գրավականը մանավանդ ի սփյուռս աշխարհի ապրող մեր ազգի պահպանման ու գոյատևման:

Ս. Էջմիածնեն Մեր ողջույնը և օրհնությունը նաև Ձեր ուխտանվեր միաբանության, Ձեր եկեղեցիներուն և համայն հավատացյալ հայ ժողովուրդին:

Թող անշարժ ու միշտ ծաղկյալ մնան մեր Ս. Եկեղեցին և մեր հարազատ ժողովուրդը, սիրո և միության վեմին վրա, խաղաղ կյանքով և արդյունավետ աշխատանքով:

Թող առավել ամրապնդվի խաղաղությունը ամբողջ աշխարհի մեջ և ժողովուրդները բոլոր վիրար ողջունեն իբրև եղբայրներ և իբրև որդիները միևնույն Աստուծույն, արարիչը երկնի և երկրի:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

«Շնորք, սէր և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յաւիտեանս»:

Ամեն:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Ամենապատիվ Սրբական Եղբայր.

Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը վերստին ուրախությամբ կլեցնե մեր հուսացյալ սրտերը, կի Աստուծո Որդին **«յարեաւ ի մեռելոց և յարութեամբն իւրով մեզ կեանս պարգևեաց»:**

Մեր սիրտն ալ լեցուն այս սուրբ ուրախությամբ, Փրկչի Իշման տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Մենք եղբայրական սիրո աողջույն և աստվածային օրհնություն կբերենք Ձերդ Ամենապատվության, Ձեր հոգևորական դասուն և Մեր հավատացյալ բոլոր կավակներուն, ջերմագին աղոթքով, որ Տերը կՁեզ բոլորդ անսասան պահե, անփորձ ու անվտանգ, խաղաղ ու անվրդով, և հաջողությամբ պսակե Ձեր բոլոր եկեղեցաշեն ու ազգանվեր գործերը:

Հարուցյալ Փրկչի շնորհներով թող առավել զորանա և պայծառանա հայոց քրիստոնեական լույս հավատքը և Հայ Առաքելական Եկեղեցին, որ խարիսխն է և գերագույն գրավականը մեր ազգի պահպանման և գոյատևման:

Թող անշարժ ու միշտ ծաղկյալ մնան մեր Ս. Եկեղեցին և մեր հարազատ ժողովուրդը, սիրո և միության վեմին վրա, խաղաղ կյանքով և արդյունավետ աշխատանքով:

Թող առավել ամրապնդվի խաղաղությունը ամբողջ աշխարհի մեջ և ժողովուրդները բոլոր վիրար ողջունեն իբրև եղբայրներ և իբրև որդիները միևնույն Աստուծույն, արարիչը երկնի և երկրի:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յաւիտեանս»:

Ամեն:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը ուրախությամբ կլեցնե մեր հուսացյալ սրտերը, կի Աստուծո Որդին **«յարեաւ ի մեռելոց և յարութեամբն իւրով մեզ կեանս պարգևեաց»:**

Մեր սիրտն ալ լեցուն այս սուրբ ուրախությամբ, Փրկչի Իշման տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Մենք կբերենք սիրո ողջույն և օրհնություն Ձեզ, թեմիդ հոգևոր դասուն, Ձեր թեմական խորհուրդի և եկեղեցական վարչությանց անդամներուն, Ձեր եկեղեցիներու դպրաց դասերուն, տիկնանց, երիտասարդաց և մշակութային կազմակերպություններուն, Ձեր վարժարաններու ուսուցչության և աշակերտության և համայն Մեր սիրեցյալ և հավատացյալ կավակներուն, ջերմեռանդ աղոթքով առ բարձրյալն Աստված, որ կՁեզ բոլորդ պահե և պահպանե Իր ապահով հովանիին ներքև, խաղաղ ու անվրդով, սիրով միաբան, Ձեր բոլոր եկեղեցաշեն և ազգանվեր գործոց հաջողությամբ:

Հարուցյալ Փրկչի շնորհներով թող առավել ամրապնդվի նաև խաղաղությունը ամբողջ աշխարհի և եղբայրությունը ի մեջ եկեղեցյաց և ժողովրդոց:

«Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յաւիտեանս»:

Օրհնությամբ՝

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ, նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև ազգային կենտրոնական, թեմական, կրոնական, եկեղեցական խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության նախագահ դոկտ. Ժոզե դե Ավերեդո Պերտիգային (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), Վարդանանց ասպետների կազմակերպության ավագ դպրապետ դոկտ. Յուհաննես Մուկարին (Վոտերտաուն), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց կանանց կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ազգային ծանոթ դեմքերին, որոնցից ստացվեցին պատասխաններ:

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՅԱՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ և սիրելի Եղբայր ի Քրիստոս.

Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի Ս. Հարության հրաշափառ տոնին առթիվ կփութանք ներկայացնել Ձերդ Սրբության Մեր ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի բոլոր սրտե կաղոթենք առ բարձրյալն Աստված, որ անշարժ ու անսասան պահե ու պահպանե Հայաստանյայց Առաքելական մի և անբաժան Ս. Եկեղեցին ու նվիրապետական Ս. Աթոռները և բարօր ու երջանիկ կյանք պարգևե մեր ազնվական հայ ժողովուրդին:

Մաղթելով Ձեզի քաջառողջ կյանք և կատարյալ հաջողություն Ձեր եկեղեցանվեր բոլոր ծրագիրներուն ու ձեռնարկներուն, մնամ եղբայրական սիրո ողջունիվ,

Աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեր Տիրոջ հարության երջանիկ առիթով մեր, միաբանության և ժողովուրդին կողմե կներկայացնենք մեր ամենաանկեղծ շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Ս. Օծության առողջություն, երջանկություն և Մայր Աթոռին բարգավաճում:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ս. Զատիկը, մեր հավատքին մեծագույն տոնը, կուգա վերստին արծարծել մեր մեջ հրճվանքի այն հուրը, որ վառեցավ հոգիներու մեջ պատմության մեծագույն հրաշքով:

Սրտով կմաղթենք Վեհիդ երջանիկ տոնակատարություն, առողջություն Ձեր թանկագին կենաց ու հաջողություն Վեհիդ բոլոր եկեղեցաշեն ձեռնարկներուն և կատարում հոգեոորոգ ծրագիրներուն:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ԽՈՀԵՐ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

Ազգի մեծությունը նրա ստեղծագործող ոգու և այդ ոգու ստեղծած արգասիքների արժանավորության մեջ է կայանում։ Հայ ազգը անցյալում ստեղծագործել է և յուր ստեղծագործության հուշարձանները կազմում են այսօր հայության փառքն ու պատիվը և նորա բարոյական արժեքն օտար կուլտուրական ազգերի առաջ։ Նույնը պահանջվում է նաև ներկայից, որի ստեղծագործողը հայ հանճարը պիտի լինի, իսկ գործի մարմնացնողը՝ հայ մեկենասը։

Բարեգործությունը մարդկային կյանքում մեծ դեր է խաղացել, մանավանդ փոքր ազգերի և հատկապես մեր կյանքում, որ աշխարհի ամեն կողմը ցաքուցրիվ ընկած հայության բեկորներ ունինք՝ նյութական և հոգևոր բազմատեսակ կարիքների ենթակա և աջակցության կարոտ։ Ազգային մեծ բարերարներ, ձեր կատարելիք գիտակցական և նպատակահարմար բարեգործությունը ոչ միայն պիտի նպաստե՝ հայ ժողովրդի տնտեսական կարիքները հոգալով՝ ազգային փառքի ու պատվի բարձրացման ուղին հարթելու, աստվածահաճո և կրոնական ասպարեզի բարեգործությամբ՝ ազգապահպանման և ազգային միության գործն ապահովելու, այլև ձեր նոր ձեռնարկները անհուն մխիթարության աղբյուր պիտի հանդիսանան նաև ձե՛զ համար, կանգնելով երկրի վերա անջնջելի հուշարձաններ՝ ձեր համարյուն եղբայրների սիրտը շահող և երկնքում՝ Տիրոջ գութը շարժող։

* *
*

Հայրական ողջույնս նաև ձեզ՝ հայ տիկիններ և օրիորդներ։ Կյանքի ղեկավարը միտքը չէ միայն, այլ սիրտը, և առավել ևս սիրտը։ Բազմաթիվ դարեր սահել անցել են, մարդու միտքը զարգացել է և մարդու ստեղծագործող մտքի և աշխատունակ ձեռքի շնորհիվ արտաքին աշխարհը կատարելագործվել է, որի հետևանքով բազմատեսակ նյութական բարիքներ են ստեղծվել, բայց մարդն ինքը ապերջանիկ է մնացել։ Ինչո՞ւ. որովհետև Փրկչի ոգին, սիրո և մարդասիրության ոգին չի իշխում մարդկանց սրտում։

Հայ տիկիններ և օրիորդներ, դուք, որ աստվածային գերագույն շնորհին եք արժանացել և սիրո ու մարդասիրության քաղցր ու քնքույշ զգացմունքներով օժտվել, հանդես եկեք ձեր հոգու այդ թանկարժեք գանձով, որպեսզի մտքով հարուստ և մարդկային կյանքը իրապես երջանիկ դառնա։

* *
*

Հայ գիրն ու գրականությունն էր, որ ազատագրեց հայ ժողովրդին և՛ հեթանոսական խավարի վերապրուկներից, և՛ ասորահելլենական օտարացնող ազդեցություններից։ Հայաստանյայց Եկեղեցու և հայկական մշակույթի շնորհիվ էր, որ երկրայնորեն անջատյալ և քաղաքականորեն անիրավացյալ հայ

ժողովուրդը, Սասանյան Պարսկաստանում թե Բյուզանդական կայսրության լծի տակ, ինչպես և բնաշխարհից ի սփյուռս տարագրյալ, պահպանեց իր գոյությունը և մնաց անբաժան, միասնական։

* *
*

Ազգի և հայրենիքի վարած կյանքի և մահվան հերոսական պայքարի ժամին, ո՛վ ոճրագործ հանդգնությունն ունի ճեղքելու ազգային միասնության ճակատը, առավել ևս դավաճանորեն հարվածելու՝ իրավունքի, ազատության և արդարության անձնվեր մարտիկների թիկունքից, ժողովրդի անհիշաչար հոգում անգամ կարեկցության զգացմունք չի վաստակի և դավաճանի սև կնիքը կընդունի իր ճակատին։

* *
*

Արթուն հսկողություն ունեցեք եկեղեցիների վերա, որ Աստուծո տունը վայելուչ և բարեկարգ վիճակի մեջ լինի և այնտեղ հնչեցրեք հավատացյալների ականջին՝ Փրկչի կենսատու և կենարար խոսքը ի մխիթարություն և ի դաստիարակություն։ Սփյուռքի սրբազան առաջնորդներ, քաղցրաբարո և հեզահամբույր բնավորությամբ և կիրթ վարվեցողությամբ կապեցեք մեր տարագիր ժողովրդի սիրտը ձեզ հետ, սիրով վառեցեք ու շաղկապեցեք Ս. Էջմիածնի և մեր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հայրենի հուշարձանների հետ՝ ի մխիթարություն և ի շինություն նոցա։ Հորդորեցեք ձեր հոտը կուսակցական պայքարներից հեռու կենալ, սույնպես նաև թշնամական ելույթներից ու արարքներից՝ մեր Մայր Հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի և նորա հարազատ ու հավատարիմ կառավարության հանդեպ։ Այլ որ կարևորագույնն է՝ ըստ Ավետարանի՝ անձնդիր հովիվ եղեք ձեր հոտի, որ ձեր ձայնին լսեն և ձեզ հետևեն, որպեսզի հափշտակիչ գայլերն անկարող լինեն փախցնել նոցա ձեր փարախից։

* *
*

Կինը, ընդհանրապես, և հայ կինը, մասնավորապես, հայտնի է իր կրոնասիրությամբ։ Քրիստոնեական կրոնի արշալույսին յուղաբեր կանայք էին, որ հավատով զորացած աներկյուղ եկան, իրենց սիրած ու պաշտած Վարդապետին պատանեցին, Նորա մարմինը թանկարժեք ու անուշահոտ յուղերով օծեցին ու դրին գերեզման։ Եվ այս՝ այն ժամանակ, երբ Պետրոս առաքյալը քահանայապետի աղախնի առաջ մեղկացավ, թուլացավ և ուրացավ իր Վարդապետին՝ Հիսուսին, այն ժամանակ, երբ Թովմաս առաքյալը, թերահավատությամբ բռնված, իր Վարդապետի կողերը շոշափել ցանկացավ, որ հավատա։

Հայ կինն էր, որ հինգերորդ դարում, Վարդանանց պատերազմի օրերին կրոնի, ազգի և հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պատերազմում, ամեն տառապանք կրելով, կանգնեց իր ամուսնու կողքին ի խրախույս՝ և անձնվիրաբար օգնեց պատերազմող մարտիկներին՝ մարտիրոսացավ ու անմահացավ։

Հայ կինը՝ հայի տառապալից տևական պատմության ընթացքում, ամեն չարքաշ կյանք տանելով՝ իր ամուսնու անբաժան ընկերն է հանդիսացել, իր ընտանիքի պատիվն է պահել սրբությամբ, իր զավակների դաստիարակն է եղել՝ նոցա հայ լեզուն սովորեցրել, հայ սովորույթներն ուսուցել, ընտանեկան տնտեսության վարժեցրել, որով ցայսօր հայ ընտանիքը անձույլ է մնացել և որի հետևանքով հայ ժողովրդի ազգային անկախ գոյությունն է պահպանվել։

Եվ, վերջապես, կինը, որոնց թվում նաև հայ կինը, իր սրբակրոն կյանքով և մաքուր հավատով՝ սրբացել է. կուսանաց տոները՝ դրա լավագույն ապացույցն է։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ հայ կինը ազգապահպանության կարևոր գործոն է հանդիսացել մեր պատմական կյանքում։

* *
*

Ծանր և պատասխանատու ժամանակներ ենք ապրում, անհրաժեշտ է հասկանալ ժամանակի ոգին և պահանջները, ինչպես նաև շմոռանալ մեր պարտականությունները հանդեպ Եկեղեցու և ազգի։ Զգուշազանց մեծ զգուշավորություն և արթնություն է պահանջվում, որպեսզի մեզ հանձնված նավը ղեկավարենք ուղիղ և ճշմարիտ ճանապարհով, խութահար լինելուց զերծ մնանք և ապահով նավահանգիստ հասնենք։

* *
*

Ազգի, հատկապես գաղութահայության, ինքնուրույն գոյության պահպանության համար անհրաժեշտ է նաև մայրենի լեզուն։ Ընտանիքն է այն օջախը, որ պահպանում է մայրենի լեզուն. հայ կինն է, որ իր նազանքով և օրորոցի անուշիկ երգով հաղորդում է իր սիրատուն զավակին մայրենի լեզվի անուշիկ հնչյունները որպես նախապատրաստություն։ Հայ կինն է, որ հետզհետե ուսուցա-

նում է իր մանկիկներին մայրենի լեզուն, ազգային սովորույթները և եկեղեցական ավանդությունները, որով սկիզբ է առնում ազգային ինքնագիտակցությունը։ Ազգային լեզվով է, որ հայ երիտասարդը և ընդհանրապես հայ մարդը հնարավորություն է ստանում ճանաչելու իր ազգի անցյալը, կարդալու իր պատմությունը, իմանալու իր նախնյաց առաքինությունները, նոցա հանճարեղ ստեղծագործությունները, նոցա սխրագործությունները, նոցա հերոսական ոգին և վերջապես՝ անձնական տառապանքների գնով, նոցա մատուցած ծառայությունը թե՛ իրենց ազգին և թե՛ մանավանդ օտարներին, ինչպես խոստովանում են օտարներն իրենք։ Ահա այս բոլորի շնորհիվ է, որ անհատը սիրել է սկսում իր ազգն ու հայրենիքը։ Վերոհիշյալից պարզ է, որ հայ ընտանիքի համար՝ անհրաժեշտ է մայրենի լեզվով խոսող հայ մայր, և հայ դպրոցի համար՝ հայ ոգի շնչող և հայ լեզվով դասախոսող հայ ուսուցիչ։

* *
*

Գաղութահայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը պահպանելու և ազգային անկախ և ինքնուրույն գոյությունը պահելու տեսակետներով՝ անհրաժեշտ է նաև հայրենիքի գաղափարը կենդանի պահել ժողովրդի հոգու մեջ և սեր վառել ու բորբոքել հանդեպ նորա։ Հայրենիքը այն վայրն է, որ պահում է ազգի նյութական ու հոգեկան ստեղծագործությունները։ Հայրենիքը այն վայրն է, ուր ապրում են գաղութահայության արենակից եղբայրները, որոնք աշխարհիս երեսին միակ հարազատներն են, որ անկեղծությամբ, հավատարմությամբ ու իրենց պատմական անցյալով անխզելիորեն կապված են և անհամբեր ակնկալում են գաղութահայ բոլոր զանգվածների վերադարձին, որ գրկաբաց ընդունեն նոցա։

Հայրենիքը այն վայրն է, ուր ի վերջո պիտի վերադառնան՝ հայրենիքից դուրս, աշխարհի ամեն կողմը ցաքուցրիվ ժամանակավորապես հաստատված ազգի բեկորները, որպեսզի ազգը միանա և ամբողջանա՝ և՝ իբրև ամբողջական ազգ, ստեղծե լեզվի, մտածելակերպի և հոգեբանության միություն, ևս առավել զարգանա տնտեսապես ու կուլտուրապես և շարունակե ազատ ու երջանիկ ապրել։

Հայրենիք ունեցող ազգը, որպեսզի կարողանա ինքնուրույն և անկախ ապրել և իր հոգեկան ուժերը ազատորեն դրսևորել ու զարգացնել, պիտի ունենա նաև ազատ ու անկախ հայրենի պետություն։ Հայությունը այսօր բախտավոր է, որ ունի նաև ազատ ու անկախ հայրենի պետություն, որ ապրում է իր ժողովրդի համար, որ մտահոգված է իր ժողովրդի կուլտուրական և տնտեսական զարգացման հոգսերով, որի արդյունքը հրապարակի վերա է և չի կարոտում ապացույցի, զի այն տեսանելի և շոշափելի է ամենին՝ «Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ» (Մատթ. ԺԳ 43), «և ակն տեսանելոյ՝ տեսցէ»։

Մի իղձ եմ ունեցել պատանեկությանս օրերից, որ ժամանակի ընթացքում զարգացել ու զորացել է և հետզհետե իրականանալու ճամբի վերա է եղել։ Իսկ այսօրվա իրականությունը մեծագույն հույսն է ներշնչում Մեզ՝ թե Մեր ըղձի և հույսի իրացման ժամանակը մոտեցել է։ Մեր իղձը եղել է՝ հայրենի երկրում, հայրենի հարազատ պետության հովանու ներքո, տեսնել ազգի բոլոր բեկորները ներգաղթած, կենտրոնացած, միացած ու ամբողջացած և լծված հայրենիքի կուլտուրական ու տնտեսական կյանքին, տեսնել ազգի ամբողջական կյանքը հայրենի երկրում ազատ ու անկախ և խաղաղ ու երջանիկ... և փառք տալ ու աղերսել Բարձրյալին՝ «Արդ արձակեա զծառայս քո Տէ՛ր, ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն ազգի իմոյ, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»։

Հայ Եկեղեցին դարերի ընթացքում եղած է հայության համար ոչ միայն հավատո վարարան, այլև ազգապահպանման էական ազդակ։ Հայ Եկեղեցին է, որ հավատացյալների աչքն ու սիրտը դեպի ինք դարձնելով, ի մի է խմբում և շաղկապում իր տարագիր զավակներին, ջերմացնելով նոցա սիրտը նախնյաց ջերմեռանդությամբ և մեծագործությամբ ու առ ազգն ու հայրենիքը ունեցած անձնվիրությամբ՝ պահելով նորան հնադարյան հաստատության՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո։

Նյութական եկեղեցին բարոյական շենք դարձնողը կենդանի հավատն է, իսկ հավատը կենդանի և վառ պահողը՝ անձնվեր հովիվն է։ Անձնվեր հովիվն է, որ հավատացյալների միտքը լուսավորում է Ս. Ավետարանի լուսով և սիրտը ջերմացնում սիրո զգացմունքով դեպի ընկերը, և այսպես ղեկավարում է անձնվեր հովիվը հավատացյալների միտքն ու սիրտը դեպի բարին, գեղեցիկն ու ճշմարիտը՝ դաստիարակելով նոցա ճշմարիտ հավատացյալ և դարձնելով Հիսուս-Քրիստոսի ճշմարիտ աշակերտ։

Հայ դպրոցն է, որ հայ մատաղ սերունդը հայեցի է դաստիարակում և կրթում՝ մարզելով նորա միտքը հայ աշխարհի քաջամարտիկ նահատակների պատմությամբ և սրբազան ավանդներով։ Հայ դպրոցն է, որ վառում է հայ մատաղ սերնդի սիրտը հայրենիքի սի-

բով և մկրտում նորան ազգային ոգով։ Հայ Եկեղեցին՝ իր անձնվեր հովիվով, և հայ դպրոցը՝ իր անձնվեր ուսուցչով ազգային ինքնագիտակցության և ազգային ինքնուրույն գոյության սյուներն են։ Սոցա միացյալ ջանքերով է, որ հայությունը ամենուրեք, մանավանդ գաղութահայությունը օտար երկրներում և կուլտուրապես բարձր ազգերի մեջ կարող է անխաթար պահպանել իր ազգային ոգին և՝ իբրև ազգ, անձույլ մնալ։

* *
*

Հայ Եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմակալության ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը և՝ խաչն ու Ավետարանը ձեռին՝ քաջալերելով հայ զորքը, դեպի հաղթություն է առաջնորդել նրան։

* *
*

Հայոց Հայրապետությունը հայի զգայուն սիրտն է եղել, որ դարեր շարունակ ապրել է նրա անհուն ցավերով և տակավ ուրախություններով։

Հայոց Հայրապետությունը հայի ստեղծող միտքն է եղել, որ լուսավորված քրիստոնեական լուսով, ստեղծել է գրականություն և գեղարվեստ՝ մեր փառքն ու պարծանքը։

Հայոց Հայրապետությունը հայի ազնիվ և տոկուն կամքի արտահայտիչն է եղել, տալով առաքինության հերոսներ, աստվածային կամքի ճշմարիտ աշակերտներ։

Հայոց Հայրապետությունը վեհ գաղափարների մի փունջ է, որ հյուսվել է հայոց մեծ հայրապետների ձեռքով։ Եթե հիշենք հայոց հայրապետների շարքը, ո՞րպիսի պատկառելի դեմքեր կտեսնենք, որոնց առաջ կխոնարհի մեր գլուխը։

* *
*

Հայ Եկեղեցու անցյալ պատմությունը հայ ազգի տառապանքների և վշտերի մի անվերջ շղթա է, իսկ հայ երկիրը օտարի, վայրագ ու անխիղճ ազգերի մրցության ասպարեզ։ Այդ ավերածությունների մեջ Հայոց Հայրապետությունն է, որ մոխրի տակ թաքնված կայծի նման անշեջ մնացել է և եղել հայ ժողովրդի հուսո և մխիթարության միակ ապավենը։

Ահա թե ո՞ւր է գաղտնիքը այն դյութիչ զորության և հրապույրի, որ ունեցել են Ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետությունը դարեր շարունակ հայի աչքում։

* *
*

Մեր ազգի գոյության, նրա մեծության, նրա փառքի և նրա բարեկեցության համար շատ սերունդներ են մաքառել և տանջվել։ Մենք ժառանգներ ենք այն բոլորի, որ մեր պապերի ջանասիրությամբ, անձնվիրությունը, նրանց հերոսական ոգին է ձեռք բերել։ Ես հավատում եմ, որ ինչ որ մեր հայրերը մեզ ավանդ են թողել, այդ նույն հիմքի վրա մենք կշարունակենք շենքի կառուցումը։ Այս բարոյական պարտականությունը պիտի լինի մեր բոլորիս համար իբրև սրբություն։

* *
*

Չջլատել Հայրենիքի և Ս. Էջմիածնի բարոյական ույժն ու հեղինակությունը, սառնություն չքարոզել նրանց դեմ և չմոլորեցնել ժողովրդին. այս է ամեն ազնիվ հայրենասերի պարտքը։

* *
*

Հոգիս հրճվում է տեսնելով հայ եկեղեցական Աթոռների համերաշխ դիրքը և սիրո շաղկապը Մայր Աթոռի հետ, որ Մեր օրով անշուշտ առավել ևս պիտի զորանա, որով ազգի կողմից ուսերիս բարձած քաղցր, բայց ծանր լուծը պիտի թեթևանա և դյուրանա կոչմանս հետ կապված պարտքիս կատարումը։

Ցավ է ինձ, որ Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը զրկված է իր պատմական տեղերից, որ այնքան հարուստ է հայ ժողովրդի կուլտուրական և պատմական հուշարձաններով, որոնց հետ անքակտելիորեն կապված է Կիլիկիո հայ ժողովուրդը։ Սակայն մխիթարական է, որ այդ տարագիր և աստանդական Աթոռը այսօր դառնում է կայուն և հաստատուն։ Առավել ևս ուրախ եմ, որ այդ Աթոռը բաղմել է Մեր հոգեկից հարազատ Եղբայրը՝ Տանն Կիլիկիո շնորհազարդ Գարեգին Ա Կաթողիկոսը, Մեզ հետ միասին սնված ու դաստիարակված Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում։ Երջանկահիշատակ Գևորգ Դ-ի և Հայոց Հայրիկի ազգասիրական, հայրենասիրական և կրոնական զգացմունքներով ներշնչված, նոցա զգայուն և քնքույշ հոգու արտահայտությունները տեսած ու վայելած, Մեզ հետ անշուշտ պիտի պայքարե եկեղեցական և ազգային միասնականության և համերաշխ գործունեության գաղափարները կյանքի մեջ իրացնելու և նոցա իրավական բնույթ տալու համար, որոնց սկիզբը դրվեցավ Ազգային-եկեղեցական ժողովում։

* *
*

Ս. Երուսաղեմի Պատրիարքական Աթոռը իր սրբազան վայրերով, ուր ծնվել է աշխարհի Փրկիչը, որ եղել է Նորա մկրտության սրբազան ավազանը, ուր հնչել է Փրկչի Ավետարանը, ուր լսվել է Նորա կենդանի ու կենարար քարոզը՝ հայ ազգի պարծանքն է, Հայ Եկեղեցու և Նորա հոտի Սրբություն Սրբոցը: Դեպի այդ նվիրական վայրերը դարձած է նաև համայն քրիստոնյա աշխարհի աչքը:

Հայ Եկեղեցու և քրիստոնյա աշխարհի այդ նվիրական սրբություններ պահպանության ու պայծառության համար է, որ դուք՝ Ս. Հակոբյանց միաբանական ուխտիդ հետ՝ օր ու գիշեր տքնում եք: Աստվածային խնամքն ու հովանին եմ հայցում ձեր և ուխտիդ վերա, որպեսզի սրբությամբ զորանաք, քրիստոնեական ջերմեռանդությամբ աճիք և կենդանի օրինակ հանդիսանաք բոլոր այցելու ուխտավորներին, որպեսզի նոքա պատկառանքով հիշեն տուրբ տեղերն ու միաբանությունդ:

* *
*

Ավարայրը հայ ժողովրդի բազմադարյան անցյալի վեհագույն ու պանծալի բարձունքն է հանդիսանում՝ հերոսական արտահայտությունը հայ ազգի բարոյական բարձր նկարագրի՝ հայրենասիրության ու ազգասիրության, եկեղեցական ուխտապահության, անձնուրաց հերոսության, հոգևոր մշակույթի, նվիրվածության և մարտական կորովի:

Բագրևանդի դիմադրությունը, Ավարայրի ճակատամարտը, Ղևոնդյանց նահատակությունը և Վահանյանց մաքառումը պսակազարդվեցին հայ ժողովրդի բարոյական-քաղաքական հաղթանակով:

Ավարայրի հերոսամարտը հոգեզմայլ-անսասանելի բարձունքն էր ազատագրական մաքառման—ահա թե ինչո՞ւ նա եղել է, կա և կմնա առհավետ ազգապանծ էջը հայոց պատմության, հոգեզմայլ մի էջ, որ դարեր անընդհատ տգեշնչել և մխիթարել է հայազն սերունդներին և ազգային-քաղաքական առաքինության ուղիներն է պատգամել հայրենիքին, ազգին և Եկեղեցուն:

* *
*

Հայ ժողովուրդը, որ իր պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դառնությունը, որ՝ առաջին համաշխարհային պատերազմում մեկ ու կես միլիոն զոհ է տվել և երկրորդ Հայրենական պատերազմում իր հարազատների և բազմաթիվ սիրասուն զավակների կորուստը ողբացել՝ խաղաղություն է պահանջում:

Իմ սիրելի՛ վտարանդի զավակներս, ի սեր հայ ազգի և հայրենիքի, ի սեր ազատության և անկախության՝ խաղաղություն պահանջեցեք և ձեր ստորագրություններով վավերացրեք ձեր արդար և իրավացի պահանջը:

Հայ Եկեղեցին, որ միշտ հավատարիմ է եղել Փրկչի Ավետարանի վարդապետության՝ միշտ աղոթել և աղոթում է «վասն խաղաղութեան աշխարհի»:

Հայ Եկեղեցին, որ՝ իր գոյության ամբողջ ընթացքում՝ երազել է խաղաղություն և խաղաղության օրերին ստեղծել է իր ազգային կուլտուրան, որի շնորհիվ պահպանել է իր ազգի գոյությունը և փառք ու պատիվ վաստակել, նա այսօր էլ խաղաղության ջերմ կողմնակից է և հակառակ պատերազմին:

* *
*

Սիրո և գուրգուրանքի, ակնածանքի և հիացմունքի Սրբություն Սրբոցն է հանդիսանալու մեր ազգային-հայրենական պետությունը՝ Սովետական փառապանծ Հայաստանը: Սովետական մեծ Միության պաշտպանության ապավինած, ռուս ազնիվ ու քաջարի ազգի ամենօրյա օգնությունը վայելելով, սովետական բոլոր ժողովուրդների անշահախնդիր աջակցությանն արժանացած, սովետական հիասքանչ մեծ ընտանիքի եղբայրակցության կենսատու և փրկարար շունչը շնչելով, բնաշխարհի հայությունը իր ազգային պետության հիմքերն է կերտում ու ամրապնդում և հրաշագործում ու պայծառազարդում հայրենական սուրբ օջախը, որի լույսի և ջերմության ուժով այսօրվա սերունդը անօրինակ թափով ու հանճարով դարբնում է ո՛չ միայն իր, այլև գալոց սերունդների երջանկությունը:

* *
*

Ինչպես արևի կենսատու ճառագայթների ազդեցության շնորհիվ զվարթանում ու կենդանանում է թառամած ծաղիկը, այնպես էլ մեր Մայր Հայաստանը ռուս մեծ ժողովրդի աջակցության շնորհիվ աղքատության ճիրաններից և ավերակների ծոցից ելնելով, վերակենդանացավ և դարձավ զորավոր ու հարուստ երկիր: Հայ քրտնաջան ժողովուրդը այդ տարիների ընթացքում ստեղծեց նյութական ու կուլտուրական շատ արժեքներ...

Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից

դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով։

* *
*

Երկրորդ հարցը ձուլման վտանգն է, որ ծառացած է յուրաքանչյուր հայ վտարանդի համայնքի առաջ։ Այս վտանգի առաջն առնելու էական միջոցը հայրենադարձն է, սակայն, նկատի առնելով, որ ներկայումս, ժամանակավորապես, այդ հարցը կանգ է առել, կարևոր է ազգային ինքնագիտակցությունը զարգացնել և հայ մշակույթի շնորհիվ պահպանել ընտանիքներում հայ լեզուն, ազգային ու կրոնական ավանդություններն ու սովորույթները, կազմակերպել հրապարակային մատչելի դասախոսություններ ազգային և եկեղեցական պատմական թեմաներով՝ զորացնելով և, ի հարկին, զարթեցնելով ազգասիրական և հայրենասիրական զգացմունքներ ժողովրդի մեջ։ Օտար ամուսնություններից հեռու պահել հայ երիտասարդներին, որպեսզի հայ ընտանիքն անարատ հայ մնա։

* *
*

Իմ սիրելի հայ ժողովուրդ, յուրաքանչյուր անհատ ձգտում է առողջ և երկար ապրելու. ազգերն ևս ձգտում են նույն նպատակին, որին հասնելու համար անհրաժեշտ է, որ ազգի հատվածները կենտրոնացած լինեն հայրենի երկրում, որպեսզի ազգը ֆիզիկապես զորավոր, տնտեսապես ապահով, կուլտուրապես զարգացած լինի, և մտքի ու զգացմունքի միություն ու նմանություն ունենա։

* *
*

Այսօր ավելի քան երբևիցե եկել է ժամանակը, որ Եկեղեցին հանդես գա որպես միասնական անկախ հաստատություն, կենսագործելու քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետությունը։

Այսօր Քրիստոնեական Եկեղեցին, ինչպես և մյուս կրոնները և կրոնական միավորումները իրավունք չունեն այլևս լռելու, երբ մարդկության համարյա կեսը, իրենց ստորագրություններով պատերազմի հակառակ են և խաղաղություն են պահանջում, խաղաղություն՝ որ քրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարներից մեկն է։ Քրիստոնեական Եկեղեցու և մյուս կրոնների այսօրվա լռությունը համազոր կլինի ինքնասպանության. նրանք կկորցնեն իրենց հմայքը ժողովրդի աչքին, նրանք կդառնան կյանքի համար անկարևոր հաստատություններ։

* *
*

Մարդու որոնող մտքի մշակման և զարգացման արդյունք է գիտությունը, որ անհրաժեշտ է տիեզերքի մեջ գործող ուժերն ու նորա օրենքները ուսումնասիրելու և ճշմարտությունները երևան հանելու համար։ Սակայն նույնքան անհրաժեշտ է նաև հատուկ ուշադրություն դարձնել մարդկային հոգու դաստիարակության վերա՝ ձգտելով նորա հոգու մեջ իշխող դարձնել սիրո, մարդասիրության և եղբայրության զգացմունքները, որպեսզի գիտության ստեղծագործությունները մարդկությունը օգտագործե մարդկային կյանքը բարելավելու և երջանկությունը կայուն դարձնելու համար։

Այսօր գիտությունը այն աստիճանի է հասել, որ կարող է աշխարհը կործանել, բայց կարող է նաև շինել ու վայելել, իսկ աշխարհը շինելու և վայելելու համար՝ նա կարոտում է զարգացած բարոյական նորմաների։

Բարոյական բարձր նորմաների զարգացման ապարատը մարդու խիղճն է. նա որոշում է բարին և չարը, լավն ու վատը, արդարն ու անարդարը, ճշմարիտն ու սուտը։ Եվ որպեսզի խղճի թելադրանքները անշեղ գործադրվեն՝ կարևոր է զորացնել նաև կամքը։ Երբ մարդու խիղճն ու կամքը դաստիարակվեն՝ մարդու հոգու մեջ կտիրապետեն մարդասիրության և եղբայրության զգացմունքները, և ահա այն ժամանակ կյանքը հարատև խաղաղ կընթանա և մարդը երջանիկ կապրի աշխարհում։

Մեր բոլոր վերոհիշյալ ասածներից հետևվում է, որ մենք պիտի ձգտենք, որպեսզի աշխարհի բոլոր եկեղեցիներն ու բոլոր կրոնները միանան ու պայքար մղեն հօգուտ խաղաղության և նոր պատերազմի սպառնալիքի դեմ։

Ինչ կվերաբերի բոլոր եկեղեցիների և կրոնների պետերի վարչական համագործակցության ձևերին՝ Մեզ թվում է թե՝ յուրաքանչյուր կրոն և եկեղեցի ազատ պիտի լինի անկախորեն տնօրինելու իր ներքին եկեղեցական և կրոնական խնդիրները. իսկ բարոյական բարձր գաղափարների դաստիարակության նկատմամբ, որոնց մասին վերևում խոսեցինք, հնարավոր կլինի համագործակցության այնպիսի ձևեր ու մեթոդներ մշակել, որ ընդունելի լինի բոլոր կրոնների և եկեղեցիների պետերին։

* * *

Հայ ժողովրդի համար ևս Սրբալույս Մեռոնը, որպես նվիրական և խորհրդավոր սրբություն, սերտորեն կապված է քրիստոնեական պաշտամունքի հետ, ուստի և ամեն մի իր և անձն ա՛յն ժամանակ է միայն սրբազան ույժ ստանում նորա աչքին, երբ Սրբալույս Մեռոնի դրոշմը կա վերան։ Նա խաչ է հանում երեսը՝ Եկեղեցու, Ս. Սեղանի, Ս. Ավազանի և սրբոց պատկերների առաջ, որովհետև Սրբալույս Մեռոնով սրբագործված են, համբուրում է եկեղեցու պաշտոնյայի աջը, որովհետև օծյալ է։

Հայ Եկեղեցին մի ազգային գեղեցիկ ավանդություն ունի, այն՝ որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը սկիզբ է առել Ս. Լուսավորչից և ամեն անգամ՝ նոր Մեռոն օրհնելիս՝ հին Մեռոն են խառնում հետը, որով Ս. Լուսավորչի օրհնած Մեռոնի խմորը անցնում է նորին, և այսպես Սրբալույս Մեռոնը կապում է հայի ներկան հեռավոր անցյալի հետ։

Սրբալույս Մեռոնը հանդիսանում է նաև ամենասերտ և անխզելի զոդը, որով՝ ի սփյուռս աշխարհի տարածված հայությունը կապվում է իր քրիստոնեության ծագման վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ։ Այս կապն է պատճառը, որ երբ Սրբալույս Մեռոնի կաթսան դրվում է Երկնավոր Ճարտարապետի ցուցմամբ հիմնված Միածնաէջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վերա, և Ս. Լուսավորչի հաջորդ՝ Ամենայն Հայոց Ընդհանրական Հովվապետի օրհնության կոնդակը հրավիրում է Իր հավատացյալ հոտին դեպի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես և տոնակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը՝ արտասահմանից և հայրենի կատարմանը՝ արտասահմանից և հայրենի երկրի հեռավոր և մերձավոր վայրերից գալիս ու համախմբվում է հայ ժողովուրդը Մայր Աթոռի շուրջը, ուր տեղի է ունենում այնպիսի մեծաշուք և հոգեպարար հանդես, որի նմանը չկա հայ մարդու համար ո՛չ մի տեղ և ո՛չ մի առթիվ։



ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌՆԵՐԸ

Ա

«Հասկ»-ի նախընթաց համարի մեջ տպվեցավ Նորին Սրբություն Տ. Տ. Գևորգ Ամենայն Հայոց շնորհազարդ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը։ Վեհապետների գահակալական ճառերը, առաջին հրովարտակները, կոնդակներն ու գրությունները սովորաբար հանրային բնույթ են կրում, մի տեսակ հայտարարներ իրենց լավագույն իղձերի և ծրագիրների, բնորոշող նրանց ուղղության, գործելակերպի։ Մի ամբողջ տարի անցավ Նորին Սրբության ընտրության և օծման օրերից, մինչև անդրանիկ կոնդակի ստացումը. այդ հապաղումը, որքան տեխնիկական պատճառներ ունեցած լինի, կամենում ենք և մի բնորոշող գիծ համարել Նորին Սրբության գործելակերպի։ Մի քիչ ուշ, բայց մտածված, հիմնավոր. ոչ արագ, բայց կատարյալ։ Ուշացավ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, բայց նախապատրաստվեցավ և կատարվեցավ ավելի լավ, քան մեր ակնկալություններն էին։

Այդպես էլ ուշացավ կոնդակը, բայց եկավ մեզ գեղարվեստական հանդերձանքով, և հմտալից, բազմաբովանդակ ձևակերպությամբ. ճակատը զարդարված հայ մանրանկարչական արվեստի ոճով, խորանով և լուսանցքի զարդերով, ինչպես մեր նախկին հայրապետների սովորությունն էր. տպագրությունն էլ կապույտ, երկնագույն մելանով, մաքուր և ճաշակով, իսկ բովանդակությունը չափված և ձևված, գիտակցական և կարգավորյալ ծրագրով։

Բ

Մեզ անհուն ուրախություն է պատճառում կոնդակի ընդհանուր մտայնությունը, որ սիրո և միության գաղափարն է, և որ արտափայլում է ամեն պարբերության մեջ, բայց հատկապես, սրտագին հարաբերությունը բոլոր Աթոռների հետ և ջանք այդ հարաբերությունը դարձնել ավելի սերտ, իրար լրացնող և դեպի նույն նպատակն ուղղված, որ Հայաստանյայց Եկեղեցու միասնականությունն է, համերաշխությունը և բարերար ազդեցությունը հոտի ամբողջության վրա։

Սուրբ Հայրապետը անցած ժողովը համարում է իրավամբ բացառիկ երևույթ մեր պատմության մեջ, յուր լրիվ կազմով և ներկայացուցչությամբ բոլոր Աթոռների և եպիսկոպոսությունների, հոգևոր և աշխարհիկ

պատգամավորներով, շեշտելով, մանավանդ, մեծ Աթոռների գահակալների անձամբ մասնակցությունը.

«Յայտնեմք զուրախութիւն Մեր և զգոհունակութիւն հոգևոր Եղբօր Մերում Տ. Գարեգնի շնորհաշնորհ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամաւորօք իւրովք նպաստաւոր եղև յոյժ միասնականութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ և բարձր տրամադրութեան ժողովականաց և առհասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց։ Զնոյն յայտնեմք և Ամենապատիւ Պատրիարքին Երուսաղեմի Տ. Կիւրղի և Տեղապահի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տ. Գէորգայ արքեպիսկոպոսի Արսլանեան»։

Այս խոսքերն ընդունելով որպես առհավատչյա եղբայրական սրտագին հարաբերության, պատասխանում ենք, թե պարտականություն ենք համարում Մեր բոլոր ուժերը, գրիչը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր ընդհանուր Հայաստանյայց Եկեղեցու փառքի, պայծառության և բարոյական ազդեցության զորացման համար։

Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կկամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը ըստ պաշտոնի և կոչման, ինչպես այդ գծվեցավ Սահմանադրության մեջ։ Միասնականությունը չպետք է շփոթել միապետության հետ և ոչ ընդհակառակը։ Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և հարգանքով կատարված պարտքերի, նպատակների և ձգտումների միության մեջ, իրար զորավիգ և նեցուկ լինելու և Աթոռների սերտ գործակցության մեջ, յուրաքանչյուրը յուր պարտքի և իրավունքի շրջանում։ Մենք, իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալ, պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ, առաջնորդվելով միշտ առաքյալի խոսքով, թե «գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»։ Կյանք բերող հոգին է Եկեղեցու համար ամենից կարևորը, որ պիտի զորացնենք և հավերժացնենք փոխադարձ համերաշխությամբ և գործակցությամբ։

Երուսաղեմի Պատրիարքությունը ժողովրդական բազմության տեսակետով համեմատաբար սահմանափակ էր մինչև նախընթաց պատերազմ, մինչև մեր գլխին եկած մեծ աղետը, բայց իբրև հինավուրց և պատմական Աթոռ Ս. Երկրի մեջ, ներկայացնում է նա Հայաստանյայց Եկեղեցին՝ միջազգային տարողությամբ։ Պատրիարքությունը յուր միաբանությամբ ոչ միայն մեր սեփականությունների և իրավունքների պաշտպանն է եղել, այլև յուր բաժինն է բերել և պիտի բերե մեր հայագիտական և եկեղեցական դրականության մեջ։ Մեր երկու Աթոռների մերձավորությունը տարածությամբ, հնարավորություն է տալիս նաև բարոյական մերձավորության, ի շահ և ի բարգավաճումն Հայաստանյայց ընդհանուր Եկեղեցվո և Մայր Աթոռի հեղինակության։ Պետք է ի նկատի ունենալ, թե ձեռքերը որքան էլ երկար՝ լինեն, ամեն տեղ հասնել չեն կարող։

Զմոռանանք սրտի ճմլումով հիշել և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունը՝ յուր հոտի և գործունեության սեղմված վիճակով։

Գ

Վերջին տասնյակ տարիներում Աթոռների ավելի սերտ և համերաշխ գործակցության գաղափարը էջմիածնում զբաղեցրել է մտքերը, և Կիլիկիո Աթոռի կողմից առանց պատասխանի չէ մնացել։ Դորա հետևանքն էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կանոնադրության մեջ մտավ և Կիլիկիո Կաթողիկոսության մասնակցությունը։ Ուրախ ենք, որ այդ մեծ բախտը Մեզ վիճակվեցավ իրագործված տեսնել, անձամբ մասնակցելով և նախագահելով ընտրական ժողովին։

Միասնականության և միության այդպիսի հասկացողությամբ էր, որ առաջարկեցինք Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հետ հիշել և մյուս աթոռակալների անունները, որ ժողովի կողմից միաձայնությամբ ընդունվեցավ։ Սպասում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական հայտարարության, շփոթությունների և բազմաձևության այս երևույթը մեջտեղից վերացնելու։

Այս մտքով էր, որ Աթոռի Սսից Էջմիածին փոխադրվելու հինգհարյուրամյակը տոնախմբելու առաջարկին ընդառաջ գնացինք, ավելացնելով, որ շեշտվի նաև Կիլիկիո և մյուս Աթոռների կատարած դերը ազգապահպանության մեջ, որպեսզի այդ տոնախմբությունը որպես հակադրություն չհասկացվի։

Այս մտքով էր, որ Մեր աղքատության մեջ, իբրև տեղահան եղած և յուր հարստությունից զրկված հաստատության ներկայացուցիչ, Մեր լոման ձգեցինք Մայր Աթոռի պահպանության գանձարանի մեջ, իբրև նվերը մեր թեմերի, վերան ավելացնելով եկեղեցական պատգամավորների ճանապարհածախսից մնացած գումարը, որի մասին առիթ կունենանք ընդհանրության տեղեկացնելու։

Վերջին և նորագույն ապացույցը երկու Աթոռների համերաշխ գործակցության գալիս է Էջմիածնից՝ Տ. Տ. Գևորգ Կաթողիկոսի կողմից, առաջարկելով Մեզ՝ ձեռներեց լինել Հինգհարյուրամյակի տարեդարձին նվիրվելիք գիտական ժողովածուի կազմության[1]։ Ջնայելով Մեր պարտավորություններով ծանրաբեռնված վիճակին, հանձն ենք առել սիրով, որպեսզի կրկին և կրկին շեշտենք երկու Աթոռների եղբայրական գործակցությունը։

Աստված օրհնե համերաշխության և փոխադարձ հասկացողության այս ոգին, որպեսզի մեր մեծ կործանումից հետո, վերածնության և վերակազմության մղիչ ուժ դառնա այն Եկեղեցու և հայրենիքի համար։

(Անթիլիաս, «Հասկ» ամսագիր, 1946 թ., № № 7—8, էջ 197—199)։

[1] Տե՛ս «Հասկ», 1946 թ., № № 7—8։

ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(Հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց)

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՎԵՀԱՓԱՌԸ

Գեղեցիկ է արևի մայրամուտը Մայր Աթոռում, մանավանդ աշնանային ջինջ և պայծառ երեկոներին, երբ խորհրդավոր լռության մեջ, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի դեմուդեմ կանգնած, դիտում ես ծիրանավառ ճառագայթների գմբեթն ի վեր սահքը, վերջին շողքը...։

Այդպիսի երեկոներից մեկն էր, 1950 թվականի աշնանը։ Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսը մեզ՝ սարկավագներիս, իր հոգևոր զավակներին, հրավիրել էր Վեհարան՝ խոսք ու զրույցի։ Հայրական խրատներ և հորդորներ տալուց հետո, երբ պատրաստվում էինք հրաժեշտ առնելու, հոգելույս Հայրապետը հուզված ձայնով ասաց. «Սիրելի սարկավագներ, ոչինչ չկա հավիտենական. կյանքն էլ անցավոր է. վաղը, մյուս օրը ես էլ կմեռնեմ։ Դուք եք, որ պիտի պահեք Իմ հիշատակը. ձեզանով է, որ պիտի ապրեմ. դուք եք, որ Իմ գերեզմանի մոտով անցնելիս, «Հոգւոց» պիտի ասեք»։

Այդ օրվանից տարիներ են անցել։ Ոչ ևս է երջանկահիշատակ Կաթողիկոսը։ Մայիսի 9-ին լրանում է Նրա մահվան 10-րդ տարելիցը։ Ես, որպես Նրա ձեռքի տակ դաստիարակված և մեծացած հոգևորական, իմ որդիական պարտքն եմ համարում հուշերի կարգով վեր հանել իմ հոգևոր ծնողի, Հայ Եկեղեցու անկրկնելի մեծությունների մեկի, մեծ հայրենասերի արժանիքները, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որպես հայ եկեղեցականի և հայ մարդու։

Այսօր էլ, տարիների մշուշի միջից, իմ հիշողության մեջ երջանկահիշատակ Կաթողիկոսը պատկերվում է հին Վեհարանի ընդունելության դահլիճում, առանց վեղարի նստած, ուշադիր, քիչ խիստ դեմքով, դիմացինին լսելու դիրքով։

Բարձրահասակ, քաջալանջ, լայն ճակատով, երկար, նոսր մորուքով, նեղ, բայց սուր և արտահայտիչ աչքերով, փառահեղ ծերունի էր։ Առանձնապես ազդեցիկ էր, երբ հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, միաբանների ուղեկցությամբ, հանդիսաբայլ Մայր Տաճար էր առաջնորդվում կամ Վեհարանի դահլիճն էր մտնում, հյուրերին ընդունելու։

Բնավորությամբ ծանրախոհ էր, խորաթափանց, հաղորդական և պայծառատես։ Յուրաքանչյուր խոսքը կշռությամբ էր և տրամաբանված։ Արտահայտություններն ինքնատիպ էին, պարզ, խոր և մտածված։ Այդ է պատճառը, որ Նրա հետ մեկ անգամ խոսողներն իսկ միշտ հիացմունքով են հիշում իրենց հանդիպման մասին։

Իմ հուշերը, կապված Գևորգ Զ Կաթողիկոսի հետ, սկսվում են Ճեմարանական տարիներից։

1945 թվականի հունիս ամսին ավարտվեցին նորաբաց Ճեմարանի ուսումնական

ԵրջանկաՀիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի վերջին լուսանկարը

(Գործ՝ նկարիչ Ստեփան Մինասյանի)

առաջին տարվա դասընթացները։ Սկսվեցին քննությունները։ Առաջին քննությունը, որ պետք է հանձնեինք, Հայոց Եկեղեցու պատմությունն էր։ Նախքան քննության սկսվելը, մի քանի օր առաջ, Ճեմարանի վերատեսուչը հայտնեց, որ քննությանը ներկա են լինելու Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, նշանավոր հայագետներ Ստեփան Մալխասյանցը, Երվանդ Շահազիզը և ուրիշներ։ Մոտեցավ քննության օրը։ Բոլորս սրտատրոփ և հուզված սպասում էինք Վեհափառի և հյուրերի Ճեմարան ժամանելուն։ Մեզանից ավելի շատ հուզված էր Հայ Եկեղեցու պատմության դասախոս Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը։ Իսկապես պահը հուզիչ էր։ Նորաբաց Ճեմարանի առաջին քննությունն էր, Վեհափառ Հայրապետի և նշանավոր հյուրերի ներկայությամբ։

«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր...» մաղթանքով սկսվեց քննությունը։ Վեհափառը ուշադրությամբ լսում էր, երբեմն դասախոսի միջոցով հարցումներ էր ուղղում մեզ, երբեմն էլ դիմում էր Ստեփան Մալխասյանցին, հետաքրքրվելով, թե արդյոք հարցումներ չունի՞։ Ճեմարանի ուսանողներից յուրաքանչյուրի հաջող պատասխանը գոհունակության արտահայտություն էր առաջացնում նրա դեմքին, իսկ եթե հաջող պատասխանի հետ միաժամանակ ուսանողը մաքուր, գեղեցիկ լեզվով էլ հայերեն էր խոսում, Վեհափառը անչափ գոհ էր մնում և պատասխանողին քաջալերում։

Քննության ավարտվելուց հետո, Վեհափառը, շնորհակալություն հայտնելով վերատեսչին և դասախոս սրբազանին, դիմեց մեզ, ասելով. «Դուք այստեղ եկել եք ծառայելու և նվիրվելու բոլոր քրիստոնյա եկեղեցիների մեջ ծաղիկ հանդիսացող, ուրույն բուրմունք և հոտ ունեցող Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցուն։ Ձեր մեջ առ այժմ պակասում են այդ Եկեղեցին ճանաչելու և գնահատելու համար համապատասխան գիտելիքներ. հենց որ այդ բոլորը ստանաք, վստահ եմ, որ կսիրեք նրան. իսկ եթե մեկ անգամ սիրեցիք, այլևս չեք կարող բաժանվել նրանից, ուր էլ որ լինեք։ Ավելի մոտիկ ճանաչելով Հայ Եկեղեցին, կըմբռնեք նրա ուղղափառ դավանությունը, կծանոթանաք նրա նահատակ և հայրենասեր զավակների հետ, որոնք, որպես գաղափարի և հավատի անմահ վկաներ, կոգևորեն ձեզ և կառաջնորդեն մեր խնկելի նախնյաց վսեմ խորհուրդների շավղով»։

Հայրական բարի և առինքնող ժպիտը երեսին, խոսում էր Վեհափառը։ Մենք, ամբողջովին ուշադրություն դարձած, որսում էինք նրա յուրաքանչյուր բառը, խոսքը և դրոշմում հիշողության մեջ։

Այդ ժամանակ դեռ մեզ հայտնի չէր, որ Վեհափառի ասածները նրա հիմնական գաղափարախոսությունն էին կազմում Հայ Եկեղեցու մասին։ Նույնպես մեզ համար պարզ չէր, որ այդպիսի խոսքեր ուղղելով մեզ, նա, առաջին հանդիպումից սկսած, նպատակ ուներ հայրենասիրության և եկեղեցասիրության զգացում սերմանել մեր սրտերում, մեր դաստիարակության գործին որոշակի ուղղություն տալ։

Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի հոգում, ամեն բանից գերիվեր, ամեն բանից թանկ, ամեն բանից ցանկալին բոցավառ հայրենասիրությունն էր, հավատը հայ ժողովրդի ապագայի նկատմամբ։ Նրա համար հայրենասիրության վսեմ գաղափարը օդ էր, ջուր էր, կյանք, առանց որի Նրա ապրելն անիմաստ էր և աննպատակ։ Նրա հայրենասիրությունը Եղիշեի և Աբովյանի հայրենասիրությունն էր՝ անձնուրաց, ոգևորիչ, վարակիչ, անհուն գետ... Երբ կարդում ես վերջիններիս ստեղծագործությունները, զգում ես, որ նրանք հանգիստ սրտով չեն նստել աշխատանքի. գրելիս, ոգեշնչվել են, ոգևորվել են, մի պահ կտրվել են իրականությունից, ոտքի են կանգնել, քայլել, մտքով սլացել դեպի նկարագրված ժամանակաշրջանը, ապրել մեր ժողովրդի սխրագործություններով, ատելությամբ լցվել դեպի հայրենիքի թշնամիները, և պոռթկացող զգացման այդ հզոր թափն ու շունչը գրչի միջոցով հաղորդել ապագա սերունդներին։

Ճիշտ այդպիսի հոգեվիճակի մեջ եմ տեսել Գևորգ Զ Վեհափառին 1948 թվականին, Վարդանանց տոնի օրը կազմակերպված երեկույթին։ Այդ օրվա հանդեսին ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի սաները, դասախոսները և բազմաթիվ հյուրեր։ Օրվա նյութի շուրջ զեկուցումով հանդես եկան Ճեմարանի դասախոսները և սաները։ Համերգային բաժնից և արտասանություններից հետո, երեկույթի եզրափակման առթիվ խոսեց Վեհափառ Հայրապետը։ Քանի դեռ խոսքը Վարդանանց պատերազմի առաջացման պատճառների մեկնաբանման մասին էր, Նա խոսում էր հանգիստ, խաղաղ տոնով, բայց երբ սկսեց խոսել ապստամբության հերոսական կողմի, հայ ժողովրդի անսասան կամքի և ըմբոստ ոգու մասին, միանգամից կերպարանափոխվեց, և եթե մինչ այդ նստած էր խոսում, ոտքի կանգնեց, արծվի սուր հայացքով Իր շուրջը դիտելուց հետո, ամբողջովին էլեկտրականացած և ունկնդիրների լարված ուշադրությունը Իր վրա կենտրոնացրած, ոսկեհնչուն հայերենով, իմաստաբանեց Վարդանանց պատերազմի բարոյական նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։

«Վարդանանց պատերազմը,— ասաց Վեհափառը,— հայ ժողովրդի ազնվության, հերոսության, ազատասենչ ոգու, ազատ հայրենիք ունենալու մեծագույն վկայաբանությունն է։ Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ կա անկյունադարձային մի կետ, որով տվյալ ժողովրդի կամ պատմությունն է սկսվում, կամ էլ այդ բոպեից սկսած՝ նրա աստիճանաբար անկումն ու իսպառ անհետացումը պատմության բեմից։

Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի պատմության կրիտիկական անկյունադարձն էր, հայ ժողովրդի հավիտենականության և անմահության խորհրդանշանը։ Ահա թե ինչո՞ւ Վարդանանց հիշատակը ընդմիշտ դրոշմվել է մեր ժողովրդի սրտում և դարձել ազգային ամենաբարձր և ամենանվիրական պաշտամունքը»։

Խոսում էր Վեհափառը...։ Դարերի հնության գաղտնարաններից վեր էին ելնում և կանգնում մեր հոգեկան աշխարհի մշուշապատ հորիզոնում Վարդանանք, իրենց անմեռ սխրագործություններով։

Վեհափառի սրտահույզ և հայրենաշունչ խոսքերն այն աստիճանի ոգևորիչ էին, որ հյուրերից մեկը, չկարենալով զսպել իրեն ալեկոծող զգացումը, բացականչեց. «Ցավդ տանեմ, Վեհափառ ջան, վառեցիր մեզ»։

Խոսելով Հայ Եկեղեցու մասին, Գևորգ Զ Կաթողիկոսն Իր կոնդակում գրում է. «Հայաստանյայց Ազգային Սուրբ Եկեղեցին ոչ միայն հոգևոր կրոնական հաստատություն է, այլև միաժամանակ ազգային հայրենական»։ Ազգային կրոնական այս երկակի բնությունը նա շաղկապում էր իրավ հայրենասիրության և եկեղեցասիրության գաղափարով և պահանջում էր յուրաքանչյուր հոգևորականից հասկանալ այդ հանգամանքը և գործի կարևորության գիտակցությամբ ծառայել Հայ Եկեղեցուն։

Այդ տեսակետից ուշագրավ է հետևյալ միջադեպը։ Ճեմարանի սաներից երկուսը սարկավագ ձեռնադրվելուց հետո, ըստ սովորության, ձեռնադրող եպիսկոպոսի հետ միասին ներկայանում են Վեհափառին՝ Նրա օրհնությունն ևս ստանալու նպատակով։ Վեհափառը սիրով է ընդունում նրանց, այնուհետև տալով Իր հայրական հորդորները, հարցնում է սարկավագներից մեկին, թե ինչո՞ւ համար է հոգևոր կոչում ստացել։ Վերջինս անակնկալի է գալիս, թերևս շփոթվում է Վեհափառի պատկառազդու անձնավորությունից, և քթի տակ ինչ-որ անհասկանալի խոսքեր է կմկմում։ Վեհափառն իսկույն մթագնում է. «Եթե չգիտեիր, թե ինչո՞ւ համար ես սարկավագ դառնում, ինչո՞ւ ձեռնադրվեցիր»։ Մյուս սարկավագը տեսնելով, որ գործը լուրջ բնույթ է ստանում, մոտենում է ընկերոջը և ականջին փսփսում. «Մի՞թե Վեհափառին չես ճանաչում, ասա, որ Եկեղեցու միջոցով նաև Մայր Հայրենիքին ծառայելու նպատակով եմ սարկավագ ձեռնադրվել»։ Վերջապես շփոթված սարկավագը ուշքի է գալիս և կրկնում ընկերոջ թելադրած խոսքերը։ «Ապրես,— ասում է Վեհափառը մեղմացած,— այդպես ասա, Ես էլ հենց այդպես եմ ուզում»։

Այս փոքրիկ դեպքը Վեհափառի հայրենասիրական զգացման բնորոշ կողմերից մեկն էր։ Որքան էլ անտրամադիր լիներ, ընթացիկ գործերով ծանրաբեռնված, հենց որ խոսքը դառնում էր հայրենիքի և հայ ժողովրդի մասին, իսկույն նա փոխվում էր, խանդավառվում, և, հոգնածությունը մոռացած, քաղցր և սիրալիր շեշտով խոսում էր Իր սրտին մոտ և հարազատ նյութի շուրջ։

Գևորգ Զ Վեհափառի կաթողիկոսության շրջանին Հայ և Ռուս եկեղեցիների միջև իսկական բարեկամական հարաբերություններ ստեղծվեցին, որոնք դարձան սրտագին ավանդություններ։

«Անցյալներում,— ասում էր Վեհափառը,— ցարական Ռուսաստանը, ղեկավարվելով «բաժանիր և տիրիր» սկզբունքով, դրանով իսկ արգելք է հանդիսացել եկեղեցիների միջև սերտ կապեր ստեղծվելուն։ Մեր օրերում, երբ օրավուր ամրապնդվում է բարեկամությունը մեր մեծ հայրենիքի բազմազգ ժողովուրդների միջև, Հայ և Ռուս քույր եկեղեցիները, որոնք հիմնված են քրիստոնեական սիրո, եղբայրության և բարեկամության գաղափարների վրա, չեն կարող իրար նկատմամբ օտարներ մնալ։

Ինչ վերաբերում է ընդհանրապես եկեղեցիների միության խնդրին, ապա դա հեռավոր ապագայի հարց է, երբ նախադրյալներ կստեղծվեն այդպիսի մի մեծ գործի համար։ Կոնկրետ խոսելով մեր Եկեղեցին ուրիշ Եկեղեցու հետ միացնելու մասին, ուղղակի պետք է ասենք, որ մեր Եկեղեցին դրա կարիքը չի զգում։ Մեր Եկեղեցին պարտականություն ունի իր ժողովրդի հանդեպ. նա, ինչպես անցյալում, այսուհետև ևս պետք է ծառայի ազգապահպանման և ազգամշակման սուրբ գործին»։

Գևորգ Զ երջանկահիշատակ Կաթողիկոսի երազանքներից մեկն էր երիտասարդ, բարձր կրթություն ունեցող վեղարավորներ տեսնել Մայր Աթոռում։ Այդ նպատակին հասնելու համար, Նա մեծ հույսեր էր կապել նորաբաց Ճեմարանի սաների հետ։ Երբ 1948 թվականին Ճեմարանի սաներից հինգ հոգի սարկավագ ձեռնադրվեցին և հետո նրանց թիվը հասավ ութի, Վեհափառը բոլորին Իր հոգեզավակները համարելով, հատուկ ուշադրու-

թյուն դարձրեց նրանց ուսուցման և դաստիարակության գործի վրա։ Նրան չէին բավարարում սարկավագների Ճեմարանում ստացած գիտելիքները, միտք ուներ նրանց աստվածաբանական և հայագիտական համալսարաններ ուղարկել։ «Մայր Աթոռի միաբանները թող քիչ լինեն, բայց կրթված. ինձ տիրացու հոգևորականներ պետք չեն,— հաճախ ասում էր հոգելույս Հայրապետը և ավելացնում.— Դուք եք իմ միակ հույսը։ Դրա համար էլ աղոթում եմ առ Աստված, որպեսզի ձեզ վեղարներով չտեսած, գերեզման չմտնեմ»։

Մեր ուսման պակասը լրացնելու նպատակով, Վեհափառը երկու շաբաթը մեկ անգամ մեզ Վեհարան էր հրավիրում և ժամեր շարունակ խոսում Հայ Եկեղեցու պատմության, աստվածաբանության և հայագիտության թեմաների շուրջ։

Տարիներն անցնում էին, Գևորգ Զ Կաթողիկոսի սերն ու գուրգուրանքը մեր նկատմամբ ավելանում էր, վերածվելով ծնողական ջերմ զգացման։ Բանը հասել էր այնտեղ, որ միաբանական հանդիսավոր ճաշկերույթներին, նախքան ճաշասրահ մտնելը, հարցնում էր շաթիրին. «Գրիգոր, մի տես, սարկավագներս եկե՞լ են»։ Բացի դրանից, թույլ էր տվել, առանց Իր հրավերին, երբ Ինքը զբաղված չի լինի, խմբով կամ առանձին գնալ Իր մոտ։ Այդպիսի օրերին Վեհափառին գտնում էինք Վեհարանին կից պարտեզի փոքրիկ տաղավարում նստած, մտածկոտ, և երբեմն էլ հազիվ լսելի, ծերունական ձայնով Կոմիտասյան հանրածանոթ երգի հետևյալ քառյակը երգելիս.

Հով արեք, սարե՛ր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք։
— Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Մոտենում էինք Վեհափառին։ Մեզ տեսնելուն պես, հայրական քաղցր, անուշ ժպիտով ասում էր. «Հը՛, ի՞նչ կա, աղնե՞րդ է պակաս, թե՞ մաղներդ»։ Հետո սկսվում էր մտերմական զրույցը ուսման մեջ ցուցաբերած մեր առաջադիմության, ապագա անելիքների և այլ հարցերի մասին։ Վերջում, հրաժեշտի ժամանակ, եթե որևէ խնդրանք չունենայինք, հարցնում էր. «Որևէ բանի կարիք չունե՞ք, չլինի՞ հարստացել եք»։

Գևորգ Զ Վեհափառը հմուտ էր եկեղեցագիտության և հայագիտության բոլոր ճյուղերի մեջ։ Հմտություն ուներ նաև արտաքին գիտությունների մեջ։ Ազատ կերպով խոսում էր գերմաներեն։ Ռուսերեն լեզուն գիտեր կատարելապես։

Զինված լինելով հոգևորական անհրաժեշտ բարձր գիտելիքներով, ունենալով խորաթափանց միտք, հոգևոր գործեր ղեկավարելու բազմամյա տարիների փորձ, եկեղեցական ընթացիկ բարդ խնդիրները ճշգրտորեն վճռելու և կարգավորելու արտակարգ կարողություն, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսը վայելում էր հայ և օտար եկեղեցիների հոգևորականության անկեղծ սերն ու հարգանքը։ Մինչև այսօր էլ, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին հարգանքով և ակնածանքով է արտահայտվում հոգելույս Վեհափառի մասին։ «Լավագույն տպավորություններով եմ հիշում երանելի Գևորգ Զ Կաթողիկոսին,— ասում է Սրբազան Պատրիարքը,— չափազանց խելացի և իմաստուն հոգևորական էր»։

Գևորգ Զ Վեհափառը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախկին միաբանության վերջին մեծ «Քյոթուկ»-ն էր, հին սերնդի վերջին և պատկառելի ներկայացուցիչը։ Նրա հիշատակը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որպես հայրենասեր մարդու և Հայ Եկեղեցու անքակտելի միասնականության անխոնջ պաշտպանի, երկար կապրի սերունդների սրտում և Իր արժանի տեղը կգրավի Հայ Եկեղեցու նորագույն շրջանի պատմության մեջ։



ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ
(Փոխանորդ Արարատյան թեմի)

ՄԵԾԱԳՈՐԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Մայիսի 9-ին լրանում է երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցը։ Որպես մեկը Նրա գահակալության օրերին բացված Հոգևոր Ճեմարանի սաներից, 1946 թվականից սկսած վայելել եմ Նրա հայրական խնամքն ու հոգատարությունը նախ որպես աշակերտի, և ապա որպես սարկավագի և միաբանի։

Այսօր հուզումով եմ հիշում Հոգևոր Ճեմարանում մեր անցկացրած տարիները և փորձում եմ Նրա հիշատակին մեկ-երկու տող նվիրել, որպես որդիական երախտագիտություն։

Ինձ նման շատեր իրենց ուսման, դաստիարակության և կրթության համար պարտական են հայրենասեր, մեծագործ և իրավամբ ազնվական այն մարդուն, որը մոտ 60 տարիներ նվիրումով և աննահանջ սիրով ծառայել է հայ ժողովրդին, Եկեղեցուն և հայրենիքին։

Գևորգ Զ-ը Մայր Աթոռի վերջին շրջանի հոգևորականության ինքնատիպ և պայծառ դեմքերից մեկն է, որպես մաքուր հայրենասեր, պատրաստված և Իր կոչման բարձրության վրա գտնվող հոգևորական։ Իմ աչքերի առաջ է այսօր էլ Նրա պարթևական հասակը, առույգ, պայծառ կերպարը, իմաստությամբ լի Նրա խոհուն և բարի աչքերը և լայն ճակատը։ Նրա շարժուձևի և խոսվածքի մեջ կար տպավորիչ մի վեհություն, որը չէր ճնշում, բայց գրավում էր քեզ, իրեն ենթարկում և հմայում։

Չի կարելի Նրան չհիշել և խորապես չսիրել ճանաչելուց հետո։ Հուզումով եմ հիշում այն օրերն ու ժամերը, երբ բոլորված Նրա շուրջը, լսում էինք Նրա խոսքերը, պատգամները, ոգևորվում էինք և խոստանում մեր համեստ ուժերով թեթևացնել Նրա ուսերին դրված ծանր պարտականությունները։

Սիրում էր մեզ, հետաքրքրվում մեր կյանքով, մեր դաստիարակությամբ, ուրախանում էր մեր հաջողություններով և մերթ տխրում մեր սայթաքումներով։

Սակայն Նրա բարի ժպիտը, ներողամիտ հայացքը քաջալերում և ոգևորում էին մեզ։

Այդ ազնվական մարդը իրապես նստել էր մեր մտածմունքների, մեր զգացմունքների և մեր կյանքի մեջ։

Տասը տարի է անցել Նրա մահվանից, և երբ այսօր, մեր սիրելի Վազգեն Ա Հայրապետի գահակալության օրերին, ծաղկում է Մայր Աթոռի կյանքը շատ բնագավառներում, իմ մտածմունքը գնում է այդ բարի ծերունուն, որ մահվան անկողնում Իր վերջին խրատն էր ուղղում մեզ, աչքերը հավիտյան փակելուց մի քանի րոպեներ առաջ. «Սիրեցեք Ս. Էջմիածինը...»։

Մահվան անկողնում Նրա վերջին խոսքն էր ուղղված մեզ, երբ շրջապատել էինք Նրա սնարը. «Հի-շե-ցեք... Ինձ...»։ Ու մենք միշտ հիշում ենք ու կհիշենք Նրա պայծառ անունը և մեծ գործը։

Հանգուցյալ Գևորգ Զ Հայրապետը ծնվել է 1869 թվականի նոյեմբերի 2-ին, Նոր-Նա-

խիջևան քաղաքում, հավատավոր, հայրենասեր և բարեպաշտ արհեստավորի ընտանիքում[1]։ Վեհափառի ծնողները և պապերը եղել են արհեստավորներ, իրենց օրվա հացը ճարել են աշխատանքով։ Հայրն էր խաչատուրը, Մայրը՝ Կատարինեն, բարի, առաքինի, աղքատասեր և ավանդապահ մի կին, որ իր երեխայի վրա թողել է խոր ազդեցություն, որպես նրա առաջին դաստիարակը. «Մոր ժողովրդականությունը, կարոտյալներին օգնելու ամենօրյա ջանքերը, եկեղեցասիրությունը և անսահման հավատը խորը տպավորություն թողել է մանկան հոգում»,— գրում է Նրա կենսագիրներից մեկը (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1950 թ., № 1, էջ 14)։

Մանուկ Գևորգը իր նախնական կրթությունն ստանում է Նոր-Նախիջևանի Ս. Աստվածածին ծխական դպրոցում, Մինաս քահանա Բախալյանի տեսչության օրոք։

Ծխական դպրոցի եռամյա դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո, նա շարունակում է իր կրթությունը տեղական հոգևոր դպրանոցում։

1879 թվականին, ուսումնատենչ և խոստումնալից պատանին, իր ուսումը շարունակելու համար, ընդունվում է Գևորգյան Ճեմարան, որի դասընթացը փայլուն կերպով ավարտում է 1886 թվականին։ Այնուհետև նա կատարելագործվում է Ճեմարանի լսարանական բաժնում, տեսուչ Արշակ Նահապետյանի օրով, և 1889 թվականին, մի խումբ ընկերների հետ, հաջողությամբ ավարտում է Ճեմարանի լսարանական բաժինը։ Ճեմարանական ուսանողական տարիներում Գևորգ Զ-ի վրա խոր տպավորություն է թողնում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը։ Հանգուցյալն ասում էր, թե ինքը եղել է Օրմանյանի հետևողական աշակերտը։

Ճեմարանը ավարտելուց հետո, հանգուցյալ Հայրապետը որոշում է նվիրվել հոգևոր ասպարեզին և այս ճանապարհով ծառայել իր ժողովրդին, Ս. Եկեղեցուն։ Այս հաստատ որոշումով, 1889 թվականի հունվարի 17-ին, մի խումբ ընկերներով, որոնց թվում Ա. Նահապետյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյանց, ընդունում է սարկավագության լուծը։

Մայր Աթոռում կատարված սարկավագության այս ձեռնադրությունը իրապես հատկանշական երևույթ էր, որովհետև Գևորգյան Ճեմարանը միայն 1889 թվականին, իր հիմնադրումից 15 տարի հետո, տալիս էր իր առաջին հոգևորական երախայրիքը՝ Մայր Աթոռին ծառայելու։ Այդ ուրախ առիթով «Արարատ» ամսագիրը, 1889 թվականի 353-րդ էջում գրում է. «Ամսույս 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցին ի վաղուց ցանկալի ձեռնադրություն Ս. Գայանեի վանքում՝ սրբազործությամբ գերաշնորհ Ներսես եպիսկոպոսի։ Ս. Էջմիածնի Ճեմարանը հինգետասնամյա երկունքից ետքը ի վերջո տվեց երախայրիքը Հայ Եկեղեցուն և ազգին։ 17-ին առավոտյան սարկավագության աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծահարգ Արշակ Նահապետյան և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գևորգ Զորեքչյան և 3-րդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյան»։

Օրմանյան սրբազան Կոստանդնուպոլսից իր անկեղծ, խանդավառ գոհունակությունն էր հայտնում իր աշակերտներին՝ Գևորգին, Գարեգինին և Կարապետին այս վճռական քայլի համար և օրհնում նրանց սարկավագության ուրարը։

Ուրախ էր նաև օրվա կաթողիկոսը՝ Մակար Ա, որը մեծ հույսեր էր կապել Ճեմարանի գոյության և նպատակների հետ, պատրաստված և հավատավոր հոգևորականներ ունենալու համար Մայր Աթոռում։

Մակար կաթողիկոսի պատշաճ կարգադրությամբ երեք սարկավագները՝ Գևորգ, Գարեգին և Կարապետ, ուղարկվում են Գերմանիա 1889 թվականին՝ շարունակելու իրենց ուսումը։

Գևորգ սարկավագը, որ ի ընե օժտված էր նաև ձայնական տվյալներով, ընդունվում է Լայպցիգի երաժշտանոցում, ինչպես նաև նույն քաղաքի համալսարանի աստվածաբանության և փիլիսոփայության ֆակուլտետներում։

1893 թվականին, Գևորգ սարկավագը ավարտում է Լայպցիգի երաժշտանոցն ու համալսարանը և, բազմակողմանի զարգացած, աշխատելու մեծ եռանդով, վերադառնում Մայր Աթոռ։

1894 թվականին Գևորգ սարկավագը նշանակվում է Ճեմարանում ուսուցիչ եկեղեցական և աշխարհիկ երաժշտության։ Այնուհետև նա պաշտոնի է կոչվում իր հայրենի Նոր-Նախիջևան քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որպես խմբավար, միաժամանակ Բեսարաբիայի թեմի թեմական դպրոցի ուսուցիչ։

Երիտասարդ սարկավագը շուտով իր շուրջը ստեղծում է հետաքրքրություն և հեղինակություն։ Նա սիրվում է նաև իր աշակերտներից և համայնքից։

[1] Հանգուցյալ Հայրապետի ճշգրիտ կենսագրությունը կազմելիս լայնորեն օգտվել ենք 1955 թվականին Մայր Աթոռի հրատարակած «Երջանկաբիշատակ Տ. Տ. Գևորգ Կաթողիկոսի կյանքը և գործունեությունը» հատորից։

Մինչև 1915 թվականը նա Նոր-Նախիջևանում ծավալում է բեղմնավոր գործունեություն։ Բոլորը նրան անվանում էին «հայր սարկավագ»։ Բնսարաբիայի թեմը դիմում է էջմիածին, խնդրելով Գևորգ սարկավագին վարդապետ ձեռնադրել իր հայրենի քաղաքի՝ Նոր-Նախիջևանի համար, որպես առաջնորդական փոխանորդ։

1913 թվականի հունիսի 20-ին Գևորգ Ե կաթողիկոսը նրան կուսակրոն քահանա է ձեռնադրում և նշանակում Նոր-Նախիջևանի առաջնորդական փոխանորդ։

Առաջնորդական փոխանորդի պաշտոնավարության տարիներին, Գևորգ վարդապետ Չորեքչյանը հանդես է բերում իր վարչական ընդունակությունները և ղեկավարելու շնորհքը։

1894—1915 թվականներին, իր հայրենի քաղաքում, Չորեքչյան վարդապետը եկեղեցական, վարչական, քարոզչական և մանկավարժական գործունեություն է ծավալում, արժանանալով բոլորի երախտագիտության։

1916 թվականին, Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով, Գևորգ վարդապետը կանչվում է Մայր Աթոռ՝ ծառայելու համար։

Գևորգ վարդապետը 1916 թվականին տեղափոխվելով էջմիածին, որպես փորձառու և պատրաստված հոգևորական, արժանանում է Վեհափառ Հայրապետի ուշադրությանը և նշանակվում է Սինոդի անդամ։

«Գևորգ վարդապետը էջմիածնում մեծ աշխատանք է տանում նաև Մայր Աթոռի մատենադարանը կազմակերպելու և նոր ձեռագրերով հարստացնելու ուղղությամբ։ Նրա նախաձեռնությամբ են ցուցակագրվում Արևմտյան Հայաստանի զանազան վանքերից բերված հայկական ձեռագրերը»։

1917 թվականի ապրիլի 15-ին, Ս. Հռիփսիմեի վանքում, ավագերիցությամբ Տ. Խորեն վարդապետ Լազարյանի, Գևորգ վարդապետին տրվում է ծայրագույն վարդապետության աստիճան։

Այնուհետև Մայր Աթոռում Գևորգ վարդապետը նշանակվում է Եղբայրական օգնության կենտրոնական կոմիտեի նախագահ։

Նրա անձնդիր և օգտաշատ աշխատանքը պատշաճ ձևով գնահատում է Գևորգ Ե կաթողիկոսը և 1917 թվականին ձեռնադրում նրան եպիսկոպոս։

1918 թվականին վանքի միաբանությունը Գևորգ եպիսկոպոսին ընտրում է տնտեսական խորհրդի նախագահ։

«1921 թվականին Գևորգ սրբազանին է հանձնվում Մայր Տաճարի լուսարարապետության պատասխանատու պաշտոնը»։

Նույն թվականի աշնանը Գևորգ սրբազանը նշանակվում է Թբիլիսիի թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ հաջորդ՝ 1922 թվականին թեմական-պատգամավորական ժողովը նրան միաձայնությամբ ընտրում է թեմական առաջնորդ։ Երեք տարվա շրջանը լրանալուց հետո, 1925 թվականին, նա նորից վերընտրվում է Թբիլիսիի թեմական առաջնորդի պաշտոնում և շարունակում իր պաշտոնավարությունը։

1925 թվականին, Գևորգ Ե Կաթողիկոսը շնորհում է նրան արքություն։

1927 թվականին Գևորգ սրբազանը վերադառնում է էջմիածին և նշանակվում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։

«Խորեն Կաթողիկոսի օրով Գևորգ սրբազանը հանդիսանում է նրա մոտիկ աջակիցը։ Ազգային-եկեղեցական բոլոր կարևոր հարցերի լուծման ժամանակ Կաթողիկոսի ամենամոտիկ խորհրդատուն դառնում է Գևորգ սրբազանը»։

1936 թվականի ապրիլ 18-ի № 220 կոնդակով, Խորեն Կաթողիկոսը նրան նշանակում է հայրապետական տեղակալ։

Այնուհետև Մայր Աթոռում Գևորգ սրբազանի գործունեությունը ընթանում է երկու ուղղություններով.

1.— Որպես տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսության (1938—1943) և

2.— Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս (1945—1954)։

1941 թվականի ապրիլի 10-ին Ս. Էջմիածնում հրավիրվում է Ազգային-եկեղեցական ժողով, որը Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին միաձայնությամբ ընտրում է «ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության»։

«Գևորգ արքեպիսկոպոսը, հայրենիքին ու Եկեղեցուն ծառայելու մեծագույն պատրաստակամությամբ և խանդավառ հույսերով, ձեռնարկում է Մայր Աթոռը պահպանելու, բարեկարգելու և բարեզարդելու պատմական մեծ գործին»։

Ազգային-եկեղեցական ժողովը հազիվ էր վերջացրել իր աշխատանքները, երբ սկսվում է Հայրենական պատերազմը։

1943 թվականի փետրվարի 2-ին ազգընտիր տեղակալը գրեց Իր հայտնի հայրենասիրական կոչը ուղղված հայ հավատացյալ ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարասյուն կառուցելու նպատակով միջոցներ հանգանակելու մասին։

«1944 թվականի հունվարի 29-ին, հանդիսավոր պարագաներում, սովետական քաջարի զորամասերին հանձնվեցին հայ հոգևորականության և հայ հավատացյալների միջոցներով կառուցված «Սասունցի Դավիթ» շարասյան տանկերը, որոնք շուտով մեկնեցին ռազմաճակատ»։



1916 թվականին Ղեսարիայում կայացած ազգային-միջեկեցիկակ համագումարին մասնակցող հոգևորականները՝ վերևում (կենտրոնում) կիսաբոլոր Զորեբեյանի գլխավորությամբ:

Գևորգ Լեմմլեանի տեսակետ

Սովետական կառավարությունը գնահատեց անձնվեր ու անխոնջ Հովվի հայրենասիրական եռանդուն գործունեությունը. Տեղակալ Գևորգ սրբազանը արժանացավ «Կովկասի պաշտպանության համար» մեդալին։

1945 թվականի ապրիլի 19-ին ամենապատիվ Տեղակալը Իր պատմական հանդիպումը ունեցավ ՍՍՌՄ ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինի հետ՝ «Հայ Եկեղեցու գործերի մասին»։ Ամենապատիվ Տեղակալին հաջողվեց լուծել Մայր Աթոռին վերաբերող մի շարք կարևոր հարցեր և խնդիրներ։

1945 թվականի հունիսի 16-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, գումարվում է Ազգային-եկեղեցական ժողովը, զբաղվելու կաթողիկոսական ընտրության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն վերաբերյալ մի շարք այժմեական և հրատապ հարցերով։

1945 թվականի հունիսի 22-ին, Մայր Տաճարում, ժամը 3.30-ին բացվեց Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի ընտրական նիստը՝ նոր Կաթողիկոսի ընտրությամբ զբաղվելու համար։

Ժողովի նախագահ Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Գարեգին Ա Կաթողիկոսը ընտրությունից առաջ խոսում է Իր հետևյալ պատմական գեղեցիկ ճառը.

«Ցանկալի պայմանների մեջ մենք հավաքված ենք այստեղ մեր Կաթողիկոսին ընտրելու։ Առաջին անգամն է մեր ամբողջ պատմության ընթացքում, որ Տանն Կիլիկիո Կաթողիկոսը ներկա է գտնվում կաթողիկոսական ընտրությանը։ Այսպիսի ժողովի գումարումը մեր պատմության մեջ հազվագյուտ է. շատ քիչ է պատահել, որ այսպիսի ներկայացուցչություն հավաքված լինի։ Ազգային-եկեղեցական ժողովին են ներկայացել հեռավոր Ամերիկայի հայության ներկայացուցիչները, Եգիպտոսի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բալկանյան երկրների հայերի պատգամավորները և Խորհրդային երկրների ու թեմերի առաջնորդներն ու ժողովրդական ընտրյալները։ Որոշ տեղեկություններ կան, որ Հարավային Ամերիկայի պատգամավորները նույնպես ճամբա ելած են։

Արտաքո կարգի նշանակություն ունի այս համագումարը, որովհետև թե՛ մեր երկրամասի և թե՛ գաղութների այս ներկայացուցչությունը հանդես է բերում մեր Եկեղեցու միասնությունը։

Երդմամբ սկսեցինք այս ժողովը ազգի և Եկեղեցու անունով, կկամենայի, որ ժողովը նվիրական և սրբազան մնար իր պարտականությունների հանդեպ, կկամենայի այնպիսի ընտրություն կատարվեր, որ ընտրյալը լիներ ազգի ընտրյալը։ Կաղոթեմ այս դարավոր Եկեղեցու սրբազան կամարների տակ, որ Տերը առաջնորդե մեզ և մենք պատասխանատու չմնանք մեր խղճի և ժողովրդի առաջ» («Էջմիածին», 1945 թ., № 6—7, էջ 37)։

Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովին ներկա եղող 111 պատգամավորների 110 քվեով, միաձայն, Կաթողիկոս է ընտրվում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը։

Վերջում հանդես է գալիս ընտրյալ Վեհափառը փակման հետևյալ հուզիչ, սրտագրավ ճառով.

«Շնորհակալություն բոլոր ճառ ասողներին։

Պատգամավոր Մեր զավակներն իրենց խոհական գործերով և իմաստուն խոսքերով հմայեցին Մեզ։ Ժողովը ցույց տվեց շատ ընդգծելի կողմեր։

Տեսնում եմ հայ ժողովրդի դեպի Ս. Էջմիածինն ունեցած անհուն սերը. այդ սերն է, որ ձեզ հեռավոր վայրերից առաջնորդել է մինչև այստեղ, առ ոչինչ դարձնելով ճանապարհորդական նեղությունները ու դժվարությունները։

Հայ Եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր, բայց իրավական տեսակետով ոչ։ Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսը, նկատի չառնելով երկար ճամբորդության հետ կապված դժվարությունները, անձամբ եկավ իբրև ուխտավոր և ճշմարիտ ու դրական միասնականության հիմքը դրավ։

Այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ, որի համար պիտի աղոթեմ, որ այն մշտնջենական դառնա։

Տեսա ձեր բուռն զգացմունքը դեպի Ս. Էջմիածինը և դեպի մեր սիրելի Հայրենիքը, որ բարձր վերելքներով փառավորվում է։ Պիտի աղոթեմ հայրենիքի և պետության զորացման համար»։

1945 թվականի հունիսի 24-ին, ավանդական և մեծահանդես շքով, կատարվեց նորընտիր Կաթողիկոսի հայրապետական օծումը։

«1945 թվականի Ազգային-եկեղեցական մեծ ժողովում քննարկվեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար չափազանց կարևոր մի շարք խնդիրներ և որոշումներ կայացվեցին նրանց նկատմամբ, որոնց կենսագործումը դրվեց նորընտիր Հայրապետի ուսերի վրա։ Այս խնդիրներից ամենահրատապը և առաջնահերթը հանդիսանում էր Հոգևոր Ճեմարանի բացումը»։

Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը բացվեց 1945 թվականի նոյեմբերին։

Գևորգ Չ Կաթողիկոսի գահակալության օրերին, Մայր Աթոռի հոգևոր, կանոնական և գործարար կապը նվիրապետական Աթոռների, Սփյուռքի մեր թեմերի հետ ավելի քան ամրապնդվեց, սերտացավ։ Թեմերի կազմակերպումը և նրանց կանոնական կապը Մայր

Աթոռի հետ, Գևորգ Զ Կաթողիկոսի ուշադրության կենտրոնումն է եղել միշտ։

Գևորգ Զ Կաթողիկոսի ամենօրյա և հոգատար ղեկավարության շնորհիվ կազմակերպվում են նաև ներքին թեմերը։

1944 թվականի սկզբին, Նրա նախաձեռնությամբ, իրագործվեց «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը, որպես պաշտոնական թերթ Ամենայն Հայոց Հայրապետության։

«Էջմիածին» ամսագիրը, իրականում, հանդիսացավ նախկինում հրատարակվող «Արարատ» ամսագրի շարունակությունը, որի խնդիրն էր հոգևոր սնունդ տալ հայ հավատացյալներին, կապ պահպանել Մայր Աթոռի և մեր ազգային-եկեղեցական թեմերի միջև, զարգացնել ու խորացնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու աստվածաբանական-եկեղեցագիտական գիտությունը, արձագանքել հայ և միջազգային կյանքում Հայ Եկեղեցու և ժողովրդի համար կարևորություն ունեցող իրադարձություններին և ոսկեղեն կամուրջ հանդիսանալ Սփյուռքի և Մայր Հայրենիքի հայության միջև։

1946 թվականի ապրիլի 1-ին Գևորգ Զ Կաթողիկոսը գրում էր Իր հայրապետական անդրանիկ կոնդակը, որը փաստորեն նախագիծ-ծրագիրն էր մեծանուն Հայրապետի ապագա գործունեության (տե՛ս «Էջմիածին», 1946 թ., № № IV—V, էջ 6—10)։

1946 թվականին Նա օրհնեց Սփյուռքի տարագիր Իր զավակների հայրենադարձությունը դեպի Սովետական Հայաստան։ Նա հայրենադարձության մեջ էր «տեսնում տարագիր Իր զավակների փրկությունը և հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի պայծառ ապագայի հեռանկարը» (տե՛ս «Էջմիածին», 1946, № 1, էջ 12—13)։

1950 թվականի հունիսին, Նա գրեց Իր հոյակապ հայրենաշունչ կոնդակը Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակի առիթով. «Ավարայրի հերոսամարտը եղել է, կա և կմնա առհավետ ազգապանծ էջը հայոց պատմության»։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ-ի անունն ու գործունեությունը սերտորեն կապված են եղել խաղաղության համաշխարհային շարժման հետ։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, խաղաղության շարժման ստեղծման առաջին իսկ օրերից, «իր գիտակից և դրական վերաբերմունքն է արտահայտել հօգուտ այդ շարժման, որովհետև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ էլ խաղաղության կողմնակից է եղել, իր պատմության ողջ ընթացքում»։

1949 թվականին, խաղաղության պաշտպանության ի նպաստ, հնչեց հոգելույս Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի ձայնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից. «Մենք այսօր իրավունք չունենք լռելու, երբ համայն մարդկության ապագա անվտանգությունն ու խաղաղ կյանքի խոստումը ենթակա է վտանգի և տևական պատերազմից հոգնած մարդկությունը կանգնած է նոր պատերազմի, նոր թշվառության առաջ։ Մենք այսօր իրավունք չունենք լռելու, ռաջ։ Մենք այսօր իրավունք չունենք լռելու, այլ պարտավոր ենք հանդես գալու և ուժգնապես բողոքելու պատերազմի դեմ, որը հապես կոստում է համարյա ամբողջ մարդկության դավանած կրոնների սիրո և եղբայրության գաղափարին, մարդկության դավանած բարոյական սկզբունքներին և շահերին»։

Նույն թվականի ապրիլի կեսերին, Վեհափառ Հայրապետը հատուկ գրությամբ դիմեց Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Վեհափառին, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռներին, Սփյուռքի բոլոր թեմական առաջնորդներին, և կոչ արեց նրանց «ըստ ամենայնի զորավիգ լինել խաղաղության համաշխարհային խորհրդին, հնչեցնել իրենց ձայնը բոլոր նրանց դեմ, որոնք ձգտում են նոր պատերազմ հրահրել, և միացնել իրենց ձայնը բոլոր նրանց ձայներին, որոնք իրենց աստվահաճո գործողություններով ձգտում են կասեցնել մարդկության գլխին կախված նոր արհավիրքը»։

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ, 1950 թվականի ապրիլի 12-ին, Հայ Եկեղեցու անունից, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր գնահատական խոսքն ասաց Խաղաղության համաշխարհային խորհրդի մշտական կոմիտեի Ստոկհոլմի նստաշրջանի բանաձևերի մասին։

1950 թվականի օգոստոսի 5-ին Թբիլիսիում հրապարակվեց Սովետական Միության երեք եկեղեցիների Պետերի՝ Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատի և Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գևորգ Զ-ի միաձայն դիմումը քրիստոնյա աշխարհին։ Մայր Աթոռի պաշտոնական օրգան «Էջմիածին» ամսագիրը մի հատուկ համար նվիրեց եկեղեցիների խաղաղության համար մղած պայքարի այդ կարևոր իրադարձությանը։

1950 թվականի հոկտեմբերի 12-ին Մոսկվայում գումարվելիք Խաղաղության կողմնակիցների համամիութենական ժողովի պատգամավոր ընտրվեց նաև Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ-ը, Սովետական Հայաստանի Իր ժողովրդի կողմից։ Իսկ ժողովում Նա ընտրվեց Խաղաղության պաշտպանության

սովետական կոմիտեի անդամ։ Ժողովում Իր ունեցած պատմական ելույթում Վեհափառ Հայրապետը շարադրեց խաղաղության նկատմամբ քրիստոնեական սկզբունքը՝ դատապարտելով պատերազմը։

1951 թվականի նոյեմբերի 26—28-ին Մոսկվայում գումարված խաղաղության կողմնակիցների համամիութենական ժողովում Վեհափառը նորից ընտրվեց պատգամավոր։ Ժողովում Իր ունեցած շահեկան ելույթում Վեհափառը առաջ քաշեց պատերազմի դեմ քրիստոնեական եկեղեցիների համատեղ հանդես գալու հարցը։

1952 թվականի մայիսի 9—12-ը, Մոսկվայից 75 կմ. հեռավորության վրա գտնվող Ռուսական Եկեղեցու հոգևոր կենտրոն ու սրբավայր Զագորսկ քաղաքում, տեղի ունեցավ Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների և կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով՝ նվիրված խաղաղության պաշտպանության հարցերին։ Այդ կարևոր համագումարին մասնակցում էին 18 ազգությունների և 34 կրոնական տարբեր համոզմունքների ու համայնքների ներկայացուցիչներ։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատգամավորությանը գլխավորում էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ-ը, որն ընտրվեց համագումարի նախագահության կազմում։

«Այսօր ավելի քան երբևիցէ,— խորհրդածում է Վեհափառը,— եկել է ժամանակը, որ Եկեղեցին հանդես գա որպես միասնական անկախ հաստատություն, կենսագործն քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետությունը»։ Ապա քրիստոնեական լավատեսությամբ Վեհափառը եզրակացնում է.— «Կգա ժամանակ, երբ պատերազմի միտքն ու ծրագիրը կմեռնեն ու կանէանան և մարդկությունը կազատվի նոցա մղձավանջից ու կհանգստանա» («Էջմիածին», 1952 թ., № 5, էջ 44)։

Մայր Տաճարի վերանորոգության հարցը Գևորգ Զ Կաթողիկոսի սրտի ամենամոտիկ հարցն է եղել։ Վեհափառ Հայրապետի նվիրական իղձն է եղել «ներքնապես ու արտաքնապես հիմնովին վերանորոգված» տեսնել հայ ճարտարապետության հնադարյան կոթող Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։

Վեհափառ Հայրապետի միշտ ուշադրության կենտրոնում եղած և ամենամեծ մտահոգության առարկա դարձած այդ հարցը քննվել է 1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողովում, ուր ազգընտիր Հայրապետը հայտարարել է. «1642 տարվա պատմական այս կոթողի կյանքի ու հարատևության և նրան վայելուչ վիճակում պահելու գործը հայ ժողովրդի պատվի գործն է»։

Վեհափառ Հայրապետը Իր անդրանիկ կոնդակում գրում է նաև հետևյալը. «Սարսուռ եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանա՞մ արդյոք, ծերությանս հասակում, խղճի մտոք կատարել պարտքս. պիտի հաջողվի՞ արդյոք Ինձ՝ ներքնապես ու արտաքնապես հիմնովին վերանորոգել հայ հնադարյան թանկարժեք կոթողը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը»։

Նորընտիր Հայրապետը Իր ընտրությունից մի քանի ամիս հետո ձեռնամուխ է լինում Մայր Տաճարի վերանորոգության նախապատրաստական աշխատանքներին։ Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրվում է ականավոր մասնագետներից և հայ ժողովրդի նյութական մշակույթին քաջածանոթ անձնավորություններից բաղկացած մի հեղինակավոր հանձնաժողով, որի մեջ են մտնում Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, ժողովրդական նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Սովետական Միության կերպարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանը, արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մարկ Գրիգորյանը, ճարտարապետության թեկնածուներ Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, ուրիշ ճարտարապետներ և մանրանկարիչներ։

«Վեհափառը երիտասարդական խանդավառությամբ թափ ու մղում էր տալիս նախնական աշխատանքներին։

Հակառակ բոլոր բարի ցանկություններին, սակայն, կամքից անկախ պատճառներով, ձգձգվեց վերանորոգման հրատապ հարցը։

Բայց ծերունազարդ և հայրենասեր Հայրապետի համար սպասում էր մի մեծ ուրախություն։ 1954 թվականին հայրենի հարազատ պետությունը հանձն առավ հոգալ դարերի բովից անցած պատմական այս հոյակապ ու անկրկնելի հուշարձանի ներքին նկարազարդման և վերանորոգության ծախսը, որպես ճարտարապետական ու պատմական կարևոր հուշարձանի»։

Բայց անողոք մահը շտապեց կտրել մեծանուն Հայրապետի արդյունաշատ կյանքի թելը. Նա աչքերը փակեց Տաճարի նորոգումը չտեսած...։

1954 թվականի մայիսի 9-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց հայրենասեր և մեծագործ Գևորգ Զ Կաթողիկոսը։

Վշտի ու տրտմության այդ օրերին մի անգամ ևս դրսևորվեց հայ ժողովրդի անսահման երախտագիտությունն ու որդիական հարգանքը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու նրա արժանավոր Գահակալը։

Սփյուռքի և Մայր Հայրենիքի բոլոր թեմերից Մայր Աթոռ ժամանեցին սգակիր պատգամավորներ, խոնարհվելու համար մեծ և անմոռանալի հանգուցյալի դագաղի առաջ, իրենց հետ բերելով թեմերի անսահման կսկիծն ու հավատարմությունը։

Մայիսի 25-ին, մեծ հանդիսավորությամբ և եկեղեցական թափորով, Վեհափառի աճյունը Վեհարանից իջեցվեց Մայր Տաճար։

Մայիսի 27-ին, հնադարյան Մայր Տաճարում, հանդիսավորությամբ կատարվեց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ հանգուցյալ Կաթողիկոսի վերջին օծումը։

Հայրենյաց պաշտպան Ներսես Աշտարակեցու և Հայոց Խրիմյան Հայրիկի շիրիմների առընթեր բացվել է Նրա գերեզմանը, որի կողքին բարձրանում է գեղեցիկ մեծ զանգակատունը։

Ոչ ևս է Վեհափառը...։ Բայց Նա չի մեռել, ինչպես չեն մահացել մեր մեծ մեռելները։ Գևորգ Զ-ը ապրում է Իր գործերով և պատգամներով հայ ժողովրդի երախտագետ հոգում։

Պատմության գիրկն է անցնում այսպես Գևորգ Զ Կաթողիկոսը, որպես հայրենասեր և մեծագործ կաթողիկոս, որն Իր կյանքը, Գևորգյան Ճեմարանի գրասեղաններից սկսած, նվիրել է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի ծառայության։

Դժվար է սույն թռուցիկ ակնարկի մեջ խտացնել մեծագործ Կաթողիկոսի ազգաշեն և եկեղեցանվեր գործունեությունը։

Նրա մահվան 10-րդ տարելիցի առթիվ, երբ ազգովին մեր հարգանքի և երախտագիտության տուրքն ենք բերում Նրա հիշատակին, խորապես մխթիարվում ենք, որ Գևորգ Զ Կաթողիկոսի գործը ապրում և բարգավաճում է Նրա արժանի հաջորդ՝ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի օրոք։ Ինչ երկ, Գևորգ Զ Կաթողիկոսի համար և Նրա օրոք ծրագիր էր, երազ, այսօր կյանք է դարձել, մարմին է առել։ Հրճվում է Իր հավիտենական կայքում հոգին մեծ Հայրապետի, որովհետև շարունակվում է Իր գործը, կենդանի է Իր հիշատակը։

Ուխտե՛նք հավատարիմ մնալ հանգուցյալ լուսաբնակ Գևորգ Զ Կաթողիկոսի ծառայության, նվիրման ոգուն, Հայ Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության Նրա գաղափարներին, Նրա հայրենասիրական ավանդություններին։

Ուխտե՛նք ծառայել Մայր Աթոռին այնպես, ինչպես Նա էր ծառայում։ Սիրե՛նք մեր վերածնված Մայր Հայրենիքը ինչպես Նա էր սիրում, հիշելով Նրա սրբազան պատգամը. «Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ Հայրենիք։ Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»։

Մեզանից հեռացավ մեր սիրելի Հայրն ու Հայրապետը, ավանդ թողնելով մեզ Իր ոգին, հավատը, հայրենասիրությունը, գործը։ Պահե՛նք այդ սրբությունները և մի անգամ ևս խոնարհվենք Նրա սուրբ և խնկելի հիշատակի առաջ։





ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Այսօր, անցած տասը տարիների միջից, երբ մեզ է նայում երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետը, մենք Նրա կերպարը տեսնում ենք առավել ամբողջական և համադրված։ Տարիները կարծեք զտել են, տարել երկրորդականը, անկարևորը, թողնելով Նրա կերպարի մեջ այն, ինչ մնայուն է։

Այսօր մեր մտածման առջև կանգնում է մեծ հոգևորականի պայծառ կերպարը։

1945 թվականի նոյեմբեր ամսին վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը Գևորգ Զ Կաթողիկոսի նախաձեռնությամբ։

Ես այսօրվա պես հիշում եմ 1945 թվականի նոյեմբեր ամիսը։ 35—40 երիտասարդներ, զանազան գավառներից և քաղաքներից, եկել, հավաքվել էինք Մայր Աթոռ։ Ընդունելության քննությունները արդեն վերջացել էին։ Բոլորս, երկյուղած մթնոլորտում, լուռ, ներկա էինք Ճեմարանի բացման հանդիսության։ Լսվում էին աղոթքի մրմունջները, մինչ հանգուցյալ Կարապետ արքեպիսկոպոս Թումանյանը օրհնած ջրով ցողում էր ուսանողների երեսը, իսկ Վեհափառ Հայրապետը, արցունքոտ աչքերով, օրհնում էր բոլորիս, օրհնում էր նորաբաց Հոգևոր Ճեմարանը։

Հոգևոր Ճեմարանը առաջին օրվանից դարձավ երջանկահիշատակ Հայրապետի մտահոգության և գուրգուրանքի առարկան։ Հեշտ է ասել Ճեմարանը վերաբացվեց։ Ծանր և դժվարին տարիներ էին, պատերազմը նոր էր վերջացել, ամբողջ երկիրը ծանր տնտեսական դրության մեջ էր, թշնամին ոչնչացրել էր ամեն ինչ, բայց մնացել էր մեր ժողովրդի պրկված, հերոսական ոգին, որը նոր-նոր բուժում էր իր վերքերը և վերաշինում իր ավերված բույնը։

Հոգևոր Ճեմարանի առաջին վերատեսուչն էր Մինաս Մինասյանը, որին Վեհափառ Հայրապետը միշտ թելադրում էր. «Ճեմարանի համար ոչինչ միք խնայի, ինչ որ կարելի է և հնարավոր՝ պետք է անել»։

Հոգևոր Ճեմարանը, իր բացման առաջին իսկ օրից, ապահովված էր ուսուցչական որակյալ անձնակազմով։ Ուսանողության մեջ կար խանդավառ զգացում, սովորելու տենչ։

Եվ այսպես, առաջին տարին անցավ լարված աշխատանքով։

Ուսումնական տարվա վերջն էր, քննությունները սկսվել էին։ Լուր էր տարածվել արդեն, թե Վեհափառը պետք է գա և լսի աշակերտների պատասխանները։ Առաջին անգամ պիտի տեսնեինք Վեհափառ Հայրապետին։

Ճեմարանի պատշգամբից դիտում էինք հանդիսավոր թափորը, որ Կաթողիկոսին առաջնորդում էր Ճեմարան։ Ուսանողներս երգեցինք «Հայր մեր», իսկ Վեհափառ Հայրապետը, պատկառազդու, աղոթեց. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»։ Մենք

հմայվել էինք։ Քննությունները սկսվեցին Վեհափառ Հայրապետի ներկայությամբ։ Ուսանողներս մի տեսակ կարկամել էինք։ Ուսուցիչները քրքրում էին մեր հիշողությունները։ Ուսումնական ստուգատեսի բոպեներ էին։ Վեհը լսում էր գոհունակ և մերթ միջամտում. «Բավ է, նոքա լավ յուրացրել են դասը, բավարար գիտեն»։ Եվ իր մանրիկ ու բարի աչքերը ժպիտով ուղղում էր այս կամ այն ամաչկոտ պատանուն, խրախուսում և մրմնջում. «Ապրես»։ Մեր պատանեկան երկչոտությունը վերացել էր, և դրանից հետո մենք սրտանց ցանկանում էինք, որ Վեհը գար և մեր բոլոր քննություններին ներկա լիներ։ Քննությունները մեզ համար սարսափելի չէին այլևս, որովհետև ուսուցիչների խիստ աչքերի դիմաց կային մի զույգ խրախուսող, ժպտացող, բարի աչքեր։

Եվ այսպես, տարիները անցնում էին, մենք հասունանում էինք, լցվում գիտելիքներով, իմաստնանում։ Սիրում էինք Կաթողիկոսին, նա մեր կուռքն էր։ Կամաց-կամաց նա մեզ ավելի էր հասկանալի դառնում։ Նա զարգացած, լուսամիտ անձնավորություն էր, զարմանալիորեն նորի զգացողություն ուներ, հեռու էր ֆանատիկ լինելուց, իրերի և երևույթների խորքն էր թափանցում միշտ և իսկույն զատորոշում կարևորը անկարևորից։

Այդ օրերին Ճեմարանում կային նաև վեճեր, սկզբունքային այս կամ այն հարցի վերաբերյալ։ Վիճում էին իրար հետ բոլորը, վիճում էին դասախոսների հետ։ Այդ աղմկոտ վեճերը է՛լ ավելի ամրացնում էին մեր գիտելիքները, մեր հավատը։ Նույնիսկ Վեհափառ Հայրապետի մոտ մեր հավաքված ժամանակ, տալիս էինք բավական համարձակ հարցեր։ Նա ներողամտաբար նայում էր մեզ, ժպտում և հաճախ իրավունք տալիս։

1949 թվականին առաջին հնգյակը ձեռնադրվեց սարկավագ, հետո երկրորդ խումբը և երրորդը։ Հանգուցյալ Հայրապետի գուրգուրանքը կրկնապատկվեց Ճեմարանի հանդեպ։ Մենք, որպես սարկավագների, ավելի հաճախ էինք լինում Վեհափառ Հայրապետի մոտ, մանավանդ երեկոները։ Ա՜խ, այդ երեկոները, երբեք չեն մոռացվի. անջնջելի են մնացել նրանք իմ հիշողության մեջ։ Սկսվում էր սրտաբաց զրույց, և ինչի մասին ասեք չէինք զրուցում. կրոն, բարոյականություն, հայրենիք, Հայ Եկեղեցի, Սփյուռք, ազգապահպանում, մշակույթ, գրականություն, արվեստ։ Առաջին անգամ անգլիացի Սմայլսի մասին ես Վեհափառից լսեցի. նա խորհուրդ էր տալիս կարդալ նրա «Բնավորություն»-ը և «Ինքնօգնություն»-ը։ Հաճախ գերմանացի փիլիսոփա Վունդին էր վկայակոչում։ Երբեմն դաստիարակիչ պատմություններ էր պատմում Նա Իր կյանքից, Իր ուսանողության տարիների Գերմանիան էր հիշում։

Ուշ գիշերին դուրս էինք գալիս Վեհափառի մոտից լիցքավորված, կայունացած...։

Վեհափառը կապված էր Իր նորընծա սարկավագներին։

Եվ երբ այդ հսկա կաղնին տապալվեց 1954 թվականի մայիսին, մենք, որ Նրան էինք հենվել, անսահմանորեն մեզ որբ զգացինք և անպաշտպան։

Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո, Վեհափառը չէր էլ մտածում ավագ սարկավագներին վարդապետ ձեռնադրելու մասին։ Նա ճեմարանական գիտելիքները բավական չէր համարում արդի պայմաններում և մի անգամ ասաց մեզ.

— Կրթված վարդապետներ եմ ուզում. ես ձեզ դեռ պիտի ուղարկեմ աստվածաբանություն սովորելու, ինձ Եկեղեցու սյուներ են պետք...։

Ճեմարանը այդ տարիներին բավական թվով ուսանողություն ուներ և ոչ բոլորն էին, որ հոգևորական դառնալու ցանկություն էին հայտնում։ Շատերը, ավարտելով Ճեմարանը, հեռանում էին։ Վանքում շատերը ահազանգում էին, որ Հոգևոր Ճեմարանը իր դերում չէ, որ հոգևորական դարձողների թիվը քիչ է և այլն։ Բայց Վեհը մի անգամ խորիմաստ կերպով պատասխանել էր.

— Հոգևորական դառնալու խնդիրը կոչում ունենալու հարց է։ Հոգևոր Ճեմարանը ոչ միայն հոգևորական է պատրաստում, այլև լավ հայ մարդիկ, որոնք կյանքում ո՛ւր էլ լինեն, ի՛նչ գործով էլ զբաղվեն, չեն մոռանա Ս. Էջմիածինը և հայ մշակույթի, արվեստի, դպրության և ոգու տարածողները կլինեն։

Հոգևոր Ճեմարանի սաների և սարկավագների ամենափոքր հաջողություններն անգամ անչափ ուրախություններով էին լցնում Վեհափառ Հայրապետի սիրտը։

Մեկ անգամ, Օշականի ուխտագնացության տոնին էր։ Սուրբ պատարագը վերջացել էր։ Վեհափառը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներով (Երվանդ Շահազիզ, Կամսարական, Մինաս Մինասյան և ուրիշներ), նստել էր Օշականի եկեղեցու բակի հարավային մասում, ծառերի զով շվաքում, և լուռ ունկնդրում էր Հոգևոր Ճեմարանի սաների արտասանությունները, երգերը։ Տողերիս գրողը բեմասացության պես մի բան էր պատրաստել՝ Ճեմարանի սաների հանդիսավոր խոսքը անմահ Մաշտոցի գերեզմանի առջև, Նրա հիշատակին նվիրված գրական մի առաջին նախափորձ։ Ես, սեղանի վրա բարձրացած, ոգևորությամբ կարդացի գրածս։ Վեհը խանդավառ հուզման մեջ էր։ Մյուս օրը նա ինձ կանչեց և հանձնարարեց,

որ իմ շարադրանքը պարզ, ընթեռնելի արտագրեմ և հանձնեմ «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը։ Այդ ինձ համար անսպասելի և հաճելի էր միանգամայն։ Իմ շարադրությունը տպվեց։ Համոզված եմ, որ ինձնից ավելի Վեհն էր ուրախանում նման դեպքերում։ Նրա ուրախությունը նման էր այն պարտիզպանի ուրախությանը, որը գուրգուրանքով դողում է իր տնկած նորատունկ այգու յուրաքանչյուր մատղաշ շիվի համար։

Հիշում եմ, Ս. Էջմիածնի տոնի օրն էր։ Հավաքվել էինք Վեհարանում։ Ներկա էին միաբանները, կային հյուրեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և ուրիշներ։ Շատերն էին ճառեր խոսում, բարեմաղթություններ անում։ Մենք, սարկավագներս, հոգևոր երգեր էինք երգում, պայծառացնում սեղանը։

Շատերը մեր վրա ուշադրություն անգամ չէին դարձնում, բայց մենք գիտեինք, զգում էինք, տեսնում էինք Վեհի ամեն ինչ ասող հայացքը։ Նա վեր կացավ հուզված, և սկսեց Ավետարանից. «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ»։ Ապա շարունակեց. «Այսօր, ուրախության այս սեղանի շուրջը, տեսնում ենք սքեմավորների մի նոր շարան։ Նոցա դեմքերը զվարթ են, երիտասարդ են նոքա և առույգ, համոզմունքով ոտք դրած Հայ Եկեղեցու սեմին։ Նոր շնչով, նոր զգացմունքներով սոքա պիտի շարունակեն մեր մեծ գործը և պայծառացնեն Ս. Էջմիածինը։ Տարիներ առաջ ես երազում էի այս պահը, երբ համարյա միայնակ, մի քանի միաբանների հետ սկսեցի մեծ գործի այս մեծ սկիզբը։ Այսօր ես հոգեպես մխիթարված եմ, տեսնելով վերածնված Հայ Եկեղեցու այս նոր պատկերը»։

Վեհափառ Հայրապետը միշտ լավատես էր, վհատություն կամ հոռետեսություն մենք չենք նկատել Նրա մոտ։ Զարմանում էինք, թե որտեղի՞ց էր այդքան կենսախնդություն 80-ամյա այդ ծերունու մոտ։ Նա վարակում էր բոլորիս իր այդ առույգ կենսախնդությամբ։ Մեկ անգամ միայն Նա հանգուցյալ Տ. Նիկոլ քահանային ցույց էր տվել Ս. Գայանեի վանքում երջանկահիշատակ Խորեն Ա Կաթողիկոսի գերեզմանի կողքի աղատ տարածությունը ասելով. «Տ. Նիկոլ, այդ աղատ տեղը ինձ համար է, լավ միտքդ պահիր...»։ Տ. Նիկոլը մեզ պատմում էր և մեր հավատալը չէր գալիս, որ այդ մարդը երբևիցե իր մահվան մասին մտածել է։

Ընդհանրապես, երբ երկար ապրելու մասին Նրա մոտ խոսք էր լինում և Իրեն ցանկանում էինք երկար տարիներ, Նա ասում էր. «Դուք աղոթեցեք, որ ես ապրեմ, մենք միասին դեռ շատ ճամբա պիտի անցնենք»։ Եվ հետո ավելացնում էր. «Ես չեմ ուզենա ապրել գիտե՞ք երբ. երբոր Իմ բանականությունն սկսի ճիշտ չգործել, այն ժամանակ ոչ մեկին պետք գալ չեմ կարող, Աստուծուց Իմ կյանքի համար խնդրածս այս է. Տե՜ր Աստված, ավելացրու Իմ կյանքի օրերի վրա այնքան, որքան որ ես պետք պիտի գամ Իմ ազգին, Իմ ժողովրդին և Հայրենի Եկեղեցուն. ավելին ինձ պետք չէ, և ես հավատում եմ, որ Աստված ավելացնում է այն մարդկանց կյանքը, որոնք պետք են իրենց ժողովրդին»։

Մի վերին աստիճանի փայփայված տենչներ երջանկահիշատակ Հայրապետը և միշտ կրկնում էր. «Հայ ժողովրդին մի տեղ հավաքված տեսնեմ, աչքերս նոր փակեմ»։ Եվ հաշվումներ կատարելով, հայերի թիվը կլորացնում էր և ասում, թե մի տասը տարի հետո այսքան կլինի։ Ապա ուրախությամբ ժպտում էր ավելացնելով. «Մեր հույսը, մեր վերջին հավաքատեղին Երևանն է, Երևանը եթե վերանա, հայությունը կորած է»։

Եվ այսօր, մեր սիրեցյալ Հայրապետի մահվանից տասը տարի հետո, ինձ բախտ է վիճակվել, որպես ականատես աշակերտի, ոգեկոչել Նրա հիշատակը, որը նվիրական է յուրաքանչյուր ճեմարանականի համար։

Ես երջանիկ եմ զգում ինձ այս պահին ոչ թե նրա համար, որ անցած հուշերս եմ մտորում, այլ նրա համար, որ ամբողջ էությունս համակվել է մեծ երախտագիտության անխառն մի զգացումով դեպի այն մարդը, որն այնքան ջանքեր և աշխատանք թափեց Մայր Աթոռում, Հայ Եկեղեցու պայծառության համար և բոլորիս կաղապարելու և հայրենասիրական շնչով իսկական մարդիկ դարձնելու գործում։ Իսկ երախտագիտությունը մեծ զգացում է, որը երջանկացնում է մարդուն։

Այսօր, երջանկահիշատակ Հայրապետի պայծառ հիշատակի առջև, այդպիսի երջանկացնող երախտագիտությամբ իրենց գլուխներն են խոնարհում Նրա բոլոր սաները, որոնք իրենց ամբողջ կյանքում իրենց սրտի մի անկյունում հավատարմորեն ու գուրգուրանքով կպահեն Գևորգ Զ Կաթողիկոսից ստացած կրոնական ու հայրենասիրական շունչը, Նրա հայրական բարի հորդորները։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։



Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

(Երանաշնորհ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի հիշատակին)

Դու դարերի խորքից եկած մեր հավատի
Մեծ սյուներից մեկը եղար.
Մայր Աթոռի համար բացիր ճամբան փառքի՝
Ճեմարանը լուսո կաճառ:

Ու մեր նախնյաց մաքրամաքուր սիրով անշեջ,
Եղար հոգու մեծ սերմնացան,
Սերմերը քո աննյութական՝ մեր հոգու մեջ
Մշտադալար ծառեր դարձան:

Ու քո ոգին ավգանվեր, ոգին քո մեծ,
Շաղված ոգով Վարդանանքի,
Սաներիս էլ Ճեմարանիդ սիրով այրեց,
Կամարի տակ Մայրավանքի:

Ոգին էլ քո մի կաճառ էր անձեռակերտ,
Ճամբի վրա մեր՝ լույս-փարոս,
Եվ անբաժան ճամբորդում է մեր մեջ, մեկ հետ,
Հայոց լեվվով հավերժախոս:

Ո՜վ մեծագործ Դու Հայրապետ ավգիս հայոց,
Պատգամը քո մեր սրտերում
Պահում ենք սուրբ, որպես անմար կրակ ու բոց,
Որպես անմեռ երգ ու երդում:

Դու վանգի պահին ինչպես հովիվը քաջ՝
Արծվահայաց խոյացար վեր,
Եվ գունդն անվամբ Սասնա Դավթի մղվեց առաջ
Դիրացանքայլ ու անվեհեր:

Դու դարավոր մեր հավատի սուրբ տաճարից,
Սրտի ձայնով քո հայրական,
Տուն կանչեցիր հողագնդի ամեն ծայրից
Որդիներիդ աստանդական:

Ու սուրբ սերը Էջմիածնի դարձած արյուն
Երակներում հայ պանդուխտի՝
Վերջին անգամ գտան նրանք հայրենի տուն,
Էջմիածին եկան ուխտի:

Աշխարհով մեկ, խաղաղության համար անխոց,
Ձայնն առաջին եղար ապատ,
Խաղաղություն, որ պետք էր քո ավգին հայոց
Ավգերի մեջ՝ ամենաշատ:

Անթառամ է սաներիդ մեջ պատգամը քո,
Բարձր սարի ձյան պես անհաս,
Պատգամդ սուրբ կպահեմ միշտ կրծքիս ներքո,
Թեև սքեմ չունեմ վրաս:

15 ապրիլի 1964 թ.
ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 1-ին, չորեքշաբթի, *զատկական արձակուրդներից հետո, Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները։*

Դասավանդությունները կշարունակվեն մինչև մայիսի 20-ը, իսկ տարեվերջի քննությունները կսկսվեն հունիսի 1-ին։

* *
*

Ապրիլի 4-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, Վեհափառ Հայրապետը դասախոսեց «Բուլղարահայ գաղութը այսօր» թեմայի շուրջ, Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության համար։ Դասախոսությունը լսվեց հետաքրքրությամբ։*

* *
*

Ապրիլի 5-ին, Կրկնազատիկ (Նոր Կիրակէ), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը «Զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի» բնաբանով։*

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների ընթացքում նահատակվածների համար։

* *
*

Ապրիլի 7-ին, երեքշաբթի, *«Աւետումն Ս. Աստուածածնի»։ Օրվա տոնի առթիվ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։*

* *
*

Ապրիլի 12-ին, կիրակի (Աշխարհամատրան, Կանաչ Կիրակէ), *Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և սուրբ պատարագի ընթացքում կուսակրոն քահանա ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի 1962 թվականի շրջանավարտ բարեշնորհ Կարապետ սարկավագ Սերայդարյանին, որը վերանվանվեց Տ. Գևորգ աբեղա։*

Խարտավիլակության պաշտոնը կատարեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Շաբաթ երեկոյան կատարվել էր ընծայության քահանայական կոչման կարգը։

Ձեռնադրիչ սրբազանը օծումից հետո խոսեց բովանդակալից խրատական։

Ձեռնադրության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամերգությունից առաջ կատարվեց վեղարի տվչության կարգը։

Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը ծնվել է 1938 թվականին Բուխարեստում, ծնողների հետ հայրենիք է ներգաղթել 1948 թվականին, 1956 թվականին ընդունվել է Հոգևոր Ճեմարան, 1962 թվականին ավարտել լսարանական բաժինը և 1963 թվականին ձեռնադրվել սարկավագ։

Հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղան հավատավոր, աղնիվ, իր կոչման նվիրված երիտասարդ հոգևորական է։

Նորընծան այժմ վարում է Մայր Տաճարի դասապետի և Մայր Աթոռի դանձապահի պաշտոնները։

* *
*

Ապրիլի 18-ին, շաբաթ, *Վեհափառ Հայրապետը Երևանում ենթարկվեց վիրաբուժական թեթև գործողության, որն անցավ շատ բարեհաջող կերպով։*

Նորին Ս. Օծությունը, կատարելապես ապաքինված, հիվանդանոցից Մայր Աթոռ վերադարձավ ապրիլի 30-ին։

* *
*

Ապրիլի 19-ին, կիրակի (Կարմիր Կիրակէ), Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

* *
*

Ապրիլի 26-ին, կիրակի, «Տօն երևման Սրբոյ Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Այսօր նշան սուրբ խաչին ի յերկնից երևեալ, եկայք նոր ժողովուրդք միաբանութեամբ զՏէր օրհնեցէք» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան հատուկ պաշտոն 1915 թվականի ապրիլյան մեծ եղեռնի նահատակների խնկելի հիշատակին։

* *
*

Ապրիլի 27-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Հնդկաստան մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սրբազանը, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, մայիսի 20-ին Քոտայամում ներկա կլինի Հնդիկ Մալաբար Եկեղեցու նորընտիր Կաթողիկոս Նորին Սրբություն Տիմոթեոսի գահակալության հանդեսին։

Այնուհետև գերաշնորհ սրբազան հայրը կայցելի Հնդկաստանի և Ավստրալիայի հայկական գաղութներին, տանելով նրանց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Ե

ԴԱՐ ՄԸ ԻՐ ԵՐԿՈՒՆՔԻՆ ՄԵՋ

1. ԴԱՎԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԿԲԱՆԱՆ ԴԱՐԸ

Ամոթով էինք դագաղը դրեր տագնապի դարը. զայն փակեր էինք դժբախտ պահու մը, երբ դավանական վեճերը իրենց ամենեն ամեհի փուլն էին մտեր, շատ մը սև էջեր ավելցնելու համար հայոց պատմության արդեն մռայլ շրջանին մեջ։

Մարդ կամենա երբոր կրանա հիմա նաև այս դարը։ Հոգերը, զորս իր նախորդեն ժառանգած է ան, կշարունակեն դեռ խռովել Պոլիսը, և միշտ դավանական վեճերն են անոնց կորիզը։ Հռոմն ու իր գործակալները աշխույժ են առավել քան երբեք. եթե չհաջողեցան Հայ Եկեղեցին ծունկի բերել անցյալ դարուն, հիմա զայն ճեղքելու փորձը կընեն, իրենց բովանդակ ուժերը լարած։

Դարը, զոր կթևակոխենք, սփոփիչ պահեր ալ բազմիցս արձանագրած է անշուշտ։ Հակառակ ալեկոծությանց, որոնք անպակաս եղած են իր ծոցեն, հայ ժողովուրդը բացառիկ ճիգեր ալ փորձած է այս դարուն և իրեն համար երկունքի դար մը եղած է ան։ Եվ այնուամենայնիվ դավանական վեճերը եկած են ամլացնել այդ ճիգերեն շատերը և անդադար խռոված երկունքի այդ դարը։ Շատ ավելի արդասաբեր կըլլար հայ ժողովուրդի փորձած վերելքը, եթե ան ստիպված չըլլար սերունդներ մսխել ունայն վեճերու համար, և անոնց աչքերուն ու մտքին լույսը չքամեր սնոտի մարդանքներու սիրույն։

Այնպես որ դավանական կռիվներով ստիպված ենք բանալ նաև այս դարը։ Կաթոլիկ քարոզչության ամենեն հանդուգն փորձերուն շրջանն ենք հասած, երբ կաթոլիկ գործակալները այլևս սկսած են խտիր չդնել միջոցներու միջև։ Անցնող դարուն անոնց բովանդակ ճիգը կայացեր էր հայ հոգևորականությունը որսալու և Հայ Եկեղեցին ներսեն պառակտելու իրենց փորձերուն մեջ։ Հիմա արդեն զանգվածներու մեջ թափանցելու, հայ ժողովուրդը ներսեն ճեղքելու շրջանն է։ Նախորդ դարու փորձերը աղետ բերին հայ ժողովուրդին։ Բարիք չէին կրնար խոստանալ նորերը ևս։

Մեր կսկիծը ավելի խոր կդառնա, քանի մոտենանք մեր իսկ օրերուն։ Կիրքն ու ատելությունը շարունակված կգտնենք ավելի նոր սերունդներու օրով ալ, երբ հայ ժողովուրդի շատ ավելի գերագույն շահերը պետք է վաղուց լռեցուցած ըլլային զանոնք մարդոց հոգիներուն մեջ։ Ոչինչ ավելի տառապեցուցած

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № № Թ-ից, ԺԲ-ից, 1963 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է—Ը-ից, Թ—Ժ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1964 թվականի № № Ա-ից և Դ-ից։

է հայ ժողովուրդը քան դավանական պայքարը։ Շատ ավելի պտղաբեր կըլլար երկունքի դարը առանց այդ կռիվներուն։

Դավանական վեճերը ավելի բուռն թափ պիտի ստանային սակայն Ղափանցիեն հետո։ Վավերաթուղթերուն մեջ, զորս թուրք պատմագիր Ահմեդ Ռեֆիկ լույս ընծայեց հին դարերու Պոլսո կյանքին պատկերը տալու համար, կա սուլթան Մուստաֆա Բ-ի ուղարկած մեկ ֆերմանը, որ, Ֆերիոլի Պոլիս ժամանելեն քիչ առաջ տրված, կպարզե, թե ինչ համեմատություններ ստացած էր կաթոլիկ միսիոնարներու գործունեությունը Պոլսո և դավառներու մեջ, և ի՛նչքան գրգռություն ստեղծած էին կաթոլիկության հարողները լատին եկեղեցիները հաճախել ստիպելու անոնց փորձերը։

1697 մայիս 22—31 (1108 Զիլքադե 1—10) թվակիր այդ ֆերմանին մեջ սուլթանը կըսե.

«Հրաման կարձակվի Պոլսո քայմաքամին և դատավորին, թե՝

Մայրաքաղաքս բնակող հայերը կայսերական բանակատեղիս դիմելով ըսին, թե մինչ իրենք հին օրերե ի վեր իրենց սովոր եղած կրոնական ծեսին համեմատ կընթանան, մայրաքաղաքիս բնակիչներեն Շեշթեմուրօղլու Արկիր, Թութեր-օղլու Արիթոն և Միհալիմ-օղլու Կարապետ անուն անձերը, իրենց հին ծեսը թողած, պապին ազգության կպատկանին և այդ բանին կդրդեն ուրիշներ ևս, ամուսնական և այլ ծեսերու հակառակ կշարժին, և այսպիսով խռովության պատճառ կդառնան։

Ասկե առաջ հայտարարված էր, որ պապին պատկանող ֆրենկները Քիոս կղզիին մեջ այլազան դավաճանության և գրգռության տեղի կուտան, իսկ պապին կողմե ղրկված ինչ-ինչ հոգևորականներ, հանդերձանք փոխած; կթափառին նահանգե նահանգ, հույն, հայ և ուրիշ քրիստոնյաներ կդրդեն իրենց հին դավանանքը լքել և հարիլ ֆրենկ դավանանքին, և այս կերպով պատճառ կդառնան ոչ-իսլամ տարրերու մեջ խռովության և ըմբոստության, ինչ որ հակառակ ըլլալով արքայական կամքիս, հրովարտակ ուղղված էր Դամասկոսի կուսակալին և դատավորին, նույն նահանգին մեջ գտնվող դատավորներուն, գյուղերու սպաներուն, նահանգին երևելիներուն (այան) և գործի մարդոց (իշ էրլերի), որպեսզի եթե իրենց նահանգին մեջ կան ոչ-իսլամներ, որոնք գրգռության հետևանքով իրենց դավանանքեն ելած և պապին կրոնքին հարած են, խստիվ պատվիրվի այդպիսիներուն իրենց հին ծեսին դառնալ, այսուհետև նման գրգռության հանդգնողները ձերբակալվին, որոնց նկատմամբ տնորինվի նվիրական օրենքին նախատեսած պատիժը և այսպիսով վերջ տրվի անոնց գրգռության, միևնույն ժամանակ զգուշություն ըլլա, որպեսզի խաղաղ ապրողները ոտնձգության և կեղեքումի չենթարկվին։

Ինձմե խնդրված ըլլալով այժմ որպեսզի հրովարտակ մը ևս տամ հիշյալ նահանգին ուղղված ձևով և արձանագրության դիմված և հաստատված ըլլալով այդ հրովարտակին բովանդակությունը, ձեզ ևս կգրվի, որպեսզի շարժիք միևնույն կերպով»։

Հոգեբանական այսպիսի պահու մըն էր, որ կբացվեր դարը։

2. «ԵՐԿԱԹԵ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ»

Ընթերցողը թող մեզի ներե, եթե Շնորհաց 1964 թվականին ալ այս խորագիրը կուտանք հատվածի մը, որ պիտի բանա Պոլսո հայոց պատրիարք Ավետիք Եվդոկիացիին նվիրված մեր քանի մը էջերը, այսինքն մարդու մը, որ բեմին վրա հայտնված դավանական վեճերու ամենեն ավելի կրքոտ մեկ պահուն, երբ կաթոլիկ քարոզությունը հայ ժողովուրդի ծոցն էր մխրճեր իր ամեհի թափը, կուգար հայ ավանդության պաշտպան կանգնելու, և իր այդ նախանձախնդրության մեջ, պահ մը կրքով կվարակվեր և ինքը, քավության նոխազ դառնալու համար ի վերջո ճիզվիտներու մոլեգնության։

«Երկաթե դիմակով մարդը» տիտղոսը տվին այս մարդուն, երբ կաթոլիկ հավատաքննությունը հաջողեր էր զայն խլել իր ժողովուրդի ծոցեն, և տանջարանե տանջարան անցնելե հետո զայն, հասցուցեր էր Բաստիլ, ուր արքայական մենամոլությունն ու կրոնական անհանդուրժողությունը կհամախմբեին այն ժամանակ գահուն և կրոնքին թշնամիները, անոնց կապը խզելով այլևս դուրսի աշխարհին հետ։

Ավանդությունը կըսե, թե երկաթե դիմակ մը կանցնեին անոնք իրենց զոհերուն երեսը, որպեսզի անճանաչելի դարձնեն զանոնք իրենց շուրջիններուն ալ, և թե այն օրերուն, երբ հայոց պատրիարքը Բաստիլ էին նետած իր թշնամիները, բռնապետության այս սև որջին մեջ երկաթե դիմակով մարդ մը արդարև կար։ Ավանդությունը երկաթե այդ դիմակին տակ հայոց պատրիարքը ենթադրեց պահ մը։

Եվ այդ օրեն ասդին ամբողջ գրականություն մը ստեղծվեցավ երկաթե դիմակով մարդուն շուրջ, ավելի քան հիսուն հատոր։ Բոլորը կփորձեին խորհրդավոր առեղծվածը լուծել. տ՞ով է ծածկված այդ դիմակին տակ։ Ոչ միայն զայն իրենց նյութ ըրին վիպասանները ինչպես Ալեքսանդր Դյուման, այլ ըուրջ պատմաբաններ ալ, ինչպես էր Միշլեն, ա-

մեկեն վարպետ ճիզվիտներեն սկսյալ, որպիսին էր Հ. Գրիֆե, մինչև լրջալուրջն Վոլտեր։ Ոմանք պարզապես հերքեցին առասպելը, չկարենալով բուն դիմակավորը երևան հանել, ուրիշներ մոլորեցան ենթադրության և երևակայության բավիղին մեջ։

Ամենավերջին գրությունը, որ մեզ ծանոթ է, ֆրանսացի ակադեմական իրավաբան Հանրի Ռոբերի ընդարձակ մեկ հատվածն է, պատմության մեծ դատերուն նվիրած իր հատորներեն մեկուն մեջ[520]։ Հեղինակը կթվի քանի մը տասնյակ դեմքեր, որոնք նույնացված են առեղծվածային երկաթե դիմակով մարդուն հետ։ Երկաթե դիմակով մարդն ըլլալ կարծված են, օրինակ, Լուի ԺԴ-ի եղբայրը Ֆիլիպ, նույն թագավորին ենթադրյալ երկվորյակ մեկ եղբայրը, ինչպես և Դը Վերմանդուա կոմսը, որ թագավորին ապօրեն մեկ զավակն էր, դեմքեր, զորս Լուի ԺԴ իբր թե շահ ուներ Բաստիլի մեջ չքացնելու անհետ։ Բրբև երկաթե դիմակով մարդը կասկածված են նաև Բոֆորի դուքսը, Մոնմութի դուքսը, համբավավոր Ֆուգեն, Ավստրիո Աննա թագուհին ապօրեն մեկ զավակը, զոր ունեցած էր Բուկինգամեն, հայոց Ավետիք պատրիարքը, կարդինալ Մազարենի մեկ զավակը, երիտասարդ տղա մը, որ 13 տարեկանին հանդգնած էր երգիծական երկու ոտանավորներ ձոնել ճիզվիտներուն, նույնիսկ Մոլիեռ, որուն ճիզվիտները չէին ներած Տարտյուֆը գրած ըլլալուն համար, անգլիացի Միլորդ մը, Բուլոնդ անուն ֆրանսացի զորավար մը, Լուի դը Օլդենդորֆ և Ռուստաշ Դանժե անուն ուրիշ երկու անձեր, Մանդուի Շարլ Դ դուքսին նախարար Ռդոլ Մատթիոլին, Շահաբասի ապօրեն զավակը Ջաֆեր, և վերջապես Մարկիոլի անուն մեկը, որ հակառակ հանվանե կերևա բանտային արձանագրությանց մեջ։

Ըստ ֆրանսացի ակադեմականին, ճիշտ է որ Բաստիլի բանտին մեջ արգելափակված են անձեր, որոնք թավիշե դիմակներ կրած են, բայց բոլորովին շինծու կգտնե երկաթե դիմակով մարդու մը շուրջ հյուսված առասպելը, որուն հեղինակը կսեպե նույնինքն Վոլտերը, որ իբրև թե ինքն իսկ հերյուրած է զայն, ավելի ևս մոռալ ցույց տալու համար արքայական ռեժիմը և անոր զոհերը՝ ավելի դժբախտ։

Եթե այնուամենայնիվ «Երկաթե դիմակով մարդը» խորագիրը տվինք մեր այս հատվածին, անոր համար էր, որ այդ խորագիրը մարդոց մտքին մեջ միշտ պիտի հիշեցնե Բաստիլը և հավատաքննության օրերը, զորս ան կխորհրդանշե և որոնց զոհն եղավ պատրիարք մը, իր ունեցած և չունեցած մեղքերը քավելու համար անոր մոռալ պատերեն ներս՝ Արև-Արքային հովանիին տակ։

Բացի ժամանակակից աղբյուրներու մեջ մեզ ավանդվածեն, մեր պատմությունը շատ քիչ բան գիտեր այն դժնդակ շրջանին մասին, որ Ֆերիոլի դեսպանության օրերն եղան Պոլսո մեջ։ Եվ ինչ որ գիտեր, լեցուն էր խեղաթյուրումներով, ինչպես որ առհասարակ բոլոր տեղեկությունները, որոնք կաթոլիկ խողովակով հասած են մեզի այդ օրերուն մասին, և, ավա՜ղ, դեռ ուրիշ շատ օրերու մասին, երբ կաթոլիկ պրոպագանդը եկած է հայ կյանքը խռովել՝ պատմության առջև սրբանալու համար այդ պատմությունը խեղաթյուրելով։

ԺԸ դարու առաջին տասնամյակներու Պոլսո անցքերուն մասին ցանցառ են ժամանակակից հայ աղբյուրները։ Պետք է գոհանանք ձեռագիրներու հիշատակարաններով և տեղեկության այն փշրանքներով, զորս ժամանակ առ ժամանակ մեզ կհրամցնեն Վենետիկի Մխիթարյանները, անոնց աղբյուրն անգամ հաճախ մեզմե ծածուկ պահելով կամ պարագային համեմատ անխնա կտրատելով իրենց կատարած մեջբերումները։

Թուրք աղբյուրներեն շատ բան սպասել պետք չէ. այսուհանդերձ այդ օրերեն կարդ մը ֆերմաններ հասած են մեզի, որոնք պաշտոնական շրջանակներու շահագրգռությունը կլուսաբանեն գեթ. իսկ թուրք պատմիչները արևելյան երևակայությունը միշտ խառնած են իրենց արձանագրած փաստերուն։

Օտար ճամբորդներ այդ օրերուն շատ չկան, և եղածներն ալ շատ ժլատ են մեր մասին. բացառություն է անոնցմե մեկը, որ ավելի առատաձեռն է տված իր տեղեկությանց մեջ[521]։

Ճիշտ է, որ Ավետիք պատրիարքի շրջանը մեզ լուսաբանելու համար մեզ օգնության հասավ նաև իր իսկ ձգած ինքնակենսագրությունը։ Այս ինքնակենսագրությունը շատ մը դեպքեր և թվականներ կճշտե անշուշտ և մեզ կպարզե «ճանապարհ խաչի»-ն, ուրկե անցավ Ավետիք Եվդոկիացին իր առևանգումեն մինչև իր անփառունակ վախճանը։ Բայց մարդ ստիպված է հաճախ կասկածել այդ ինքնակենսագրության մեջ պատմված դեպքերուն վրա։ Գրված պահու մը, երբ իր հոգեկան տրամադրությունները արդեն լրիվ քայքայված էին կաթոլիկ հավատաքննության թաթին տակ և երբ ամեն զոհողության ստիպված էր հանձնառու ըլլալ արևու լույսին

---

520 Henri Robert, „Des grands procès de l'histoire„, Paris, 1925, p. 87—122,

521 La Matraye, „Voyage en Europe, Asie et Afrique„, La Haye, 1727.

ելելու համար, գոնե կյանքին վերջին օրերուն, կարելի չէ հավատալ անկեղծությանը ոչ իր դարձին, ոչ ալ իր ինքնակենսագրության մեջ տեղ-տեղ սպրդած բռնազբոսիկ արտահայտություններուն։

Ավետիքի ինքնակենսագրությունն ու հիշատակարանը հատուկ զննության նյութ դարձուց Մ. Բրոսե Պետերբուրգի պատմական գիտության ընկերության առջև 1873-ին ներկայացուցած իր զույգ մը զեկուցումներով[522], ուր ֆրանսերենի վերածած էր Ավետիքի գրությունները։ Անոնք նյութ եղան և այդ շրջանով զբաղող հայ բանասերներուն, շատ բան փոխելով արդեն գիտցվածներեն։

Նույն այդ տարիներուն էր, որ լույս տեսան երեք կարևոր գրքեր, որոնք եկան լուսաբանելու շրջան մը, զոր կաթոլիկ աղբյուրներե կճանչնայինք լոկ։ Նախ լույս տեսավ 1870-ին Մարիուս Տոպինի գիրքը «Երկաթե դիմակով մարդ»-ուն մասին[523] և նույն տարին Վարենբերգ լույս ընծայեց Ֆերիոլի թղթակցությունները[524]։ Տասնյակ մը տարի հետո էր, որ Ռավեսոն պիտի հրատարակեր Բաստիլի արխիվը[525]։ Երեք երկեր, որոնք զիրար կլրացնեին, փաստերու հեղեղին տակ լուսաբանելու համար Հայ Եկեղեցվո դժնդակ մեկ պահը։

Մարիուս Տոբինի գիրքը մանավանդ կոչված էր Ավետիք պատրիարքի ապրած բովանդակ ողբերգությունը պատմության հանձնելու և ան թարգմանվեցավ իսկույն հայերենի[526], այնուհետև ատաղձ դառնալու համար բոլոր անոնց, որոնք զբաղեցան ԺԸ դարու առաջին երկու տասնամյակներու դեպքերով։

Տոպինի մեզի տված փաստերը բարեբախտաբար ուժ ստացան ուրիշ աղբյուրներե ալ, և Հայ Եկեղեցվո մեծ պատմագիրը՝ Օրմանյան, առավելապես այդ փաստերուն կկոթնի, քայլ առ քայլ հետևելու համար Ավետիք պատրիարքի ալեկոծ կյանքին և Ֆերիոլի գործած շահատակությանց, չենք գիտեր ինչո՞ւ մատչելի եղած չըլլալով իրեն այն քանի մը մյուս աղբյուրները, զորս հիշեցինք։

Տոբին իր գրքով, զոր «Երկաթե դիմակով մարդը» տիտղոսած է, այնուամենայնիվ թանկագին ուղեցույց մըն է բոլորիս համար, որպեսզի ճանչնանք խաչի այն դժնդակ ճամբան, ուրկե քալեց Ավետիք Գողգոթա հասնելու համար։

Ավետիք Եվդոկիացին Հայ Եկեղեցվո պատմության մեջ այլևս սոսկ դեմք մը չէ։ Ան կխորհրդանշե ամբողջ շրջան մը՝ շրջանը քրիստոնյա եկեղեցվո մը արշավանքին ուրիշ եկեղեցվո մը սեմեն ներս, և փոքր ժողովուրդի մը խոլ մաքառումին՝ իր պապերուն հավատքը պահելու համար։ Պատմությունը թերևս օր մը բնավ չհիշե մեղքերը, զորս ժամանակակիցները կվերագրեն Եվդոկիացիին, և հանձին անոր, սերունդներուն փոխանցե դեմք մը լոկ, զոր կաթոլիկ հավատաքննությունը խլեց Հայ Եկեղեցվո ծոցեն, զայն դիակի վերածելու և այդ դիակը շահագործելու համար օր մը։

3. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱԹՈԼԻԿ ԳՐՈՀԻՆ ԱՌՋԵՎ

ԺԸ դարուն բոլորովին նոր կերպարանք ստացեր էր կաթոլիկ գրոհը։ Նախորդ դարուն հաջողած կորիզ մը կազմել հայ ժողովուրդի ծոցին մեջ, հիմա կփորձեր ամրացնել շահված դիրքերը։

Ճիզվիտներն էին, որոնք այս դարուն ևս կղեկավարեին կաթոլիկ գրոհը, այժմ տարբեր գործելու եղանակ որդեգրած քան նախորդ դարուն։ Դեմ էին անոնք, առանց այլևայլի, որևէ հասկացողության հերձվածող հայերուն հետ։ Կոթնած Հռոմեն ստացած իրենց հրահանգներուն, անդիջող մնացին միշտ անոնք, և խափանեցին հասկացողության ամեն փորձ։

Ճիզվիտներն էին հետևաբար, որ ամեն միջոց փորձեցին արգիլելու համար հայ կաթոլիկներուն Հայ Եկեղեցի հաճախել։ Անոնք դեմ եղան նաև, որ հայ կաթոլիկները իրենց սեփական աղոթատեղիներն ունենան։ Ըստ անոնց, ջերմեռանդ կաթոլիկ մը Լատին Եկեղեցին միայն պետք էր հաճախեր և անդրդվելի մնացին իրենց այդ տեսակետին մեջ։

Կաթոլիկ գրոհին նոր շրջանը այն տարիներն են, երբ Պոլիսը խռովեցին հայ կաթոլիկներու ծիսակատարությանց շուրջ հարուցված վեճերը, որոնք նվազ բուռն չեղան մարդոսներու փորձերեն հայ ժողովուրդի ծոցը թափանցելու համար։

Բելին ԺԸ դարուն Պոլիս գործող ճիզվիտներուն մեջ կմատնանշե մասնավորապես հայր Ժակ Կաշո անունով մեկը, որ «հայոց հայր» տիտղոսին հետ մեկտեղ կկրեր նաև «ստրուկներու հայր» մակդիրը։ «Ան էր, որ Աստուծմե բացառիկ տաղանդ ստացած էր հայոց ազգը փրկելու։ Միմիայն 1712 տարվան մեջ մոտ 400 հերձվածողներ փրկեց և միայն ինքը 3 000 հոգի խոստովանեցուց։ Հաջորդ տարին, 1713-ին, դավանափոխ եղող հերձվածողնե-

---

522 M. Brosset, I, „Le prétendu Masque de fere arménien, ou autobiographie d'Avétik, patriarche de Constantinople, avec pièces justificatives officielles, II „Histoire diplomatique du pafriarche arménien Avétik de Constantinople„.

523 M. Topin, „L'homme en masque de fer", Paris, 1870.

524 Varenberg, „Correspondance du marquis de Ferriol", Anvers, 1870.

525 Ravaisson, „Archive de la Bastille", 1886.

526 Մարիուս Տոբին, «Երկաթե դիմակով մարդը», թրգմ. Կարապետ Ութուճյան, Կ. Պոլիս, 1890։

րուն թիվը կրկինը եղավ։ Նույն այս հայր Կաշոն էր, որ ներշնչեց Մխիթարի և ուրիշներու՝ համախմբվիլ միակ կազմակերպության մը մեջ, միակ կանոնադրության մը տակ, որ իր հեղինակությունն էր գոնե մեծ մասամբ, և նպաստեց այս կերպով Մխիթարյան միաբանության հիմնարկման»[527]։

Կաթոլիկ գրոհին դիմագրավելու համար Հայ Եկեղեցին անպատրաստ էր եղեր ԺԷ դարուն։ Դեռ անկարող թափանցելու վտանգին, որ այդ գրոհը հայ ժողովուրդին կսպառնար, հայ հոգևորականությունը չէր կրցած թումբ կանգնել գրոհին առջև և թողուցեր էր, որ կաթոլիկ քարոզությունը տակավ հող շահի հայ ժողովուրդի ծոցին մեջ։ Ավելին. այդ քարոզությունը խայծերով էր եկեր և պատրանքներով օրորեր հայ հոգևորականության ու հայ ժողովուրդի միամտությունը։ Մարդորսները հայ ժողովուրդին կուգային Ավետյալ երկրի բոլոր բարիքները խոստանալով, և չկա ավելի զորավոր հուսութք տառապող ժողովուրդներուն համար, քան սպեղանի խոստանալ անոր ցավերուն։ Ճիշտ այդ սպեղանին էր, որ խոստացեր էին Հռոմի գործակալները։

Բոլորովին տարբեր էր արդեն ԺԸ դարը։ Հայ հոգևորականությունը սթափած ըլլալ կթվեր երբեմնի իր պատրանքներեն։ Խայծերը պտուղ չէին տվեր և ոչ ալ հայ ժողովուրդի դատը շահեր էր բան մը։ Ասկե զատ, Հռոմի գործակալներուն նոր ռազմավարությունը ամեն գնով զգետնելու համար հայ ժողովուրդը իր հավատքին մեջ, ինքնապաշտպանության տեսակ մը բնաղդ ծավալեր էր հայ հոգևորականության շարքերեն ներս։ Հայ հոգևորականությունը կսկսեր իր կոչումին գիտակցիլ և ավելի ջերմորեն գուրգուրալ ավանդության վրա, որոնց պաշտպանության հոգը կզգար այլևս որ իրեն է միայն հանձնված։ Այնպես որ ԺԸ դարուն Հայ Եկեղեցին ավելի ամուր մնաց կաթոլիկ գրոհին առջև։ Անշուշտ տատամսումներ ունեցավ նաև այս դարը և կաթոլիկ քարոզությունը որսեր քաղեց հայ հոգևորականության շարքերեն։

Մայր Աթոռը այս դարուն ավելի անհողդողդ մնաց կաթոլիկ պրոպագանդին առջև, քան եղեր էր դար մը առաջ։ Եվ արդեն ան շատ ալ թիրախ չդարձավ լատին քարոզիչներու գրոհին։ Այնպես որ այլևս չենք հանդիպիր այնպիսի կաթոլիկոսներու, որոնք ընդառաջ գացած ըլլան պապական աթոռին, ինչպես որ եղան նախորդ դարերուն, երբ դեռ այն միամտությունը կար, թե հայ ժողովուրդին բարիք կրնար գալ Հռոմի հետ մերձեցումեն մը։

Այս դարուն ավելի ամուր մնաց նաև Պոլսո Աթոռը։ Ճիշտ է, որ դարուն սկիզբը քանի մը դժգույն դեմքեր նստեցան այդ Աթոռին վրա, ինչպես էին, օրինակ, Մելքիսեդեկ Սուրբին և Մխիթար Քուրդիստանցին, որոնք հաճոյակատար վարմունք ունեցան դեպի կաթոլիկները, անոնց առջև նույնիսկ բանալով Հայ Եկեղեցվո բեմը։ Բայց անոնք հեռու են դարը հատկանշելե։ Իրենց ուրալիր վերաբերումը կաթոլիկներուն հանդեպ անշուշտ որ զանոնք պահ մը հույսերով օրորեց և նույնիսկ հանդուգն ալ դարձուց, բայց անոնք չկրցան ավանդություն ստեղծել։ Հայ Եկեղեցվո բեմը դարձյալ խլվեցավ դասալիքներեն և անոնք չհաջողեցան այլևս Հայ Եկեղեցին հարվածել իր իսկ խորանին վրա։

Այս «բարյացակամ» պատրիարքներու կողքին, Պոլսո Աթոռը խստաբարո դեմքեր ալ տվավ, որոնք կաթոլիկ գրոհին դեմ Հայ Եկեղեցին պաշտպանելու իրենց մտահոգությունը ծայրահեղության ալ տարին։ Եփրեմ Ղափանցին և Ավետիք Եվդոկիացին ադոնցմե եղան։

Ավետիքի առևանգումեն հետո, ցնծության պահ մը ապրեցավ կաթոլիկ պրոպագանդը։ Այնպես հուսաց ան, որ բերդը կքայքայվի տակավ։ Այս անգամ ևս հաշվի չէր առած ան հայ ժողովուրդը։ Ինչ ալ եղած ըլլային Ավետիքի մեղքերը, հայ զանգվածները, հանձին անոր, նահատակ մը ողբացին իսկույն։ Իր թշնամիները զայն խլած էին, անոր հետ Հայ Եկեղեցին ևս խորտակած ըլլալու հաճույքին համար։ Ավետիք Բաստիյլ տարված էր, բայց ասդին կշարունակեին շնչել հայ ավանդությունները։ Կաթոլիկ պրոպագանդը անգամ մը ևս ձախողած էր։

Եվ այնուամենայնիվ չխաղաղեցավ Պոլիսը, Ավետիքի չքացումեն հետո ալ։

Հինգ պատրիարքները, որ տասնամյակի մը ընթացքին Ավետիքի հաջորդեցին Պոլսո Աթոռին վրա,—Մարտիրոս Երզնկացի (1706), Միքայել Խարբերդցի (1706—1707), Սահակ Արուչեխցի (1707 և 1708—1714), Հովհաննես Զմյուռնացի (1707—1708) և Հովհաննես Գանձակեցի (1714—1715),— առավել կամ նվազ դժգույն տիպարներ եղան, բացի մեկեն։

Անոնցմե Հովհաննես Զմյուռնացին էր միայն, որ իր կարճ պատրիարքության միջոցին տեր կանգնեցավ Եփրեմ Ղափանցի և Ավետիք Եվդոկիացի պատրիարքներու ավանդություններուն։

Կոմիտաս քահանայի նահատակությունը ամենեն ողբերգականն եղավ այդ բոլորին մեջ. ան զոհն եղավ պարզապես դժբախտ մթնոլորտին, զոր ստեղծեր էր կաթոլիկ արշավանքը Պոլսո հայության ծոցին մեջ։

---

527 Belin, „Histoire de latinité de Constantinople„, Paris, 1894, p. 267.

Դժնդակ եղավ կռիվը, զոր Հայ Եկեղեցին մղեց այդ դարուն, պաշտպանելու համար իրեն։ Իր ազազուն ուժերուն դեմ ճիզվիտները զրահված կուգային, և կուգային ամեն գնով հաղթելու ուխտով։ Միջոցներու միջև խտրություն չդնելու իրենց վաղեմի նշանաբանը պիտի կիրարկեին նաև Պոլսո մեջ։

Վանքերը, զորս կաթոլիկ միաբանությունները հաջողեր էին Պոլսո մեջ հիմնել, մեյմեկ պատնեշ էին կաթոլիկ պրոպագանդին համար։ Այնտեղեն է, որ իրենց թույնը կտարածեին զանգվածներուն մեջ։ Ս. Բենուայի վանքը, օրինակ, այդպիսի ամրոց մը դարձավ Հռոմի գործակալներուն համար մեր նյութը կազմող դարուն։ Հրոճարակ եղած 1696-ին, հաջողեր էին զայն վերաշինել հաջորդ տարին իսկ։ «Այս նոր եկեղեցին,— կըսե կաթոլիկ շարժման պատմիչը,— իր գեղեցիկ օրերն ունեցավ, և հոն գործող հայրերը բարվույն կծառայեին փույթեռանդն, բայց մանավանդ դարձի բերելու համար հերձվածող հայերը»[528]։

Հայր Տարիյոն 1712-ին կեդրոն ուղարկած իր տեղեկագրին մեջ կպարծենա. «Կաթոլիկ դավանանքին բոլոր պարտականությունները կկատարենք այնպիսի կատարյալ ազատությամբ մը, որ իբրև թե ամենաքրիստոնյա քաղաքներու մեջ ըլլային։ Ֆրանկ, հույն և հայ երեք դավանանքներե հավատացյալներու բազմություն մը անոնց կհաճախե փոխնիփոխ։ Հայր Պորտիե, մեր առաքելության մեծավորը, հաստատեց, ամեն երկուշաբթի օրվան համար, երկու հրահանգումներ թուրք լեզվով, մեկը առտուն, մայրապետներու, այսինքն հայ կույսերու համար, որոնք Աստուծո նվիրված են և իրենց ծնողքներուն մոտ խիստ քաշված և ապաշխարող կյանք մը կվարեն. երկրորդը, բանախոսությանց ձևով, երիտասարդ հայ սարկավագներու և կիսասարկավագներու համար, որոնք կոչված են ավելի հետո քահանա կամ վարդապետ դառնալու»[529]։

Այս բոլորին դեմ շվարած էր Հայ Եկեղեցին։ Հեղեղը կեցնելու համար, խեղճ հայ պատրիարքներուն ուժերը բավական չէին։ Ոչ մեկմ միջոցները կրցեր էին կաթոլիկ արշավանքին թափը խորտակել, ոչ ալ խիստ, հաճախ նույնիսկ ծայրահեղ միջոցներով կարելի էր եղեր թումբ շարել հեղեղին առջև։

Անհրաժեշտ էր ճիզվիտ ղենքերուն դեմ համապատասխան ղենքերով կռվիլ, փաստին դեմ փաստ ցուցնել, ու գրքերուն դեմ գրքերը հանել։ Եվ ադոր համար անհրաժեշտ էին խոսքի ու գրչի ճարտարության տեր մարդիկ։ Իսկ Պոլիսը ադոնցմե չուներ։ Պետք էր որ իրեն օգնության գային վանքերը։

4. «ՋՈՒԽՏԱԿ ԱՄՐԴՈՂՑԻՆԵՐԸ»

Հայ ժողովուրդին համար ամրոց ու ապաստան եղան վանքերը անոր պատմության շատ մը դարերուն։ Երբ հայոց երկիրը, ոտքի կոխան դարձած բարբարոսներու, քարուքանդ կըլլար, շվարած բազմությունները հաճախ ուրիշ տեղ չունեին ապաստանելու, բայց եթե վանքերու պարիսպներեն ներս։ Թշնամին հաճախ կանգ առավ վանքերու պատերուն առջև և չհամարձակեցավ սուրբերուն դպչիլ։ Ու հայ ժողովուրդը ուխտի վազեց միշտ վանք, սուրբերուն ոտքը, ցավերուն դարման մուրալու համար, իր սուգին՝ սփոփանք, բայց և տոնելու իր ավանդությունները։ Մատաղ տարավ սուրբերուն, բայց և դավուլ-զուռնայով, երգով ու պարով լուսցուց ուխտի գիշերը։ Խունկերու բույրին խառնեց իր քեֆը, և մինչդեռ ներսը «Եկեսցէ» կըլլար, ան ասդին կերգեր բոցերուն դեմը։ Վանքերն էր որ փրկեցին հայ ավանդությունները, ու ցավերու մեջ գալարվող հայ ժողովուրդը գինովցուցին այսպես տարին անգամ մը։ Բայց և հայ ժողովուրդի հոգեկան գանձերը պահպանեցին վանքերը։ Անոնց նկուղներուն մեջ պահվելով է որ փրկվեցան տասնյակ հազար հայերեն ձեռագիրները, որոնց ծոցին մեջ հայ հոգին կպատմեր դարավոր իր ճիգը։ Ճիշտ է, որ անթիվ գլուխ-գործոցներ չքացան դարերու ընթացքին զիրենք պատսպարող վանքերուն հետ մեկտեղ, սակայն ինչ որ ճողոպրեցավ աղետներեն, դարձյալ մեծ մասամբ զայն վանքերուն կպարտինք։ Հայ ժողովուրդը վանքերուն կպարտի զինք իր նախնիքներուն կապող ոսկի թելերը, ու հպարտությունը, որով ան հիմա մարդոց կնայի, իր մագաղաթները անոնց ցույց տված ժամանակ, և երբ դիտե անոնց զմայլանքը գոհարներուն առջև, զորս ստեղծած են հայոց որդան կարմիրն ու որդան կապույտը։

Հայոց վանքերը հաճախ եղան նաև տքնության բույներ։ Այնտեղ էր, որ մարդիկ, աշխարհը, դուրսը մոռցած, ճմլեցին իրենց ուղեղն ու սիրտը, ճրագի մը վտիտ լույսին տակ։ Շատ վանքերու մեջ անշուշտ պորտ բուծանեցին վանականները, կամ աշխարհին կռնակ դարձուցած, ճգնելու գացին հաճախ անոնց մեջ։ Բայց նույն այդ վանքերուն պարտական է հայ ժողովուրդը իր մտքին վաղքը դարերուն մեջեն և անոր ստեղծած օվասիսները զինք պարուրող անապատին մեջ, իր հոգվույն ճիգը, որ իր շարականներն ու մեղեդիներն ստեղծեց, Մեսրոպյան տառերն

[528] Բելին, հիշված աշխատությունը, էջ 264։

[529] „Choix des lettres édifiantes„, Paris, 1809, V, p. 25.

անմահացուց մագաղաթներուն վրա ու ծաղկեց զանոնք, այնպիսի զմայլելի ճաշակով մը, որ հաղիվ կսանձեր իր քմայքները։ Հայ վարպետները հայ ոճն էին տվեր վանքին, հայ վանականը ի՛րը տվավ դույներուն և մեղեդիներուն։

Ու նույն այդ վանքերուն մեջ, մութ ու մռայլ խուցերուն ծոցը, հայ հոգին հորիզոն բացավ իրեն։ Հայ վանականը հաճախ ձերբազատուց իր հոգին իր կապանքներեն ու փորձեց թափանցել բնության գաղտնիքներուն։ Աշխարհի խորհրդավոր երևույթներուն մերձենալ համարձակեցավ ան, առաթուր ընելով հաճախ ավանդությունները, որ դինք կկաշկանդեին։ Գործք առաքելոցին հետ Արիստոտելն ալ սերտեց, ու չվախցավ մեկնելու Ծննդոց գիրքը։ Մարգարեները վերլուծած ժամանակ Պյութագորն ալ շմոռցավ, և Ավետարանի պատգամները մեկնաբանելու միջոցին, ճգնեցավ աստղերու գաղտնիքն ալ լուծել։ Զայն չգոհացուցին Դավիթն ու Սողոմոնը իրենց անհուն իմաստությամբ, ու փորձեց ինք ևս մագաղաթին հանձնել ինչ որ իր միտքը կկորզեր իր ճախրանքներեն։ Սաղմոս ու աղոթք չփսփսաց միայն իր խուցը քաշված, այլ խոյթի և վեճի նստավ իր Արարչին հետ, Աստուծո Մայրը իր խուցը կանչեց և անոր բացավ իր հոգին, ու հորինեց տաղեր ալ, որոնց մեջ հոգեկան խոհերու առընթեր, կրաբախեր և սիրտը։

Եվ այդ վանքերեն եկան հայ ժողովուրդին իր եկեղեցվո գրեթե բոլոր կարկառուն ղեկավարները։ Մարզած իրենց միտքը անոնց շրջ պատերեն ներս, և թրծված այնտեղ հայ ավանդությանց բովին մեջ, գացին բազմիլ զանազան Աթոռներու վրա, այդ ավանդությանց պատնեշ փորձելով դարձնել զանոնք ալ։ Հոգևորականներու հսկա թիվին քով, որոնք փոքրավորութենե հասան դիրքերու, միշտ փոքրավոր, հոգվով միշտ բոբիկ մնացած, եղան ալ, որ հմտություն և հետևաբար պատկառանք բերին վանքերեն։ Սքեմ կրող անթիվ մարդոց քով, որոնք կկակազեին կաթոլիկ քարոզիչներուն առջև, վանքերը դեմքեր ալ տվին, որոնք Բարսեղն ու Կյուրեղը սերտած, բայց և ծծած Տաթևացին և Շնորհալին, կհաջողեին ճակատիվ լատին աստվածաբաններեն մուրացված փաստերուն դիմաց։ Թվով թեև դույզն, բայց այդպիսի մարդիկ տվին վանքերը։

Պոլիս դժբախտաբար շատ հեռու էր վանքերեն և շատ երկար ժամանակ վանքեր չունեցավ շուրջը։ Արմաշը մտավոր բույն մը չեղավ ի սկզբան, և անցյալ դարու սկիզբներն էր, որ անկե դեմքեր սկսան գալ Պոլսո Աթոռին, իսկ մեր օրերուն էր միայն, որ ան լծվեցավ նոր առաքելության մը, որ հաղիվ քառորդ դար մը պիտի տևեր։ Պոլիսը, հետևաբար, ամբողջ չորս դար, կարոտ եղավ վանքերուն, որոնք միշտ չէ որ օգնության կուգային իրեն։ Պոլսո Աթոռը, ինչպես տեսանք, ասպարեզ ծառայեց հաճախ հասարակ բախտախնդիրներու, որոնք սեցուցին տագնապի դարը։ Ցանցառ եղավ, այդ դարուն, իրենց կոչման գիտակից հայ հոգևորականներու թիվը, և անոնցմե շատ քիչերը միայն եկան բազմիլ Պատրիարքական Աթոռի վրա։

Պոլիսը այսպես գտավ, ավա՜ղ, նաև ԺԸ դարը։ Կաթոլիկ արշավանքին դիմագրավելու ընդունակ հոգևորականներու սովը միշտ կար, իսկ Պատրիարքական Աթոռի վրա եղողները կա՛մ տկարացան, կա՛մ շփոթեցան այդ արշավանքին առջև, այսինքն բոլորն ալ ձախողեցան։ Ոմանք ձախողեցան, որովհետև շատ հանդուրժող եղեր էին, ինչպես Մելքիսեդեկ և Մխիթար, ոմանք իրենց թույլ կեցվածքին համար, ինչպես Գալուստ և Ներսես, ոմանք ալ զոհ գացած ըլլալով իրենց խստության, ինչպես եղեր էին Եփրեմ, Ավետիք և Հովհաննես Զմյուռնացի պատրիարքները։ Եվ այս ձախողությանց պատճառավ, դավանական վեճերը կշարունակեին հրահրված մնալ ու կազմալուծված պահել հայ կյանքը։

Ավելի բախտավոր չէր անդին Երուսաղեմը։ Դարավոր վանք մըն էր նաև ան, իր բազմաթիվ տասնյակ միաբաններով։ Բայց միշտ հոգ մը կշարունակեր մնալ ան հայ ժողովուրդին համար։ Մեկ կողմե ներքին վեճերը միաբանության ծոցին մեջ, մյուս կողմե պայքարները Աթոռը իրարու ձեռքե խլելու համար՝ վրդով կպահեին կյանքը Ս. Հակոբյան վանքեն ներս։ Այս դժնդակ կացությունը ավելի ևս վատթար կդառնար այն հավակնությանց պատճառավ, զորս Պոլսո պատրիարքները կսնուցանեին Երուսաղեմը իրենց ազդեցության տակ պահելու և երկու Աթոռներու հավասարապես պատրիարք դառնալու համար։ Իրերու այս վիճակը չէր կրնար տագնապ չստեղծել վանքին մեջ և ասպարեզ չբանալ նաև աշխարհական բախտախնդիրներու շահատակությանց, որոնք ժամանակ առ ժամանակ ձեռք կառնեին վանքին ղեկը պապա կամ վեմիլ անուններուն տակ։ Տագնապին բնական հետևանքն այն էր եղեր, որ Ս. Հակոբ կհեծեր պարտքերու տակ, իր սրբավայրերը աճուրդի հանվելու անմիջական վտանգին տակ։

Եվ ահա գավառի հեռավոր մեկ անկյունը կծկված համեստ վանք մը օգնության հասավ զույգ Աթոռներուն, զույգ մը փրկարար ղրկելով անոնց։ Եվ արդարև, նախախնամական դեր մը եկան կատարել, երկու Աթոռներուն մեջ հավասարապես, «ջուխտակ ամրոցները», ինչպես կանվանե Բարգեն վարդապետ

Կյուլեսերյան Ամրդոլի վանքեն այն զուլդ մը հոգևորականները, որոնք տագնապներով լեցուն պահու մը հայտնվեցան հանկարծ Հայ Եկեղեցվո ծոցին մեջ, սփոփանքի քանի մը տասնյակ տարիներ պարգևելով անոր։ Ջուխտակ այդ ամրդոլցիներն էին Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր։

Ո՞ւր էր Ամրդոլ։

«Բաղեշի Արևմտյան անկյունը, Խոցերովգետի գրեթե ափին վրա, կբարձրանա Ամրդոլվույն անվան նվիրված փոքրիկ վանքը, իր գեղեցիկ տաճարով»,— կգրե Բաբգեն վարդապետ, որոշելով Ամրդոլի տեղը, Կոլոտի նվիրված իր ուսումնասիրության մեջ[530]։

Ու գավառի համեստ մեկ անկյունը ծվարած այդ համեստ վանքը նշանավոր պիտի դառնար Հայ Եկեղեցվո պատմության մեջ։

Ամրդոլի այդ վանքը կար վաղուց, իբրև հին դասատուն մը, բայց զայն ծաղկեցուց, ԺԶ դարու վերջերը Բարսեղ վարդապետ, որ, սերած Սյունյաց դպրոցեն, սնած էր Տաթևացիի հաջորդներուն շունչին տակ։

«Յորում ժամանակի էր յաջորդ և առաջնորդ, պետ և գլուխ վարդապետաց տեղւոյն այնմիկ ոմն վարդապետ Բարսեղ անուն,— կպատմե Դավրիժեցին,— որ էր այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտաց տէր. և նոյն վանքն Ամրդօլու յառաջագոյն խրթին և յոռի շինեալ էր և այն ևս խարխլեալ էր ի հնութենէ. սա զամենայն շինուածսն միահաղոյն քակեաց, և ինքն վերստին հիմնարկեալ շինեաց և կատարեաց զրովանդակն, զեկեղեցին և զտներն և զայլն, որ ի նոսա։

... Արդ՝ այս Բարսեղ վարդապետ յինքենէ իսկ գիտակ էր թէ, գիտութիւն արտաքին իմաստից և քերականութեան ո՛չ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանել այնմ գիտութեան, ոչ միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն ազգին, որպէսզի ամենեքեան հասցեն այնմ շնորհաց և գիտութեան»[531]։

Դավրիժեցին կպատմե հետո, թե Բարսեղ ինչպես տքնեցավ գրքերու վրա՝ ծուծը քամելու համար հիներու ավանդած իմաստությանց, պաշար հավաքեց իրեն և իր շուրջինները ուն համար, և աչքերը փակելե առաջ նույն կտակն ըրավ իր հաջորդներուն, որպեսզի անոնք ևս պատվիրեն իրենց կարգին իրենց «աշակերտելոցն՝ զի այսմ օրինակի արասցեն, և այսպէս յորդւոց որդիս»։

Սերմը ցանած էր ան Ամրդոլու մեջ, երբ 1615-ին բաժնվեցավ աշխարհեն, բայց իր ցանած այդ սերմը ապարդյուն չէր անցած։ Ու կես դար հետո իրմե, Ամրդոլու մեջ պիտի հայտնվեր պատկառելի դեմք մը, Վարդան Բաղիշեցին, որուն շունչին տակ էր, որ պիտի հասուننայի Հովհաննես Կոլոտ ու Գրիգոր Շղթայակիր։

Լեո, խոսելով այն մեծ ճիգին մասին, զոր Բարսեղ վարդապետ ըրավ «արտաքին գիտությանց» ուսումնասիրության համար, և թափանցելու համար հունաց փիլիսոփաներու երկերուն, կըսե, թե «այսպիսով հաստատվում էր Բաղեշի ինքնուրույն դպրոցը իբրև անհրաժեշտ լրացում հայ վերանորոգված դաստիարակության, որ մտցնում էր նրա մեջ գիտնականության ոգին։ Այս լուսավոր գործը հրաշալի մի երևույթ է դառնում, երբ նկատի ենք առնում այն միջավայրը, ուր նա ծնվեց և զարգացավ։ Բավական է հիշել, որ հայերը, նույն այդ Բարսեղ վարդապետը և նրա դպրոցը գտնվում էին քրդական մի սանձարձակ թագավորության մեջ։ Տիրապետողները ցեղային կյանքով ապրող վայրենի վաշկատուններ էին, զուրկ գրից և գրականությունից, իսկ նրանց ձեռքի տակ ճնշված ռայաները ժամանակ և հնարավորություն էին գտնում թե՛ իրենց ստրկական պարտականությունները կատարելու և թե՛ մինչև Արիստոտել, Պլատոն, մինչև դասական հելլենության բարձունքները, ձգտելու։ Բաղեշի դպրոցը հենց այս պատճառով ներկայանում է հայ ժողովրդի կուլտուրական հանճարի մի շատ թանկագին հուշարձանը»[532]։

Ոչ ոք պիտի կարենար, Կոլոտեն ավելի, այնքան կենդանի գույներով նկարագրել Ամրդոլու այդ վանքը այնպես, ինչպես ան կներկայանա ԺԸ դարու սկիզբը, և դերը, զոր Վարդան Բաղիշեցին ունեցեր էր անոր վերածաղկման մեջ։ Կոլոտ 1719-ին գրված հիշատակարանի մը մեջ, պատմելե առաջ պարագաները, որոնց մեջ ինք և իր լծակից Գրիգոր վարդապետը, որ Երուսաղեմի Շղթայակիր մեծ պատրիարքը պիտի դառնար հետագային, պիտի ստիպվեին Ամրդոլու վանքը թողուլ 1706-ին, մահեն քիչ հետո իրենց ականավոր ուսուցիչ Վարդանի, որ վախճաներ էր տարի մը առաջ, կգրե. «Գ թուիթեամբն Աստուծոյ մեք նուաստ ծառայքս նորա՝ Գրիգոր և Յովհաննէս սպասաւորք Սուրբ Աւետարանին՝ զկնի վախճանեցման երջանկազարդի, ճգնազգեցի, առաքինասիրի և առաքելաշաւղի հօր մերոյ Տեառն Վարդանայ՝ աստուածաբանութեան բարունապետի և տիեզերալուր վարդապետի, հողմավարմամբ իբրու եղեալ տարաքեցիկ՝ ի բնիկ գեղեցկազարդ, արփիասարաս, նշանաւոր, բարձրահամբաւ, մեծէ հա-

530 Բաբգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան, «Կոլոտ Հովհաննես Պատրիարք», Վիեննա, 1904, էջ 1։

531 Առաքել Դավրիժեցի, Վաղարշապատ, 1895, էջ 390—391։

532 Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 276։

մալսարանէ մերմէ, որ է ի Չորրորդ մասի՝ Հայոց ի գաւառին Խողձ, ի տեղին Սալնոյ ձոր, կերտեալ ի բդեշխացն Արծրունեաց, որ ածանցեալ կոչի Բաղէշ։

Ի սոյն աստուածապահ քաղաքիս շինեալ ի վիմածիլ բլրոջ գագաթան՝ աստուածաբնակ ուխտ, երկնաքաշակ առագաստ, խորհրդարան խորան և շնորհաբաշխ տաճար՝ յանուն հիահրաշ Սրբոյն Յովհաննու Կարապետին, սահմանաւորեալ արեգակնածագ կողմամբն զարմանահրաշ աղբերակօք կարկաչահոսիւք և ծաղկապաճոյճ փոքր պարտիզիւ։ Իսկ յարևմուտն՝ ծիծաղածաւալ, երկարաշու, վիմաբուղխ յորդընթացիւ գետով և թիկնէթեկ հեզաքայլ առուիւ՝ ոլորտախաղացեալ առ հարաւով, գեղաւորեալ ծառատնկօք պտղաւէտիւք։ Իսկ ի հիւսիսոյ առ մուտն արևու և բարձրաբերձ տամբք քրիստոնէից՝ հպատրեալ շիրմիւք հաւատացեալ ննջեցելոց։

Զսոյն սուրբ վանքս մեծանուն, ի հիմանէ նորակերտեալ կրկին՝ սրբատաշ, կրամած, խաչակառ կաթուղիկէիւ և բախատես բնակարանիւք, աշակերտական գրովք և նոխ զարմանալի վարդապետական պէսպէս մատենիւք, եկեղեցական զգեստիւք զարդարեալ պսակեաց Տէր Վարդապետ, գերընտիր հայրս մեր վերոգրեալ։

Եւ զի թէպէտ զո՛ն յայսմ տիրախնամ քաղաքին այլ վանորայք չքնաղք և եկեղեցիք հոյակապք և գմբէթունիւք ծաղկեցեալք ի ձեռն բարեպաշտութեան միաբանից և կալգաւորաց, որք ի մերոյս վերոյիշեցեալ վարժապետէն և որք յայլոց։ ... Քանզի սա՛ է երևելի, գերազանց դասատուն և դամբարան մեծասքանչ բարունապետաց։

Որ և մեծաւ շնորհատուութեամբ սրբոյ տաճարիս այսորիկ՝ սուրբ վարդապետն Բասիլ լուսահոգին Աղբակեցի՝ եգիտ զգիտութիւն արտաքնոց զշափի, և հաւաքեաց զաշակերտս յոլովս՝ ուսուցանելով զնին կարուսեալ և զնու գտեալ զչինաղն իմաստութիւն. և նոքօք զսոյն լուսահետ գիտութիւնս ի մէջ ամենայն ազգիս մերոյ առսփռեաց, որպէս և վիպաբանէ քաջաջան պատմիչն մեր Առաքել վարդապետն։

Իսկ ի թուաբերութեանս մերում, ՌՃԾԴ (1705) ամին՝ ելից տէր և ուսուցիչ հայրս մեր քաղցրաքարող և համեղաբան զիւրոյ պանդրխտութեան ժամանակն։ ... Ուստի և հանգեաւ ի յոգնավիշտ աշխատութեանց, եթէ յայլասեռից և թէ ի մերայնոց ամբարտաւանից և գոռոզակրօն ինքնահաճից։ Որք նախանձէին ընդ բարեհռչակ, աշխարհալուր անուն նորին և ընդ քաջանշոյլ, լուսակրօն վարս նորա։ Եւ մանաւանդ ընդ աղքիւրասարաս, աստուածատուր բեմբասացութիւն, որպէս և է՝ սովորութիւն բնականապէս և յայտնի բարձրայօնից մերոց։

Եւ յետ որոյ՝ վեհազն հովիւս մերոյ առ Տէր դնալոյ, ցրուեալ ցրուեցան գառինք ողջամիտք...»[533]։

Ինչպես Բարսեղի, նույնպես և Վարդանի օրով Ամրդոլ մեկը հանդիսացավ հազվադեպ մտքի օջախներեն, որոնք դեռ կհամենային այդ դարուն, և ավելորդ է ըսել, որ ան ևս, մեր ուրիշ շատ մը վանքերուն պես, իր ծոցը կպատսպարեր հարուստ մատենադարան մը։ Ամրդոլը շենցնող զույգ դեմքերը՝ Բարսեղ և Վարդան, չէին կրնար ամբարած չըլլալ հոն մաս մը հայ ժողովուրդի հոգեկան գանձեն և զարկ տված չըլլալ նոր երկերու ստեղծման։ Նալյան կհիշե, թե Կալատ, Պոլսո մեջ իր ստեղծած մտքի օջախը օժտելու համար անհրաժեշտ գրքերով, բերել տալով իր պատրիարքության օրով Ամրդոլի հարուստ մատենադարանին կարևորագույն ձեռագիրներեն անոնք, որոնք Պոլսո մեջ չէին գտնվեր, և ընդօրինակել տալե հետո, ետ վերադարձուց զանոնք[534]։

Ավելցնենք, որ Ամրդոլի հոգեկան գանձեն կորիզ մը հասավ մինչև մեր օրերուն։ Բարգեն վարդապետ, Մուշի իր առաջնորդության շրջանին, առիթը ունեցած է աչքե անցնելու զանոնք. «Ժամանակի հետ, տգիտության և չարաշահության հառաջ բերած վնասներեն աղատված հռչակավոր մատենադարանի մը մնացորդները, զորս մեկիկ-մեկիկ աչքե և ձեռքե անցուցի, կցուցնեն ու կշեշտեն, թե ինչ ոգիով հոգնած, քրտնած և ծախսած է Բաղիշեցին Վարդան, ա՛յն «քաղցրաքարող և համեղաբան» վարդապետը, որուն շնչովը սնած ու մեծցած են Կոլոտ և Շղթայակիր»[535]։

Բաղիշեցիի մահը ճակատագրական պիտի ըլլար սակայն Ամրդոլի համար։

«Վարդանին մահովը մահացավ Ամրդոլու դասատունն ալ,— կգրե Բարգեն վարդապետ։— Չարաշունչ, նախանձաբեկ կրոնավորներ կշշնչեին արդեն և սրտի ցավ մը կդգային Վարդանի պես լուսամիտ և առատ բեմբասացի մը ներկայութենէն։ Կոլոտ և Շղթայակիր, երիտասարդ վարդապետներ, անհուն մորմոքումով թողուցին «բարեհամբաւ և մեծ համալսարանը», ուրիշ տեղ գտնելու իրենց համար ասպնջական բույն մը, երբ արդեն մտքի և սրտի ընտիր պաշարով օժտված էին և վարդապետական կոչման հաջող կերպով պատրաստված։ «Ուժգին» արցունքով թիկունք դարձուցին (1705-ին) Ամրդոլին Կոլոտ և Շղթայակիր, հոգեկից և

533 Բարգեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 142—148։

534 Նալյան, «Գանձարան հատուցմանց», Գ, էջ 272։

535 Բարգեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 3։

հոգեկցորդ վարդապետները և ուրիշ վանքերու ու մենաստաններու այցելելե ետքը՝ իրենց շունչն առին Մշու Ս. Կարապետ՝ «Սրբոյն Գլակայ լուսաշեն» վանքը»[536]։

Ամրդոլի տարագիրները կուգային ծառայելու Մշո Սուլթան Ս. Կարապետին։ Շուտ պիտի չքանար սակայն զայն նոր Ամրդոլ մը դարձնելու իրենց երազը։ Ահավոր երկրաշարժ մը, որ 1709-ին քարուքանդ ըրեր էր Հայոց աշխարհը, ավերեց նաև Ս. Կարապետը։ Անհրաժեշտ էր զայն նորոգել, և այդ հոգը ստանձնեցին երկու Ամրդոլցիները՝ Գրիգոր վարդապետը, որ այդ պահուն վանքը կվարեր իբր առաջնորդ, և Կոլոտ Հովհաննես վարդապետը, որ կգործակցեր անոր։ Նորոգությունը ահավոր պարտքերու ենթարկեց վանքը, և ստիպեց Գրիգոր վարդապետը, որպեսզի Պոլիս ղրկե Կոլոտը 1712-ին՝ հանգանակություն կատարելու համար ի նպաստ Ս. Կարապետի։

Կոլոտի ներկայությունը Պոլսո մեջ ճակատագրական դեր ունեցավ Հայ Եկեղեցվո պատմության համար։ Երիտասարդ վարդապետը, որ հազիվ 34 տարեկան էր այն ժամանակ, հմայեց Պոլիսը առաջին իսկ պահեն։ Իր խոհական կեցվածքը և իր խոսքին դյութանքը զինքը սիրելի դարձուցին մեկեն բոլոր խավերուն, և երբ Երուսաղեմի մեջ այդ պահուն տիրող տագնապը և գայթակղությունները հարթելու համար անհրաժեշտ եղավ մեկը ղրկել Ս. Հակոբ, օրվան պատրիարքը, որ Սարգիս Ապուչեխցին էր, և Պոլսո հայ երևելիները, ստիպեցին Կոլոտը, որ իսկույն Երուսաղեմ մեկնի իբր «աթոռակալ և վեքիլ»։

Կոլոտ 1713-ին Երուսաղեմ հասավ և նախախնամական դեր կատարեց հոն։ Աճուրդի դրված սրբավայրերն ազատեց և միջոցներ տնօրինեց պարտքերու հատուցման համար։ Վանքն ազատված էր այլևս բախտախնդիրներեն։ Սուլթան Մահմուդ, Երուսաղեմի փաշային տեղեկագրին վրա, «խիլայեց» երիտասարդ հայ վարդապետը։

Երբ Կոլոտ Պոլիս դարձավ 1714-ին, ուրիշ անակնկալ մը կսպասեր իրեն։ Ազգը պահանջեց, որ ան Երուսաղեմը իր ուղածին թողու, և ինքն ստանձնե Պոլսո պատրիարքությունը։ Կոլոտի մերժումը օգուտ չունեցավ։ Պոլսո հայ մահտեսիներն ու բոլոր երևելիները միշտ կպնդեին, ամեն խոստում ընելով։

Հովհաննես Կոլոտ զիջանեցավ ի վերջո, և 1715 սեպտեմբեր 9-ին, դեռ 37 տարեկաց վարդապետ, նստավ Պոլսո Պատրիարքական Աթոռը։

Նորընտիր պատրիարքին առաջին գործն եղավ հաջորդ օրն իսկ պատարագ մատուցանել տալ Պոլսո եկեղեցիներուն մեջ, իբրև Երուսաղեմի պատրիարք հիշատակել տալով Գրիգոր վարդապետը, որ Ս. Կարապետ նստած, լուր իսկ չուներ բոլոր այս եղածներեն։

Սուլթանական հրովարտակով հաստատվելե հետո երկու պատրիարքներու պաշտոնը և վավերացվելե հետո նաև Աստվածատուր կաթողիկոսեն, պաշտոնապես հաղորդվեցավ իրեն ալ։ Դժվարությամբ ընդունեց ան իր վրա դրված այս բեռը և համակերպեցավ առավելապես Կոլոտի թախանձանքներուն վրա։ 1717 օգոստոս 18-ին ան Պոլիս կմտներ խանդավառ ցույցերու մեջ։

Ուշագրավ պահեր էին ադոնք Հայ Եկեղեցվո պատմության համար։

Ամրդոլ կնստեր Պոլսո և Երուսաղեմի զույգ Աթոռներուն վրա։ Ու նոր թվական մը կբացվեր երկու Աթոռներուն համար ալ։

Վարդե Աթոռներ չէին որ ժառանգեցին երկու ամրդոլցիները։

Դավանական վեճերու պատճառավ ալեկոծված և քաոսի վերածված Պատրիարքություն մըն էր որ կստանձներ Կոլոտ։

Գրիգոր վարդապետ պարտքերու բեռան տակ հյուծող և շահատակությանց ասպարեզ դարձած պատմական վանքի մը գլուխը կուգար ու շղթա մը կանցներ վզին, ուխտելով զայն հանել այն ժամանակ միայն, երբ Ս. Հակոբ ազատած ըլլար իր պատքերեն ու հոգերեն։

Երկու պատրիարքները, ձեռք-ձեռքի տված, մեյմեկ նախախնամություն դարձան իրենց վստահված Աթոռներուն համար։

Հայ Եկեղեցվո պատմությունը պարծանքով արձանագրեց իր մեկ էջին մեջ «ջուխտակ ամրդոլցիները»։

(Շարունակելի)

536 Բարգեն ծայրագույն վարդապետ, հիշված աշխատությունը, էջ 3—4։

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակը.— Մարտի վերջերին Հայաստանի գիտական հասարակայնությունը շատ ջերմորեն նշեց հայ անվանի ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակը: Այդ առթիվ տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի և Հայաստանի ճարտարապետների միության գիտական սեսիա: Գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում կայացավ պաշտոնական հոբելյանական հանդիսավոր մեծարանքի երեկո, ներկայությամբ անվանի գիտնականների, արվեստագետների և պետական գործիչների: Հոբելյանի կապակցությամբ հրատարակվելու է Թ. Թորամանյանի նամականին:

Հուշարձանների պահպանության հայկական ընկերություն.— Փետրվարի վերջերին Երևանում տեղի ունեցավ պատմական հուշարձանների պահպանության կամավոր ընկերության համահայաստանյան հիմնադիր համագումարը, որին մասնակցեցին ականավոր պատմաբաններ, հնագետներ, գրողներ, արվեստագետներ, գիտության և մշակույթի գործիչներ:

Համագումարը քննարկեց երեք հարց. ա) Հայաստանում պատմական հուշարձանների պահպանության արդի վիճակը, բ) նոր ստեղծվող ընկերության կանոնադրությունը և գ) ընկերության ղեկավար մարմինների կազմերի ընտրությունը:

Հայաստանի սահմաններում այժմ կան մոտ 2 500 պատմական վանական հուշարձաններ, որոնք պահպանվում են պետության կողմից: Հուշարձանների պահպանության գործը ավելի լավ հիմքերի վրա դնելու համար, անհրաժեշտ է որ այդ գործին իրենց աջակցությունը բերեն ժողովրդական կանգվածները: Ահա այս նպատակով է, որ հիմնված է այդ ընկերությունը: Համագումարում բոլոր ելույթ ունեցողները միահամուռ ողջունեցին նոր ընկերության հիմնադրման գաղափարը գտնելով, որ այն մեծ դեր ունի կատարելու մեր պատմական հուշարձանների պահպանության գործում:

Համագումարը քննարկեց ու հաստատեց ընկերության կանոնադրությունը: Համաձայն կանոնադրության, հուշարձանների պահպանության կամավոր ընկերության անդամ կարող են լինել ինչպես առանձին քաղաքացիներ, այնպես էլ հասարակական, պետական և մշակութային հաստատություններ ու կազմակերպություններ: Ընկերության միջոցները գոյանալու են մուտքի վճարից, տարեկան անդամավճարներից և ընկերության հրատարակությունների իրացումից: Ընկերությունն աջակցելու է ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող հայ մշակույթի հետ կապված ճարտարապետական ու պատմական հուշարձանների պահպանության, վերանորոգման ու գիտական ուսումնասիրության գործին:

Համագումարում ընտրվեց կամավոր ընկերության խորհուրդ, բաղկացած 68 հոգուց և վերստուգիչ հանձնաժողով: Ընկերության նախագահ ընտրվեց ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը:

Հակոբ Պարոնյանի երկերը 10 հատորով.— Հայ մեծանուն գրող-երգիծաբան Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը տպագրության է պատրաստում տաղանդավոր գրողի երկերի ակադեմիական հրատարակությունը 10 հատորով: Վերջերս լույս տեսավ այս հրատարակության երկրորդ հատորը, որի նյութերը և ծանոթագրությունները պատրաստել է գրականագետ Գ. Ստեփանյանը: Հատորը խմբագրել է Ա. Ինճիկյանը: Նկարչական ձևավորումը կատարել է նկարիչ Կ. Տիրատուրյանը: Հատորում զետեղված է Հ. Պարոնյանի «Ապգային ջոջեր»-ը: Երկերի երրորդ հատորը լույս կտեսնի հոբելյանի օրերին:

Վաստակավոր գործիչը.— Երևանի Վալերի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում ջերմորեն նշվեց ինստիտուտի դասախոս, արվեստի վաստակավոր գործիչ, գրականագետ

և մանկավարժ Տիգրան Հախումյանի ծննդյան 70 և գրական-մանկավարժական գործունեության 50-ամյակը: Տիգրան Հախումյանը հեղինակ է 14 թատերական ինքնուրույն և շուրջ 90 թարգմանական պիեսների, որոնցից շատ-շատերը տարիներ շարունակ խաղացվել են Անդրկովկասի հայկական թատրոններում: Նա տասնյակ տարիներ շարունակ եղել է ռուսաց գրականության հմուտ դասախոսներից մեկը Երևանի տարբեր բարձրագույն հաստատություններում:

Գրականության և արվեստի թանգարանում.— Երևանի գրականության և արվեստի թանգարանը տարեցտարի հարստանում է նորանոր նյութերով: Արխիվային ու պատմական բազմապիսի նյութեր են ստացվում ինչպես արտասահմանից, այնպես էլ Սովետական Միության տարբեր վայրերից:

Անցյալ տարի թանգարանն ստացավ Դանիել Վարուժանի արխիվը, որը 50 տարի շարունակ խնամքով պահպանվում էր եղերաբախտ բանաստեղծի զավակների մոտ:

Վերջին տարիներին թանգարանն ստացել է սփյուռքահայ գրող մտավորականներ և հասարակական գործիչների Վ. Մալեպլյանի, Սիամանթոյի, Անայիսի, Վ. Շուշանյանի, Զ. Գալեմքյարյանի, Վ. Սվաճյանի արխիվները, մասնակի կամ ամբողջովին: Հայրենի թանգարանը հարստացնելու համար իրենց ջերմ մասնակցությունն են բերում սփյուռքահայ մտավորականները և գրական-մշակութային կազմակերպությունները:

Վերջերս թանգարանը Լենինգրադի արևելագիտական ինստիտուտից ստացավ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու, լեզվագետ Նորայր Բյուզանդացու, Գևորգ Հախվերդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Ստեփանոս Նազարյանցի և Հ. Ղևոնդ Ալիշանի ավելի քան 700 խիստ արժեքավոր նամակների միկրոֆիլմերը: Մոսկվայից ստացվել են մի շարք հայ գրողների բազմաթիվ նամակների պատճենները, որոնք պահվում են հայտնի ռուս բանաստեղծ-թարգմանիչ Վալերի Բրյուսովի արխիվում:

Շարլ Ազնավուրը Երևանում.— Մարտի առաջին կեսին Երևան այցելեց ֆրանսահայ հայտնի երգիչ, կոմպոզիտոր և բանաստեղծ Շարլ Ազնավուրը, որը Սովետական Միություն էր հրավիրվել համերգներ տալու:

Երևանում Շարլ Ազնավուրը տվեց երեք համերգ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում: Համերգներն անցան բացառիկ հաջողությամբ: Համերգներից մեկը տրվեց հեռուստացույցով:

Երևան ժամանելու հաջորդ օրը, Շարլ Ազնավուրը իր քրոջ և ֆիլհարմոնիայի ղեկավարների ընկերակցությամբ այցելեց Ս. Էջմիածին, դիտեց Մայր Տաճարն ու թանգարանը և ընդունվեց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կողմից:

Անվանի երգիչը շրջեց Երևանը, եղավ Սևանում, հանդիպում ունեցավ իր ազգականների ու բարեկամների հետ:

Զրույցի ժամանակ Շարլ Ազնավուրը մամուլի աշխատողներին հայտարարեց.

— Ես ուրախ եմ, որ գտնվում եմ Հայաստանում: Այստեղ ես շատ հարազատներ և բարեկամներ ունեմ: Երեկ ես տեսա իմ տատին, որն ապրում է Լենինականում: Ամենից շատ ես սիրում եմ ժողովրդական երգեր: Թեպետ գրում և երգում եմ ֆրանսերեն, սակայն սիրում եմ իմ ժողովրդին և չեմ կտրում իմ կապերը Հայաստանի հետ: Ես ինձ հետ կտանեմ հայկական երգեր:

Երևանի նոր արվարձանները.— Հայաստանի մայրաքաղաքը շարունակում է ընդարձակել իր սահմանները: Քաղաքի հանրածանոթ արվարձաններից է Աջափնյան, ուր այժմ բնակվում են այնքան մարդիկ, որքան բնակվում էին ամբողջ Երևանում 1922 թվականին: Այս արվարձանը բաղկացած է նորակառույց 10 թաղամասերից: Այս տարի կառուցման աշխատանքներն այստեղ պիտի ավարտվեն ամբողջովին:

Արագորեն աճող արվարձաններից է Նոր Զեյթունը: Այս տարի այս թաղամասում կառուցվելու են 40 000 քառակուսի մետր ընդհանուր բնակելի տարածությամբ բնակարաններ, որոնց մեկ քառորդ մասը հատկացվելու է քաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններին իբրև հանրակացարաններ: Կբացվեն ճաշարաններ, սրճարաններ, խանութներ և մանկապարտեզներ:

Երևանի նոր թաղամասերից մեկն էլ Շենգավիթն է, ուր այս տարի նախատեսված է կառուցել ավելի քան 20 000 քառակուսի մետր բնակելի տարածությամբ նոր բնակարաններ:

Բոլորովին նոր արվարձան է լինելու այսպես կոչված Ուչթեբելերը, Երևան—Էջմիածին խճուղու ձախ կողմը, շերամապահական կայանի ետևն ընկնող երեք ամայի բլուրները: Գարնանից այստեղ կսկսվեն շինարարական աշխատանքները: Տարվա ընթացքում նախատեսված է կառուցել շուրջ 40 000 քառակուսի մետր բնակելի տարածություն: Հետագային դա կլինի Երևանի գողտրիկ թաղամասերից մեկը:

Երևանի պետական համալսարանի նոր շենքը.— Երևանի պետական համալսարանը հիմնվել է 1921 թվականին: Երկար տարիներ այն տեղավորված էր մի քարաշեն երկհարկանի փոքրիկ շենքում, որը նախասովետական Երևանում եղած սակավաթիվ բարեկարգ շենքերից մեկն էր: Հետո այն անճանաչելիորեն վերակառուցվեց, դարձավ չորսհարկանի, ուր սովորում են հիմա ավելի քան 2 500 ուսանողներ:

Սակայն եղածն էլ խիստ անհարմար է և անբավարար: Մի քանի տարի է ինչ Զարենցի փողոցի վրա կառուցվում է համալսարանի նոր շենքը: Այն պիտի արժենա 5 000 000 ռուբլի նոր դրամով: Շենքը կունենա 10 ֆակուլտետներ, որոնցում սովորելու են 10 000 ուսանողներ, կունենա բարեկարգ լաբորատորիաներ, աշխատասենյակներ, գրադարան-ընթերցարան, գրապահոց, 1 000 տեղանոց հանդիսասրահ, 6 հատ կոնֆերենց-դահլիճներ, թանգարան և այլն:

Ամբողջ շենքի կառուցումը նախատեսվում է ավարտել 1965 թվականի վերջերին: Այս տարի շինարարության կարիքների համար հատկացված էին երեք անգամ ավելի շատ միջոցներ, քան 1963 թվականին:

Հայաստանի կուրորտային հարստությունները.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պրոֆ. Ա. Բաղդասարյանը կազմել և հրատարակել է Հայաստանի բնական կուրորտային միջոցների (ռեսուրսների) քարտեզը: Դա մի հետաքրքիր քարտեզ է, որից պարզվում է, որ Հայաստանի սահմաններում գոյություն

ունեն շուրջ 1 000 հանքային ջրերի աղբյուրներ՝ ամենատարբեր բաղադրությամբ և հատկությամբ: Քարտեզի համաձայն կարելի է որոշել ոչ միայն աղբյուրների վայրերը, այլև ծանոթանալ դրանց ջրերի ֆիզիկա-քիմիական և բուժական հատկություններին:

Քարտեզի վրա տրված են նաև Հայաստանի տարբեր գոտիների կլիմայական առանձնահատկությունները: Հեղինակը Հայաստանը բաժանում է 10 տարբեր կլիմայական գոտիների:

Քարտեզի վրա տրված են նաև տեղեկություններ Ստեփանավանի և Սևանի ավազանի շրջաններում գտնվող տորֆի հանքերի մասին, որը, ըստ հեղինակի, կարող է հաջողությամբ փոխարինել բուժիչ ցեխին:

Արփա—Սևան.— Նախապատրաստական երկար աշխատանքից հետո, անցյալ 1963 թվականի աշնանից սկսվեցին Արփա գետի ջրերը դեպի Սևանի լիճն ուղղելու համար անհրաժեշտ թունելի փորման անմիջական աշխատանքները: Արդեն փորված է մի քանի հարյուր մետր տարածություն: Փորումը կատարվում է Ջերմուկի և Մարտունու կողմերից միաժամանակ: Բացի այդ, Ջերմուկի և Մարտունու միջև ընկած տարածության գրեթե կենտրոնում, Գյուլլիդուլ գյուղի մոտ, փորված են ստորերկրյա անցքեր և թունելի հորատումը կատարվում է միաժամանակ երկու ուղղությամբ՝ դեպի Ջերմուկ և դեպի Մարտունի:

Նախքան թունելի հորատմանն անցնելը, շինարարները Մարտունու և Ջերմուկի շինարարական տեղամասերում կառուցել են բանվորական կոկիկ ավաններ՝ հարմարություններով, ինչպես նաև երթևեկության ճանապարհներ: Թունելի փորման աշխատանքները լրիվ մեքենայացված են:

Այգիներ ամայի դոներում.— Հայաստանի ամենաամայի, քարքարոտ և անհրապույր վայրն էր Լենինականից մինչև Հոկտեմբերյան ընկած տարածությունը: Տասնյակ հազարավոր հեկտար անջրդի տարածություններ դարերից ի վեր մնացել են անմշակ: Միակ հարստությունն այստեղ հրաբխային տուֆն է, որն այնքան առատորեն սփռված է ամենուր՝ սկսած Արագածի ստորոտներից մինչև Ախուրյանի ու Արաքսի ափերը, թե՛ գետնի երեսին և թե՛ գետնի տակ:

Արդեն մի քանի տարի է, ինչ սկսված է այս խամ ու խոպան հողերի յուրացումը: Անհրաժեշտ համառ աշխատանքի գնով, մեքենաների օգնությամբ հերկվում է խոպանը, հավաքվում են քարերը, պարարտացվում և մշակվում է հողը: Դա հնարավոր դարձավ նախ և առաջ Թալինի ջրանցքի շնորհիվ, որը սկիզբ է առնում Ախուրյանից: Ոռոգելի ջրի քանակը ավելացնելու համար, կառուցվում են նաև վիթխարի ջրամբարներ՝ անձրևաջրերն ու ձնհալի ջրերը կուտակելու և խոպան հողերը ոռոգելու համար: Այս միջոցառումների շնորհիվ, 1964—1970 թվականների ընթացքում շատ ավելի բուռն թափով կընթանա այստեղի խոպան հողերի յուրացման գործը:

Առ այժմ այս հողերի վրա հիմնված են մի շարք այգեպտղաբուծական սովխոզներ: Դրանցից մեկն է Կաումրաշենի սովխոզը: Այն ունի 800 հեկտար մշակված խաղողի և տարբեր ծառապտուղների այգի: Այս տարի գցվելու է ևս 100 հեկտար նոր այգի: Մի այդքան տարածություն էլ մաքրված է քարերից ու հերկված եկող տարվա տնկումների համար: Արդեն երկրորդ տարին է, ինչ սովխոզները խաղողի, պտուղների, սեխի, ձմերուկի և բանջարեղենի բերք են ստանում:

Ավտոմատ հարմարանքներ.— Երևանի երկաթուղային կայարանում շուտով դրվելու են մի քանի ավտոմատ սարքեր, որոնք սպասարկելու են ուղևորներին:

Սարքերից մեկը տոմսավաճառի դեր է կատարելու՝ վաճառելու է գնացքի տոմսեր, մի երևույթ, որը խիստ անհրաժեշտ կլինի ամռան ամիսներին, երբ ուղևորների թիվը չափազանց շատ է լինում:

Մեկ ուրիշ սարք լինելու է ավտոմատ տեղեկատու, որի միջոցով կարելի է ստանալ ուղած տեղեկանքը գնացքների մեկնման ժամանակի, ճանապարհածախսի և մեկնելիք քաղաքի մասին: Դրվելու է նաև սարք, որի միջոցով կարելի է պահ տալ ձեռքի ճամբրուկը, պայուսակը կամ այլ իր: Դրա համար պետք է միայն մեքենայի մեջ սահեցնել 15 կոպեկ: